



*Հերագորական խմբի ղեկավար՝
ԱՐՓԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
յնպեսագիտության թեկնածու, դոցենտ*

*Հերագորական խմբի անդամներ՝
ԾՈՎԻՆԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
յնպեսագիտության թեկնածու, դոցենտ
ԳԱՐԻԿ ՍԻՐՈՅԱՆ
յնպեսագիտության թեկնածու, դոցենտ
ԼԻԱՆԱ ՖԻԴԱՆՅԱՆ
յնպեսագիտության թեկնածու, դոցենտ
ՄԱՐԻԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀԳՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ապիրանտ*

**ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՐՍՏՈՒՄ**

DOI: 10.52174/978-9939-61-222-5

Ե Ր Ե Վ Ա Ն
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 338(479.25)
ԳՄԴ 65.9(5Հ)
Մ 730

*Հրապարակության է կրաչխալորել
ՀՊՏՀ գիրական խորհուրդը*

Մասնագիտական խմբագիր՝

Ս. Խաչիկյան
տ.գ.թ., դոցենտ

Գրախոսներ՝ Մ. Մովսիսյան

տ.գ.թ., դոցենտ

Ն. Կիրակոսյան

տ.գ.թ., դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝

Դ. Գալոյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Թ. Մկրտչյան

տ.գ.դ., դոցենտ

Դ. Հախվերդյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Գ. Նազարյան

տ.գ.թ., դոցենտ

Միջհամայնքային համագործակցության առանձնահատկությունները
Մ 730 ՀՀ Վայոց ձորի մարզի տնտեսական զարգացման համատեքստում
/ Ա. Հովակիմյան և ուրիշներ.- /Եր.: Տնտեսագետ, 2021, 110 էջ («Ամբերդ»
մատենաշար 39):

Սույն հետազոտությունը նվիրված է Վայոց ձորի մարզի համայնքների խո-
շորացման ու միջհամայնքային համագործակցության ձևավորման համա-
տեքստում համայնքային տնտեսական զարգացման գործընթացների ուսում-
նասիրությանը և առկա հնարավորությունների բացահայտմանը: Հետազո-
տության շրջանակում իրականացվել է Վայոց ձորի համայնքների զարգաց-
ման անհամաչափությունների վերլուծություն, ինչպես նաև խոշորացված հա-
մայնքների սուբվենցիոն հատկացումների արդյունավետության հաշվարկ:
Մշակվել է Վայոց ձորի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր՝
համայնքային և ոլորտային կլաստերների ձևավորմամբ, ձևակերպվել են միջ-
համայնքային համագործակցության զարգացման հայեցակարգային մոտե-
ցումներ:

ՀՏԴ 338(479.25)
ԳՄԴ 65.9(5Հ)

ISBN 978-9939-61-222-5

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2021 թ.
© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2021 թ.

Ներածություն.....	5
Գլուխ 1. ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ	9
1.1. Միջհամայնքային համագործակցության էությունը և հիմնական ձևերը	9
1.2. Միջհամայնքային համագործակցության միջազգային փորձը և ՀՀ-ում ներդրման հնարավորությունները	13
1.3. ՀՀ-ում համայնքների խոշորացման և միջհամայնքային համագործակցության գործընթացների վերլուծությունը	22
Գլուխ 2. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ	30
2.1. ՀՀ Վայոց ձորի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա իրավիճակի վերլուծությունը.....	30
2.2. ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների խոշորացման գործընթացը և նախնական արդյունքները.....	40
2.3. Միջհամայնքային համագործակցության գերակա խնդիրները և նախընտրելի լուծումները.....	51
Գլուխ 3. ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ	63
3.1. Համայնքային կլաստերների ձևավորումը և տարածքային զարգացման ներուժի գնահատումը.....	63
3.1.1. Վայոց ձորի մարզի կլաստերային և գործոնային վերլուծության արդյունքները	63
3.1.2. Վայոց ձորի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր՝ համայնքային և ոլորտային կլաստերների ձևավորմամբ	70
3.2. Միջհամայնքային համագործակցության հնարավորությունները և սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատումը	77
Եզրակացություն.....	83
Օգտագործված գրականություն	91
Հավելված	93
Համառոտագրեր	197

Համայնքների խոշորացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում առաջադրեց միջհամայնքային համագործակցության (ՄՀՀ) նոր ձևաչափի ներդրման անհրաժեշտություն: Համայնքների փոխգործակցությունը մեր հանրապետությունում երբեք էլ բավարար չի եղել: Թեև համայնքների ղեկավարների և ավագանու լիազորություններում արտահայտված են տարբեր սուբյեկտների համագործակցության հնարավորություններ, այդ թվում՝ համայնքների հետ, սակայն այդ հարաբերությունների կառուցումը ինստիտուցիոնալ բնույթ չի կրել: Դա հանգեցրել է համայնքային տնտեսական ներուժի ոչ լիարժեք օգտագործման, որը դրսևորվել է ոչ միայն համայնքային, այլև մարզային մակարդակում:

Գիտական ու հետազոտական տարբեր շրջանակներում բազմիցս քննարկվել են ՀՀ մարզերի տնտեսական զարգացման հեռանկարները: Սակայն գործնական հետազոտություններն այդ ուղղությամբ սակավաթիվ են և հիմնականում առնչվում են մարզային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի տարբեր ուղղություններին: Բացակայում են հատկապես հետազոտություններն այդ ոլորտում համայնքների խոշորացումից հետո, որի պարագայում մեծ է հնարավորությունը՝ որևէ մարզի տնտեսական զարգացման ծրագիրը մշակելու համայնքային տնտեսական ներուժի գնահատման և համագործակցության հաստատման միջոցով:

Հետազոտական թեմայի նպատակն է ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքային տնտեսական զարգացման գործընթացները հետազոտել համայնքների խոշորացման ու միջհամայնքային համագործակցության ձևավորման համատեքստում և բացահայտել ամկա հնարավորությունները: Այս նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Վայոց ձորի մարզի համայնքների խոշորացման առանձնահատկություններն ուսումնասիրել ամկա իրավական դաշտի, կառավարման համակարգի, ենթակառուցվածքների և ինքնակառավարման սկզբունքների համատեքստում,
- մարզի համայնքների միջև տնտեսական համագործակցության հաստատման բնորոշ գծերը բացահայտել համալիր հետազոտությունների միջոցով՝ ռեսուրսային ներուժի գնահատմամբ և հայեցակարգային նոր մոտեցումների առաջադրմամբ,
- Վայոց ձորի մարզի սոցիալ-տնտեսական ցուցանիշները հետազոտել ՀՀ Կառավարության քաղաքականության և ռազմավարական զարգացման ծրագրերի իրականացման տեսանկյունից՝ մարզի տնտեսական զարգացման շրջանակում,

- վերլուծել միջհամայնքային համագործակցության և համայնքների տնտեսական զարգացման միջազգային փորձը, դրանց լավագույն արդյունքները՝ Վայոց ձորի մարզի համայնքներում կիրառելու համար,
- վերլուծել տարածքային զարգացման կլաստերային մոտեցումների միջազգային փորձը և բացահայտել Վայոց ձորի մարզի համայնքների և տնտեսության ոլորտների զարգացման գործում դրանց ներդրման հնարավորությունները,
- բացահայտել Վայոց ձորի մարզի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման փոխհարաբերությունների համակարգը՝ տնտեսական զարգացման և սոցիալ-տնտեսական քաղաքականության բարելավման համատեքստում:

Սույն թեմայի հետազոտության կարևոր ցուցիչ է հանդիսացել համայնքների խոշորացման գործընթացի ուսումնասիրությունն առկա իրավական դաշտի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման լիազորությունների համադրման պայմաններում: Մասնավորապես, ուսումնասիրվել են 2018 թ. «Միջհամայնքային միավորումների մասին» և 2019 թ. «Տարածքային կառավարման մասին» ուժի մեջ մտած ՀՀ օրենքները և դրանց համապատասխան դրույթները՝ մարզի տնտեսական զարգացում ապահովելու տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքներն ընդունվել են Վայոց ձորի մարզում համայնքների խոշորացումից հետո, հետազոտության ընթացքում անդրադարձ է կատարվել մարզի տնտեսական զարգացման հնարավորություններին՝ օրենքներով պայմանավորված գործողությունների տեսանկյունից:

Հետազոտության շրջանակում, Վայոց ձորի մարզի տնտեսական զարգացման համատեքստում, գնահատվել է համայնքների ներուժը, որոնց վերաբերյալ համայնքների խոշորացումից հետո խորքային հետազոտություն չէր կատարվել: Այս հանգամանքը նույնպես ընդգծում է հետազոտության կարևորությունը, քանի որ ակնհայտ է, որ համայնքների խոշորացման պարագայում ռեսուրսային ներուժի գնահատումն էական փոփոխությունների է ենթարկվել: Մարզի վարչական քարտեզի փոփոխությունն ակնհայտորեն հանգեցրել է համայնքների միջև փոխհարաբերությունների համակարգի վերանայման: Բնակավայրերի միջև գործող տեղեկատվական և հաղորդակցության միջոցները, համայնքային ենթակայության ենթակառուցվածքները, աշխատուժի տեղաբաշխվածությունը և այլ գործոններ ենթարկվել են կառավարման ձևաչափի էական փոփոխության, հետևաբար հրատապ անհրաժեշտություն է առաջացել վերագնահատելու տնտեսական ներուժը: Վայոց ձորի մարզի տնտեսական զարգացման նպատակով ուսումնասիրվել են նաև մարզի սոցիալ-տնտեսական ցուցանիշները՝ ՀՀ Կառավարության քաղաքականության համատեքստում:

Ինչպես հայտնի է, տարածաշրջանային զարգացումն էապես պայմանավորված է տարածաշրջանի սեփական ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ: Վայոց ձորի մարզի զարգացման ծրագրերի մշակման տեսանկյունից ուսումնասիրվել և դիտարկվել են համայնքային ու տնտեսական զարգացման ծրագրերի կլաստերային մոտեցման կիրառման հնարավորությունները: Կլաստերային քաղաքականությունը կարող է դառնալ Վայոց ձորի մարզի զարգացման ռազմավարության հիմք, իսկ կլաստերների ձևավորումը կարող է հնարավորություն ընձեռել ոչ միայն լուծելու ոլորտային խնդիրները, այլև նպաստելու տարածաշրջանում աճի կետերի հավասարաչափ բաշխմանը, բազմազանեցմանը և համայնքների զարգացման հավասարակշռության ապահովմանը:

Միջհամայնքային համագործակցության և տարածքային տնտեսական զարգացման համատեքստում առկա է միջազգային հարուստ փորձի ուսումնասիրությունը ևս սույն հետազոտության առանցքային ուղղություններից մեկն է:

Հետազոտության համար տեղեկատվական և մեթոդական հիմք են հանդիսացել.

- **փաստաթղթերի ուսումնասիրությունները**, որոնք մասնավորապես ներառել են.
 - քաղաքականության հայեցակարգերի, ռազմավարությունների վերլուծություն,
 - համապատասխան հետազոտական, վերլուծական նյութերի և գրականության ուսումնասիրություն,
 - միջազգային փորձի՝ համադրելի երկրների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն,
 - միջանկյալ արդյունքների համադրում,
 - հաշվետվության կառուցվածքի և բովանդակության նախագծում, հաշվետվության պատրաստում:
- **Հարցումների իրականացումը և տվյալների վերլուծությունը**
Google forms աղանց գործիքի օգնությամբ: Ելնելով հետազոտության հիմնական նպատակից ու առաջադրված խնդիրներից՝ մշակվել և ներդրվել է աղանց եղանակով հարցում՝ նվիրված Վայոց ձորի համայնքներում առկա հիմնախնդիրների և միջհամայնքային համագործակցության հնարավորությունների ուսումնասիրմանը: Հարցումն իրականացվել է **Google forms** աղանց գործիքի օգնությամբ: Մշակված հարցաթերթն իր բնույթով փորձագիտական հարցման (*expert interview*) համար նախատեսված բաց հարցերի ու փակ հարցերի համակցությամբ հարցաթերթ է (*semi-structured*) (հավելված 1):

- **Ժամանակային շարքերի վերլուծությունը և կանխատեսումը:** Այն ներառում է սոցիալ-տնտեսական երևույթների զարգացման շարժընթացի և միտումների կանխատեսման տարրեր մեթոդներ:
- **Գործոնների ազդեցության վերլուծության համաթվային մեթոդը:** Հետազոտության շրջանակում իրականացվել է Վայոց ձորի համայնքների սուբվենցիոն հատկացումների արդյունավետության հաշվարկը համաթվային մեթոդով:
- **Գործոնային և կլաստերային վերլուծության մեթոդը:** Հետազոտության շրջանակում, Վայոց ձորի մարզի համայնքների սոցիալ-տնտեսական ներուժի բացահայտման և համայնքային ու տնտեսական զարգացման ծրագրերի կլաստերային մոտեցման կիրառման հնարավորությունների համատեքստում, կիրառվել են գործոնային վերլուծության և կլաստերային մեթոդները՝ օգտագործելով SPSS ծրագրային փաթեթի հնարավորությունները:

**ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ****1.1 Միջհամայնքային համագործակցության
էությունը և հիմնական ձևերը**

Հայաստանի Հանրապետությունում, անկախացումից հետո, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգերում բարեփոխումների կարևորագույն հիմնախնդիրներից մեկը երկրում գործող վարչատարածքային կառուցվածքի մասնատվածության բարձր աստիճանն էր: Մեծ թվով համայնքներում առկա էին հատկապես համայնքներին պատկանող տարածքների չափերի, բնակչության թվաքանակի, ֆինանսական հնարավորությունների տարբերություններ: Համեմատաբար փոքր համայնքները չէին կարողանում անհրաժեշտ ծառայություններ մատուցել բնակչությանը՝ համապատասխան համայնքային կառույցներ և ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով: Հակառակ դրան, համեմատաբար մեծ համայնքները պատրաստ էին ստանալ և իրականացնել մի շարք լիազորություններ, որոնք գտնվում էին կենտրոնական կառավարության լիազորությունների շրջանակում: Ուստի, այս առումով կարևորվում էր հանրային ծառայությունների մի մասի մատուցման լիազորությունների փոխանցումը տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններին: Լիազորությունների փոխանցման այս գործընթացն իրականացվել է ապակենտրոնացման միջոցով, որի լավագույն ձևը հանրային կառավարման գործառնությունների հստակ բաշխումն է կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) միջև՝ կիրառելով փոխլրացման սկզբունքը:

Տնտեսագիտական գրականության մեջ բազմաթիվ աշխատություններ են նվիրված ապակենտրոնացման հիմնահարցերի քննարկմանը: Ապակենտրոնացման վերաբերյալ ամենատարածված հիմնավորումը հանրային ծառայությունների մատուցման բարելավման անհրաժեշտությունն է, այսպես կոչված կենտրոնական կառավարությունների «իշխանագրկումը»՝ արդյունավետ տեղական ծառայություններ մատուցելու համար:

Համաձայն տարբեր մեկնաբանությունների՝ ապակենտրոնացումը իշխանություններին ավելի է մոտեցնում քաղաքացիներին, բարելավում է հանրային ծառայությունների որակը: Այն նաև դիտարկվում է որպես տարածքային անհավասարության խնդիրների լուծման հնարավորություն¹:

¹ Տե՛ս **Tiebout M.**, A Pure Theory of Local Expenditures, Journal of Political Economy 64(5), 1956, էջ 416–424, <https://doi.org/10.1086/257839>:

Տնտեսագիտական գրականության մեջ տարածված են ապակենտրոնացման երկու հիմնական մոտեցումներ: Առաջինն այն է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն առավել մոտ են կանգնած մատուցվող ծառայությունների շահառուներին, հետևաբար առավելություն ունեն ավելի լավ հասկանալու վերջիններիս իրական կարիքները և ծառայությունները մատուցելիս հասնելու ավելի բարձր արդյունավետության:

Վերոնշյալ տեսական դրույթները համապատասխանում են այն տեսակետին, որ ռեսուրսների տեղաբաշխման «պարետո-արդյունավետության» հասնելու համար կառավարությունները պարտադիր պետք է իրականացնեն պարտականությունների ապակենտրոնացում: Սա հիմնված է այն ենթադրության վրա, որ տեղական իշխանությունները տեղական բարիքների ստեղծման համար կունենան տեղական հանրային նախապիროությունները լավագույնս գնահատելու հնարավորություն:

Տնտեսագետների մեկ այլ խումբ էլ պնդում է, որ ապակենտրոնացումը որևէ կապ չունի վերաբաշխման հետ, քանի որ այն կարող է լինել միայն կենտրոնական մակարդակում²: Շատ գիտնականներ համամիտ են, որ վերաբաշխման գործառնությունը պետք է հանձնվի կենտրոնական կառավարությանը: Ավանդական այն տեսակետը, որ տեղական իշխանությունները չեն կարող իրականացնել վերաբաշխման գործառնություններ, ելնում է այն հիմնադրույթից, որ արտադրության գործոնները՝ կապիտալը և աշխատանքը, շարժուն են³: Ըստ երկրորդ դիտարկման, մատուցվող ծառայությունները նպաստում են բնակչության կարիքներին մոտեցնելուն և արդյունավետության բարձրացմանը, բնակչության շարժունությանը և տեղական ինքնակառավարման մարմինների միջև մրցակցությանը: Այս մեկնակետով նրանք զարգացրել են այդ դրույթը և բացահայտել ֆիսկալ ապակենտրոնացման մակարդակի և տնտեսական աճի միջև կապը⁴:

Որոշ տնտեսագետների կարծիքով՝ տեղական իշխանությունները հակված են ամեն ինչ անել իրենց քաղաքացիների կարիքների բավարարման համար (Breton, 1996, Salmon, 1987), սակայն այլ վերլուծաբաններ կասկածի տակ են դնում այդ գաղափարը (Kenyon, 1991, Muller, 1997)⁵:

Ըստ որոշ հեղինակների⁶՝ ապակենտրոնացումը կարող է հանգեցնել կայունացման: Մակրոտնտեսական կայունության առումով, հետազոտու-

² Տե՛ս **Brennan G., Buchanan J. M.**, The Power to Tax: Analytical Foundations of a Fiscal Constitution. London: Cambridge University Press, 1980:

³ Տե՛ս **Ebel R.D., Yilmaz S.**, On the Measurement and Impact of Fiscal Decentralisation. In Public Finance in Developing and Transitional Countries, ed Martinez-Vazquez and Alm. Cheltenham: Edward Elgar Publishing Limited, 2003.

⁴ Տե՛ս **Martinez-Vasquez J., McNab R.**, Fiscal decentralisation, macrostability, and growth, Andrew Young School of Policy Studies, Working Paper 05-06, 2003.

⁵ <https://books.google.am/books?isbn=0521771331>

⁶ Տե՛ս **Tanzi**, Fiscal Federalism and Decentralisation: A Review of Some Efficiency and Macroeconomic Aspects, 1996:

թյունները ցույց են տալիս, որ ֆիսկալ ապակենտրոնացման քաղաքականությունը չի կարող վտանգել մակրոտնտեսական կայունությունը: Հաճախ ենթադրվում է, որ կենտրոնական կառավարությունն առավել շաղկապված է ծախսերի լարված ազդեցությունների, գնաճային ճնշումների և պարբերաշրջանային ցնցումների հետ⁷, սակայն մակրոտնտեսական կայունությունը պահանջում է դրամավարկային քաղաքականություն, որը կարող է լավագույնս իրականացվել կենտրոնական կառավարության կողմից:

Որոշ վերլուծաբաններ պնդում են, որ մակրոտնտեսական կայունությունը կարող է վտանգվել, եթե հարկարյուցետային քաղաքականության պատասխանատվությունը հանձնվի տեղական իշխանություններին⁸: Հ. Դավուդին և Հ. Ժոուն նշում են⁹, որ մակրոտնտեսական քաղաքականությունը պետք է զուգակցվի ֆիսկալ ապակենտրոնացման և տնտեսական զարգացման գործընթացներին:

Ապակենտրոնացումը դրսևորվում է որպես պետական կառավարման բարեփոխման գործընթաց, որի միջոցով կառավարման որոշ գործառնություններ վերաբաշխվում են տեղական ինքնակառավարման մարմինների միջև: Փաստորեն, ապակենտրոնացումն իրականացվում է որպես երեք հիմնական նպատակների հասնելու ռազմավարություն՝ կառավարման գործառնություններ, ռեսուրսների բաշխում, վերաբաշխում և մակրոտնտեսական կայունություն¹⁰:

Հաճախ համայնքներում ինտեգրման և փոխադարձ գործակցության անհրաժեշտություն ծագում է հատկապես այն դեպքերում, երբ համայնքապետարանը կա՛մ իր զարգացման համար ունի ռեսուրսների պակաս, կա՛մ ձգտում է ամրապնդել և ընդլայնել առկա մրցակցային առավելությունները, ինչպես նաև բարելավել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների տեսականին և որակական հատկանիշները, կիրառել «մասշտաբից տնտեսման էֆեկտ» (որոշ դեպքերում ծառայությունների կամ սպառողների փոքր քանակությունը հանգեցնում է դրանց տրամադրման մերժմանը՝ որպես տնտեսապես ոչ շահավետ), հաղթահարել համայնքապետարաններում բարդ կադրային իրավիճակը¹¹: Այս համատեքստում, կարևորվում է համայնքների միջև միջհամայնքային միավորումների ձևավորումը և կայացումը:

Միջհամայնքային միավորումը տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով

⁷ Տե՛ս **Wallace O. E.**, Fiscal Federalism. New York: Harcourt Brace Jovanovich, Inc, 1972.

⁸ Տե՛ս **Wallace O. E.**, Searching for Leviathan: An Empirical Study, American Economic Review 75(4), էջ 748-757, 1985:

⁹ Տե՛ս **Davoodi H., H. F. Zou.**, Fiscal decentralisation and economic growth: A cross-country study, Journal of Urban Economics 43(2), էջ 244-257, 1998:

¹⁰ Տե՛ս **Musgrave R.**, The theory of public finance. New York: McGraw-Hill (Musgrave 1959):

¹¹ Տե՛ս **Булгакова К.Р.**, К вопросу о субъектах, предоставляющих муниципальные услуги во Французской Республике и Российской Федерации. Административное и муниципальное право. 2016. N 7, էջ 562–570:

ստեղծված համայնքների միավորում է, որն իրականացնում է օրենքով կամ համայնքների ավագանիների որոշումներով իրեն վերապահված լիազորություններ: Տարբեր համայնքային խնդիրների լուծման նպատակով համայնքը կարող է ընդգրկվել մեկից ավելի միավորումների կազմում¹²:

Վ. Լ. Տամբովցևը առանձնացնում է միջհամայնքային փոխգործակցության չորս տեսակ՝ (1) մրցակցություն, (2) կոոպերացում (համագործակցություն), (3) մրցակցության և համագործակցության համատեղում, ինչպես նաև փոխգործակցության այնպիսի «սահմանային» ձև, ինչպիսին է (4) համայնքապետարանների միաձուլումը (միավորումը)¹³:

Միջհամայնքային համագործակցության բնորոշ ձևերից են¹⁴.

- *համալրել ծառայությունների մատուցում*: Դա միջհամայնքային համագործակցության ամենատարածված ձևերից մեկն է, որը ներառում է մի շարք ծառայություններ, օրինակ՝ թափոնների կառավարումը՝ ներառյալ աղբահանությունը, ջրամատակարարումը, հանրային տրանսպորտը և այլն:
- *Համալրել վարչարարություն*: Այն նույնպես ամենատարածվածներից է և կարող է ներառել հարկային վարչարարությունը՝ տեղական հարկերի մասով, շինարարության թույլատրությունը, տրամադրումը, տրանսպորտի կառավարումը և այլն:
- *Ծառայությունների վաճառք*: Վերաբերում է մեծ համայնքի կողմից իրեն շրջապատող համայնքներին ինչպես վարչական բնույթի, այնպես էլ հանրային ծառայությունների թույլատրություններին:
- *Ռազմավարական պլանավորում և փարածքային զարգացում*: Հիմնականում կիրառվում է այն դեպքերում, երբ համայնքն այնքան փոքր է տարածքով և բնակչությամբ, որ ի գործու չէ արդյունավետորեն իրականացնել իր տնտեսական զարգացման քաղաքականությունն ու ծրագրերը:
- *Համալրել ֆինանսավորում*: Վերաբերում է մեծ ենթակառուցվածքային նախաձեռնություններին, լինի ճանապարհաշինարարություն, թե մեկ այլ ենթակառուցվածքային ոլորտ, երբ համայնքները համատեղ ֆինանսավորումը հնարավորություն են ունենում այն կառուցելու:

Տարածքային մակարդակով միջհամայնքային համագործակցությունը խթանում է տեղում սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների համա-

¹² Տե՛ս «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2018 թ. մարտի 7-ին, հոդված 3:

¹³ Տե՛ս Тамбовцев В.Л., Взаимодействие муниципалитетов как объект экономического анализа, TERRA ECONOMICUS, 2017, Том 15, N 3, էջ 19–31:

¹⁴ Տե՛ս Վ. Մովսիսյան, Ս. Թովմասյան, Է. Ղազարյան, Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացում. համայնքների խոշորացում և միջհամայնքային համագործակցություն, ՀՀ Սյունիքի մարզի օրինակով, Եր., 2011, էջ 28:

տեղ լուծումը և բարձրացնում է տեղական ռեսուրսների, մասնավորապես՝ հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը¹⁵:

Որպես կանոն, միավորումները մասնակցում են տեղական ինքնակառավարման մարմինների նախագծերի մշակմանը և քննարկմանը, հավաքում և վերլուծում են տեղական իշխանությունների գործունեության վերաբերյալ տեղեկությունը, ամփոփում և տրամադրում են տեղական ինքնակառավարման կազմակերպման և գործունեության լավագույն փորձը, իրականացնում են կրթական գործունեություն՝ ուղղված տեղական կառավարման մարմինների հմտությունների կատարելագործմանը, ինչպես նաև նպաստում են տեղական մակարդակում խնդիրների լուծման գործընթացում քաղաքացիների ներգրավմանը:

1.2

Միջհամայնքային համագործակցության միջազգային փորձը և ՀՀ-ում ներդրման հնարավորությունները

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման համակարգը կառուցված է հիմնականում վարչատարածքային բաժանման սկզբունքով, որտեղ առաջնային միավորը սովորաբար քաղաքային և գյուղական համայնքներն են¹⁶: Համայնքները կարող են զգալիորեն տարբեր լինել՝ պայմանավորված տարածքների ընդգրկվածությամբ և բնակչության թվաքանակով, ինչից ելնելով էլ մշակում են իրենց ռազմավարությունները: Համայնքների զարգացման ռազմավարական պլանավորման շրջանակում տեղական իշխանություններն «իրենց ապագայի պատկերն են կազմում և որոշում են դրա իրականացման փուլերը՝ ելնելով առկա ռեսուրսներից»¹⁷:

Այս առումով, հատկապես ուսանելի է եվրոպական երկրների փորձը, որի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ԵՄ համաչափության քաղաքականությունն օգնել է կրճատել ԵՄ անդամ երկրների սոցիալական բևեռացումը և աղքատությունը, ինչպես նաև բարձրացնել հասարակական և պետական կառավարման արդյունավետությունը: Տարածքային ար-

¹⁵ St' u Kozlova O. A., Makarova M. N., Inter-municipal cooperation as an institution of strategic development of territories. Economic and Social Changes: Facts, Trends, Forecast, 2018, Vol. 11, N 3, էջ 132–144, DOI: 10.15838/esc.2018.3.57.9, էջ 135:

¹⁶ St' u Кобача М. В., Ассоциации местных самоуправлений (издание 2-е, исправленное и дополненное). Просветительское общественное объединение «Фонд им. Льва Сапегина», Минск, 2018, էջ 10:

¹⁷ Kozlova O. A., Makarova M. N., Inter-municipal cooperation as an institution of strategic development of territories. Economic and Social Changes: Facts, Trends, Forecast, 2018, Vol. 11, N 3, pp. 132–144, DOI: 10.15838/esc.2018.3.57.9, p. 133.

դյունավետ կառավարումը, մասնավորապես՝ տարածաշրջանացումն (ոեզիոնալացումն) ու ապակենտրոնացումը, ԵՄ երկրների տարածքային քաղաքականության հիմնական նպատակներն են: Տարածական կառուցվածքի զարգացումը, ինչպես օրինակ, բազմակենտրոն տարածքային միավորը կամ միջհամայնքային համագործակցությունը, տարածքային խնդիրների լուծման կարևորագույն միջոց են այն երկրներում, որտեղ առկա են բնակչության նոսրացում և ծառայությունների անհամաչափություն:

Եվրոպական երկրներում միջհամայնքային համագործակցության ինստիտուտն ակտիվորեն զարգանում է երկու հիմնական ուղղություններով: Մի կողմից՝ զարգանում են հորիզոնական կապերը (եվրոպական երկրների մեծ մասը), մյուս կողմից՝ կառուցվում է տարածքային կառավարման տարրեր մակարդակների (օրինակ՝ Իսպանիա, Ավստրալիա) միջև ուղղահայաց համագործակցություն¹⁸:

Եվրամիության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև հարաբերությունների վրա առավելագույն ազդեցություն ունեցող կազմակերպություններից մեկը Եվրոպական համայնքների և շրջանների խորհուրդն է՝ **Council of European Municipalities and Regions**, որը հիմնադրվել է 1951 թվականին՝ տեղական իշխանությունների մի խումբ ղեկավարների կողմից, որոնք կարծում էին, որ միասնական Եվրոպան կարող է հաջողությամբ կառուցվել միայն այս գործընթացում տեղական համայնքների միջոցով քաղաքացիների ներգրավմամբ: Ներկայումս այս կազմակերպության անդամներ են եվրոպական 42 երկրների տեղական և տարածքային իշխանությունների ազգային միավորումները¹⁹: 1951 թվականից ի վեր կազմակերպությունն աջակցում է միասնական, խաղաղ և ժողովրդավարական Եվրոպայի կառուցմանը՝ հիմնվելով տեղական ինքնակառավարման և քաղաքացիների ակտիվ մասնակցության վրա: Կազմակերպության գործունեությունն ուղղված է երկու հիմնական ոլորտի.

- եվրոպական քաղաքականության և օրենսդրության վրա ազդեցություն,
- տեղական և տարածքային կառավարությունների միջև քննարկումներ անցկացնելու համար համաժողովների կազմակերպում ազգային ասոցիացիաների միջոցով:

Եվրոպական շատ երկրներ աչքի են ընկնում տարածքային համաչափ զարգացման և միջհամայնքային միավորումների ստեղծման օրինակելի փորձով: Եվրոպական երկրներից, օրինակ, *Ֆինլանդիան* պետական կառավարման տարրեր մակարդակներում այսօր կիրառում է նորարարություններ

¹⁸ St'u Курочкин А. В., Сетевые формы регионального местного управления: опыт современной Финляндии, 2011, էջ 105–112, http://ars-administrandi.com/article/Kurochkin_2011_1.pdf:

¹⁹ St'u Кобаса М. В., Ассоциации местных самоуправлений (издание 2-е, исправленное и дополненное), Просветительское общественное объединение «Фонд им. Льва Сапегина», Минск, 2018, էջ 11:

րի ներդրման և զարգացման բազմաթիվ հաջողված օրինակներ²⁰: Մասնավորապես, Ֆինլանդիայի տարածքային կառավարման համակարգն էական փոփոխությունների է ենթարկվել՝ սկսած 2010 թվականից: Մինչ այդ՝ 170 տարի, Ֆինլանդիայի տարածքը բաժանված էր 8 նահանգների (լանշաների), որոնք առաջին կարգի տարածաշրջանային վարչական միավորներ էին: 1997 թ. բարեփոխումների ընթացքում դրանք վերաձվեցին 6 նոր, ավելի մեծ նահանգների՝ Հարավային Ֆինլանդիա, Արևմտյան Ֆինլանդիա, Արևելյան Ֆինլանդիա, Օուլու, Լապլանդիա, ինչպես նաև Ալլանդյան կղզիների ինքնավար նահանգ: 13 տարի անց նահանգներն ամբողջովին վերացվեցին և ստեղծվեցին մարզային կառավարման գործակալություններ: Այսպիսով, հիմնական տարածքային ստորաբաժանումները 20 մարզերն էին (ֆին. *Maakunta*), որոնք, իրենց հերթին, բաժանվեցին 72 շրջանների (ֆին. *Seutukunta*):

Շատ հաճախ այդ շրջանների միջև համագործակցությունն իրականացվում է երկու եղանակներից որևէ մեկով՝ *գյուղական ասոցիացիաների կամ րեղական գործընկերության միջոցով*: *Գյուղական ասոցիացիաները* ստեղծվում են տարածքների զարգացման վերաբերյալ որոշումներ քննարկելու և մշակելու համար: Որպես կանոն, դրանք ստեղծվում են քաղաքացիների կողմից ինքնուրույն և գործում են համայնքային իշխանություններից անկախ: Այնուամենայնիվ, երբեմն այդ ասոցիացիաները ներառված են համայնքապետարանների կողմից որոշումների ընդունման գործընթացում և ձևակա-նորեն ինստիտուցիոնալացված են: Ֆինլանդիայում գոյություն ունեն շուրջ 3900 նման գյուղական միավորումներ, որոնցից միայն 2700-ն է պաշտոնապես գրանցված: Գործընկերություններն առավել հաճախ ստեղծվում են համայնքային իշխանությունների և տեղի բնակիչների փոխգործակցությունն ապահովելու համար:

Եվրոպական երկրներից *Ֆրանսիան* նույնպես միջհամայնքային համագործակցության ոլորտում առաջատարներից է: Ոլորտը կարգավորելու համար XX դարի 90-ական թվականներին ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնցից առավել նշանակալիցը 1999 թ. ընդունված «Միջհամայնքային համագործակցության մասին» օրենքն էր, որտեղ ամրագրվեցին համագործակցության հետևյալ տեսակները²¹.

- համայնքների միավորում՝ նախատեսված, որպես կանոն, փոքր գյուղական համայնքների համար,
- համայնքների ագլոմերացիա, որը ներառում է հիմնական համայնքը՝ 15 հազարից ոչ պակաս բնակչությամբ, ինչպես նաև արվարձանները,

²⁰ St'u Курочкин А. В., Сетевые формы регионального местного управления: опыт современной Финляндии, 2011, էջ 105–112, http://ars-administrandi.com/article/Kurochkin_2011_1.pdf:

²¹ St'u Булгакова К. Р., К вопросу о субъектах, предоставляющих муниципальные услуги во Французской Республике и Российской Федерации. Административное и муниципальное право. 2016, N 7, էջ 562–570:

- քաղաքային միավորումներ, որոնք ներառում են խոշոր քաղաքն իր քաղաքամերձ համայնքներով (այսպիսի միավորման կազմում մարդկանց նվազագույն թվաքանակը 500 հազար է):

Ներկայումս Ֆրանսիայում գործում են 2400 համայնքային միավորումներ, 174 համայնային ագլոմերացիաներ և 16 քաղաքային միավորումներ: Այս բարեփոխումները ֆրանսիական գրականության մեջ հայտնի են «միջ-համայնքային հեղափոխություն» անունով, որի հետևանքով Ֆրանսիայում տեղական ինքնակառավարումը վերածվել է առավել բարդ ու տարբերակված համակարգի, որի շրջանակում մի քանի հազար միջհամայնքային կառավարման մարմիններն աստիճանաբար ավելի մեծ դերակատարում են ունենում:

Աշխարհի մյուս զարգացած երկրները ևս տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս կարևորում են ինտեգրման և փոխգործակցության ապահովումը: Այսպես, օրինակ, **ԱՄՆ-ի** առանձին նահանգներում կան տեղական իշխանությունների տարբեր կազմակերպություններ, որոնք սերտ կապեր են պահպանում պետական մարմինների հետ և լորբինգ են իրականացնում իրենց հետաքրքրությունների շրջանակներում: Նույն գործընթացը նաև դաշնային մակարդակում է, թեև նմանօրինակ քաղաքային լորբիստական կազմակերպություններն ավելի քիչ են, քան նահանգներում: Առավել նշանակալիցը Քաղաքների ազգային լիգան է, որի հիմնական խնդիրը քաղաքների շահերի համար լորբինգ իրականացնելն է ԱՄՆ Կոնգրեսում և Դաշնային Կառավարությունում: Քաղաքների ազգային լիգան համախմբում է բոլոր մայրաքաղաքները, խոշորագույն քաղաքներն ու ագլոմերացիաները, որոնք համաձայն են վճարել անդամավճար: Յուրաքանչյուր նահանգ ունի իր լիգան, ուստի նահանգային քաղաքները կարող են ընդգրկվել դրանում և Ազգային լիգայում: ԱՄՆ-ում ամեն տարի անցկացվում է նահանգների քաղաքների կոնգրեսը, որին սովորաբար մասնակցում են 7-10 հազար քաղաքների ներկայացուցիչներ:

Ադյուսակ 1.1-ում ներկայացված է միջհամայնքային համագործակցության միջազգային փորձը՝ մի շարք զարգացած երկրների օրինակով:

Միջազգային փորձի վերլուծությունից պարզ է դառնում, որ գոյություն ունեն միջհամայնքային համագործակցության բազմաթիվ ձևեր, որոնք իրենց բովանդակությամբ և գործունեության շրջանակներով բազմազան են: Ընդ որում, այս կամ այն ձևի ընտրությունը պայմանավորված է համայնքների առջև ծառացած խնդիրներով և համագործակցության հնարավորություններով:

Միջհամայնքային համագործակցության հիմնական ձևերը զարգացած երկրներում ²²				Աղյուսակ 1.1
Միջհամայնքային համագործակցու- թյան ձևերը	Բովանդակությունը	Գործունեության ոլորտը	Երկիրը	
Համատեղ վարչարարություն	Կառավարման մարմինների միավորում: Այդպիսի կազմակերպությունը ղեկավարում է տնօրենների խորհուրդը, որը ձևավորվում է համայնքների ներկայացուցիչներից: Տնօրենների խորհուրդը պատասխանատու է բյուջեի կատարման և կազմակերպության ընդհանուր կառավարման համար:	Վերահսկողություն պարենամթերային ապրանքների նկատմամբ, երիտասարդների համար աշխատատեղերի ստեղծման միջոցառումների ձեռնարկում, նավթամթերքի և քիմիական արտանետումների համար հատուկ աղբանոցների ստեղծում, հասարակական տրանսպորտի աշխատանքի կարգավորում, տարեցների և հոգեկան առողջություն ունեցողների խնամքի իրականացում և ճգնաժամային կենտրոնների ստեղծում:	Դանիա Գերմանիա	
Միջհամայնքային խորհուրդներ	Ինքնուրույն ֆինանսական և վարչական մարմիններ	Համայնքապետարանների միջև համագործակցություն հիվանդանոցների և առողջարանների, էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման, մասնագիտական կրթության ցանցերի ստեղծման հարցերում, ինչպես նաև երեխաների և հաշմանդամների պաշտպանության կազմակերպում:	Ֆինլանդիա	
Միավորումներ, կոմունաներ, ագլոմերացիաներ և քաղաքային միավորումներ	Միավորման ֆիսկալ ինքնուրույնության աստիճանը բարձրանում է կոմունաներից դեպի քաղաքային միավորումներ:	Ստեղծվում են միավորման անդամ համայնքների տնտեսական զարգացման ակտիվացման նպատակով, զարգացման համատեղ ծրագրերի մշակման և իրականացման միջոցով: Նրանց խնդիրը համայնքապետարանների շահերի համաձայնեցումն է տնտեսական և տարածքային զարգացման ոլորտում՝ բնակարանաշինության, ճանապարհատրանսպորտային, հանրային նշանակության և այլ ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման համար:	Ֆրանսիա Ավստրիա Իսպանիա Սլովենիա	

²² Տե՛ս Барабаш Е.С., Зарубежный опыт организации межмуниципального взаимодействия, Известия ИГЭА. 2012, N 3 (83), էջ. 70-71:

Համաձայնագրով լիազորությունների փոխանցում մի համայնքապետարանից մյուսին	Ոչ շատ մեծ համայնքի լիազորությունների փոխանցում զարգացած ենթակառուցվածք ունեցող խոշոր քաղաքին՝ ֆինանսավորմամբ:	Համայնքային գործունեության ոլորտները անսահմանափակ են	Գերմանիա
Կենտրոններ, ինստիտուտներ, բյուրոներ, միավորումներ, գիտահետազոտական ինստիտուտներ	Ոչ առևտրային կազմակերպությունները ֆինանսավորվում են կոոպերացման անդամներ հանդիսացող համայնքների կողմից, ինչպես նաև պետության և առանձին մասնավոր դրամաշնորհային միջոցներից:	Համայնքներում տեղեկատվական համակարգերի զարգացում, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների պատրաստում, կառավարման ոլորտում հատուկ հետազոտությունների իրականացում	Դանիա
Տեղական իշխանությունների վարկային առոցիացիաներ	Ոչ առևտրային կազմակերպություններ՝ համայնքապետարանների կողմից ներդրումային ծրագրերի իրականացումը խթանելու նպատակով: Միջոցները գոյանում են անդամ-համայնքների անդամավճարներից և պետական սուբսիդիաներից:	Համայնքապետարաններին և միջհամայնքային կազմակերպություններին վարկերի տրամադրում՝ կենտրոնացված ջեռուցման համակարգ, էլեկտրակայան, թափոնների վերամշակման գործարաններ, կենսաթոշակառուների և հաշմանդամների համար սոցիալական բնակարաններ, բուժկետ, ցերեկային կենտրոններ կառուցելու համար:	Դանիա
Կոոպերատիվ միություններ	Համայնքապետարանների կամ այլ մարմինների միավորումներ՝ ՊՈԱԿ-ի ձևաչափով: Նպատակը ոչ թե շահույթի ստացումն է, այլ՝ համատեղ խնդիրների լուծումը: Ձայնի իրավունքը կախված է ոչ թե մասնակիցների ներդրած կապիտալից, այլ մասնակիցների թվից՝ մեկ անդամ՝ մեկ ձայն սկզբունքով: Անդամների պատասխանատվությունը սահմանվում է կոոպերատիվի կանոնադրությամբ:	Համայնքային գործունեության ոլորտները անսահմանափակ են	Դանիա
Տարածաշրջանային զարգացման գործակալություն	Միջհամայնքային ղեկավար մարմին՝ ՊՈԱԿ-ի կարգավիճակով: Միավորված մարմինների կողմից ընդունված որոշումները պարտադիր են բոլոր անդամների համար:	Կողմնորոշված է կոնկրետ նախագծային խնդիրների նեղ շրջանակի լուծմանը, բայց միաժամանակ իրավասու է փնտրել նոր ներդրումներ, գործակցություն սկսել բիզնես-միջավայրի հետ:	Շտուտգարտ (Գերմանիա)
Բաժնետիրական ընկերություններ	Համայնքապետարանները պատասխանատվություն չեն կրում բաժնետիրական ընկերության պարտքերի համար,	Հակահրդեհային անվտանգության բրիգադներ, փրկարարական բրիգադներ, կենտրոնական ջեռուցման համակար-	Դանիա

	բայց մասնակից համայնքապետարանների ներկայացուցիչներն ընդգրկվում են բաժնետիրական ընկերության կառավարման մարմիններում:	գի ապահովման ձեռնարկություններ, տեղական էլեկտրակայանների կառուցման, մաքրման աշխատանքներով զբաղվող բրիգադներ:	
Ընկերակցություններ	Համայնքապետարանների համագործակցության փակ ձև: Կապիտալը ձևավորվում է մասնակից-անդամների ներդրումներից և ընկերակցության փոխառություններից: Համայնքապետարանները լրիվ և ուղղակի սուբսիդիար պատասխանատվություն են կրում ընկերության պարտավորությունների համար:	Միջհամայնքային մշակութային հաստատություններ (միջհամայնքային թանգարան): Թանգարանի ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը (ամեն համայնքից մեկ ներկայացուցիչ և մեկ ներկայացուցիչ հասարակության կողմից): Թանգարանի ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է ինչպես ձեռնարկատիրական գործունեության միջոցների, այնպես էլ մասնակից-համայնքի կողմից տրամադրվող սուբսիդիաների հաշվին:	Դանիա
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները և սահմանափակ պատասխանատվությամբ միությունները փակ տեսակի՝ համատեղ բաժնեմասային սեփականությամբ առևտրային ընկերություններ են, որոնց հիմնադիր կապիտալը ձևավորվում է մասնակից համայնքապետարանների ներդրումներից: Ընկերության բաժնետոմսերը կարող են ազատ վաճառվել, բայց այն ունի ամրագրված հիմնադիր կապիտալ, մասնակից-համայնքապետարանների համար երաշխիք է հանդիսանում առևտրային ռիսկերի դեպքում:	Քիմիական և նավթային թափոնների վերամշակման բնագավառում գործող ՍՊԸ-ներ, տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանափակ պատասխանատվությամբ կենսաթոշակային ապահովագրության ընկերություններ (տեղական և տարածքային մարմինների աշխատակիցների կենսաթոշակային ապահովագրություն), միջհամայնքային սահմանափակ պատասխանատվությամբ միություններ՝ կենցաղային կոշտ թափոնների վերամշակման համար:	Բուլղարիա Դանիա
Մի համայնքապետարանի կողմից գնումների իրականացում մյուս համայնքապետարանից	Այդ ծառայությունների գները սահմանվում են բանակցությունների արդյունքում և միջհամայնքային փոխգործակցության մասին համաձայնագրի շրջանակում	Սոցիալական հաստատություններից գնումների իրականացում, սակայն կարող են ծառայություններ ձեռք բերվել նաև այլ ոլորտներից (օրինակ, հատուկ կարիք ունեցող երեխաների համար հոգեբանի ծառայություն, ընտանեկան բռնության ենթարկվածների համար ճգնաժամային կենտրոնի ծառայություն):	Դանիա

Գոյություն ունեն միջհամայնքային համագործակցության մի շարք գործիքներ²³.

- կամավոր համագործակցություն,
- միջհամայնքային հուշագրերի կնքում,
- իրավասությունների վերաբաշխում՝ տարածաշրջանային կամ ազգային մակարդակով:

Միջազգային փորձի վերլուծությունը նաև բացահայտում է, որ միջհամայնքային համագործակցության ապահովման առումով ներկայումս չկան գիտականորեն հիմնավորված հստակ համակարգ և կառուցակարգեր²⁴: Միջհամայնքային համագործակցության գոյություն ունեցող կառուցակարգերն ըստ բովանդակության կարելի է դասակարգել երեք խմբերում.

- ռեսուրսային ապահովում,
- ինստիտուցիոնալ ապահովում,
- գործընթացային ապահովում:

Նշված խմբերը և դրանց մեջ մտնող միջհամայնքային համագործակցության կառուցակարգերը ներկայացված են գծապատկեր 1.1-ում:


Ինչպես երևում է գծապատկեր 1.1-ից, ռեսուրսային ապահովման խումբը ներառում է ֆինանսական, նյութական, տեղեկատվական և կադրային աջակցությունը: Իր հերթին, երկրորդ խումբը (ինստիտուցիոնալ ապահովումը) ներառում է այնպիսի կառուցակարգեր, ինչպիսիք են ավանդույթները՝ որպես ինստիտուտներ, կազմակերպչական, կարգավորող և իրավական աջակցությունը: Երրորդ (գործընթացային ապահովում) խմբում ներառվում են շուկայավարումը, կառավարումը, սոցիալական և քաղաքական աջակցությունը:

Միջհամայնքային համագործակցության ամբողջականության ապահովման տեսանկյունից նշված կառուցակարգերը դասակարգվում են հետևյալ երեք խմբերում՝ (1) հիմնական կամ բազային, (2) լրացնող, (3) օժանդակ կամ աջակցող: Օրինակ, տեղական նշանակության ցանկացած խնդրի լուծում ընտրելիս անհրաժեշտ է հստակորեն սահմանել դրա իրականացումն ապահովող կառուցակարգերը: Սահմանվում են հիմնական (բազային), դրա հետ կապված մեկ կամ մի քանի լրացնող, ինչպես նաև առանձնացվում են մեկ կամ մի քանի օժանդակ կառուցակարգեր: Օրինակ, միջհամայնքային համագործակցության շրջանակում, համատեղ ձեռնարկության հիմնադրման պայմաններում, հիմնական կամ բազային կառուցակարգ կարելի է համարել ֆինանսական ապահովումը: Այս դեպքում լրացուցիչ կառուցակարգեր կարող են լինել անձնակազմի և նյութական աջակցության ապահովումը, իսկ համակարգի գործունեության արդյունավետությունն ապահովելու համար

²³ St'u Барабан Е. С., Зарубежный опыт организации межмуниципального взаимодействия, Известия ИГЭА, 2012, N 3 (83), էջ 69-73:

²⁴ St'u Плахота В. А., Развитие механизмов обеспечения межмуниципального сотрудничества в регионах России: монография, Чебоксары: ИД Среда, 2019, էջ 39:

անհրաժեշտ է կիրառել մի շարք օժանդակ կառուցակարգեր, ինչպիսիք են շուկայավարումը և կազմակերպչական ու կառավարչական կառուցակարգերը:



Գծապատկեր 1.1

Միջհամայնքային համագործակցության ապահովման կառուցակարգերը

Ամփոփելով կարող ենք նշել, որ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար ցածր տեմպերը և բացասական միտումները հաճախ կապված են այդ համայնքներում ռեսուրսների սահմանափակության կամ բացակայության հետ: Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարություն մշակելիս ռեսուրսների սահմանափակության խնդրի լուծումներից մեկը կարող է լինել պայմանագրային հիմունքներով մի քանի համայնքապետարանների միջև ռեսուրսների փոխանակումը կամ միջհամայնքային միավորումների ստեղծումը:

Այս առումով, յուրաքանչյուր պետություն մշակում է միջհամայնքային համագործակցության իր համակարգը՝ ելնելով տվյալ երկրի սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից, միաժամանակ հաշվի առնելով երկրների առաջավոր փորձը: Տեղական ինքնակառավարման զարգացման և ամրապնդման գործում կարևոր դեր ունեցող միջհամայնքային միավորումների (ասոցիացիաների) նպատակն է պաշտպանել միավորման անդամների օրինական իրավունքները և ընդհանուր շահերը, զարգացնել տեղական իշխանությունների միջև համագործակցությունը և նպաստել համատեղ աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Ինչպես ցույց է տալիս ուսում-

նասիրությունը, ներկայումս այդպիսի միավորումներ գոյություն ունեն եվրոպական բոլոր երկրներում:

Միջհամայնքային համագործակցության միջազգային փորձը հաշվի առնելով՝ կարող ենք եզրակացնել, որ, անկախ միջհամայնքային համագործակցության այս կամ այն ձևի ընտրությունից, կարևոր է որոշակի սկզբունքների առկայությունը, այն է՝ (1) կամավորություն, (2) փոխադարձ վստահություն, (3) նպատակահարմարություն, (4) ինքնուրույնության պահպանում:

Ելնելով միջհամայնքային համագործակցության ապահովման գոյություն ունեցող կառուցակարգերից՝ կարող ենք փաստել, որ միջհամայնքային համագործակցության ծրագրեր նախագծելիս, հենվելով գործակցության նպատակների և խնդիրների վրա, համայնքների կողմից հնարավոր կլինի ստեղծել համագործակցության հստակ համակարգ՝ փոխկապակցված և փոխադարձաբար լրացնող կառուցակարգերի տեսքով, քանզի միջհամայնքային համագործակցության արդյունավետ կազմակերպումը պահանջում է համակարգվածություն և դրա ապահովման կառուցակարգերի մշակում և իրագործում:

Միջհամայնքային միավորումների ստեղծման միջազգային փորձը ևս մեկ անգամ վկայում է, որ միջհամայնքային փոխգործակցության ինստիտուտների ստեղծումն ու կայացումը նպաստում են տեղական ինքնակառավարման մարմինների առջև ծառացած խնդիրների, առաջադրանքների և գործառնությունների առավել արդյունավետ և համակողմանի լուծմանն ու կատարմանը:

1.3

ՀՀ-ում համայնքների խոշորացման և միջհամայնքային համագործակցության գործընթացների վերլուծությունը

Հայաստանում տարածքային անհամաչափ զարգացումն ակնհայտ է ոչ միայն մարզերի և մայրաքաղաք Երևանի, այլ նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև: Տարբերությունները զգալի են հատկապես հանրային ծառայությունների հասանելիության տեսանկյունից, մասնավորապես՝ առողջապահության և կրթության բնագավառներում, ինչը բացասաբար է ազդում մարզերի բնակչության բարեկեցության վրա:

Ինչպես հայտնի է, պետական կառավարման տարածքային մակարդակում բարեփոխումներն սկսվեցին 1995 թ. նոյեմբերի 7-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ

օրենքով²⁵: Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերը՝ առանձին կամ այլ բնակավայրի (բնակավայրերի) հետ միասին, ընդգրկվեցին համայնքների մեջ, որոնք ինքնակառավարվող վարչատարածքային միավորներ էին և կարող էին ներառել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր:

2011 թվականի նոյեմբերի 10-ին ընդունված «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ»-ի շրջանակում ՀՀ-ում հիմք դրվեց համայնքների խոշորացման գործընթացին, որով սահմանվեցին խոշորացման օրենսդրական հիմքերը, սկզբունքները և չափորոշիչները, ինչպես նաև՝ խոշորացման հետևանքով ակնկալվող արդյունքները: Մասնավորապես, նշված հայեցակարգի շրջանակում ձևակերպվեցին համայնքների խոշորացման հիմնական սկզբունքները²⁶:

- *Կոնսերվատիվ նպատակահարմարություն:* Համայնքների խոշորացումը պետք է տնտեսապես հիմնավորված լինի: Համայնքների միացման արդյունքում նոր ստեղծված համայնքի աշխատակազմի թվաքանակը զգալիորեն ավելի քիչ կլինի, քան այդ համայնքի կազմի մեջ միավորված նախկին համայնքների աշխատակազմերի հանրագումարային թվաքանակը: Այդպիսով, զգալիորեն կկրճատվեն անձնակազմի պահպանման ծախսերը: Դրա արդյունքում կավելանան բնակչությանը ծառայություններ մատուցելու ուղղված ֆինանսական հնարավոր միջոցները: Բացի դրանից, զգալիորեն կնվազեն միավոր ծառայության վրա կատարվող ծախսերը, էականորեն կմեծանան տնտեսական գործունեության խրախուսման ուղղված հնարավորությունները՝ կապված համայնքային սեփականություն հանդիսացող հողային ռեսուրսների, գույքի, ֆինանսական միջոցների ծավալների խոշորացման հետ: Այս սկզբունքն իր հարաբերական կշռով և նշանակությամբ զգալիորեն տարբերվում է մյուսներից և ավելի մոտ է խոշորացման նպատակին: Ավելին, հենց տնտեսական նպատակահարմարությունն է պայմանավորում մյուս սկզբունքների արդյունավետ կիրառումը:
- *Բնակչությանը ծառայություններ մատուցելու հնարավորության ապահովում և բնակչության համար հանրային ծառայություններից օգտվելու հասանելիություն:* Համայնքների միացումը պետք է կատարել այնպես, որ նոր ստեղծված համայնքն ի վիճակի լինի մատուցել ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակում գտնվող համայնքային բոլոր ծառայությունները, ընդ որում, այդ ծառայություններից կարո-

²⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 1995 թ. նոյեմբերի 7-ին:

²⁶ Տե՛ս «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», ընդունված 2011 թ. նոյեմբերի 10-ին, էջ 23-24:

դանան օգտվել համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերի բնակիչները:

- *Մարդկային ռեսուրսներով ապահովվածություն:* Փոքր համայնքներում մարդկային ռեսուրսներով չապահովված լինելու հանգամանքն ակնհայտ է: Անհրաժեշտ է մեծացնել համայնքների մարդկային ներուժը, որի ուղիներից մեկը համայնքների խոշորացումն է:
- *ՏԻՄ-երի ինքնուրույնության ապահովում:* Փոքր համայնքները, չունենալով իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, փաստացի զրկված են ինքնուրույն համայնքային քաղաքականություն մշակելու և իրականացնելու հնարավորությունից: Խոշորացնելով համայնքները, դրանով իսկ կենտրոնացնելով չափից դուրս փոշիացված ռեսուրսները՝ իրական հնարավորություն կստեղծվի ՏԻՄ-երի ինքնուրույնության ապահովման համար:
- *Ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության ապահովում:* Համայնքների խոշորացումը պետք է կատարել այնպես, որ միացվող համայնքներն ունենան տրանսպորտային հաղորդակցության հնարավորություն:
- *Բնակչության մասնակցության ապահովում:* Համայնքների խոշորացման ծրագիր նախաձեռնելիս անհրաժեշտ է, որոշ դեպքերում նաև պահանջվում է, անցկացնել տեղական հանրաքվեներ, որոնք հնարավորություն կտան բնակչությանը մասնակից դարձնելու համապատասխան որոշումների նախապատրաստմանը:
- *Կառավարման կառուցվածքի օպտիմալացում:* Խոշոր, ռեսուրսային բավարար մակարդակ ունեցող փոքր թվով համայնքների պարագայում, ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների, այնպես էլ վերջիններիս և պետական կառավարման համակարգի ներդաշնակ փոխգործունեության կառավարման արդյունավետություն կապահովվի:
- *Պատվիրակվող լիազորությունների շրջանակի ընդլայնում:* Օպտիմալ կառուցվածքով համայնքների պարագայում հնարավոր կլինի շարունակել ապակենտրոնացման գործընթացը՝ տեղական ինքնակառավարման մարմիններին նոր լիազորություններ պատվիրակելու և արդեն պատվիրակված լիազորությունների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու միջոցով:
- *Նոր ձևավորվող համայնքների համար բնական պաշարներից (հող, անտառ, ջուր, օգրակար հանածոներ, ռելիեֆային) օգտվելու հնարավորինս հավասար պայմանների ստեղծում:*
- *Առնվազն մեկ, համեմատաբար խոշոր բնակավայրի առկայություն:* փոքր բնակավայրերի միավորումը մեկ համայնքում, անկախ բնակավայրերի քանակից, չի կարող բավարար արդյունք ապահովել:

Համայնքների խոշորացումը պետք է նախադրյալներ ստեղծի միջ-ազգային պրակտիկայում կիրառվող՝ տարածքային կազմակերպման բազմակենտրոն մոդելի ձևավորման համար, ինչը ենթադրում է, որ համայնքների կենտրոնները պետք է միաժամանակ ձևավորվեն որպես տարաբնակեցման համակարգի տեղային կենտրոններ:

Խոշորացման վերոնշյալ հայեցակարգի շրջանակում սահմանվեցին նաև համայնքների խոշորացման չափորոշիչները²⁷.

- միացվող համայնքների ընդհանուր վարչական սահմանի առկայություն,
- նոր ձևավորվող համայնքի կենտրոնը, որպես կանոն, միացվող համայնքների նկատմամբ պետք է ունենա կենտրոնական դիրք, առնվազն 3000 բնակիչ և անհրաժեշտ նվազագույն ծավալի ենթակառուցվածքներ,
- նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի միջև հեռավորությունը չպետք է գերազանցի, որպես կանոն, 20 կմ-ը,
- նոր ձևավորվող համայնքում պետք է առկա լինեն ՏԻՄ-երի պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածքներ (մանկապարտեզ, բուժկետ, մշակույթի տուն/ակումբ) և միջնակարգ դպրոց,
- նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի միջև հասարակական տրանսպորտային հաղորդակցություն ապահովող ճանապարհների (առնվազն խճապատ) առկայություն,
- նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի՝ նախկինում համատեղ կառավարման մարմնի առկայություն (գյուղխորհուրդ, ավանային խորհուրդ, քաղխորհուրդ),
- նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի բնակիչների համատեղեցիկություն և ազգային նկարագիր (մենթալություն): Ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքները կարող են խոշորացվել միայն առավելապես նույն ազգի ներկայացուցիչներով բնակեցված համայնքների հետ միավորմամբ:

Նշված չափորոշիչներին ու սկզբունքներին համապատասխան խոշորացման դեպքում ակնկալվում էր ունենալ հետևյալ արդյունքները²⁸.

- մարդկային ռեսուրսների համախմբում,
- ենթակառուցվածքների համախմբում և ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացում,
- ֆինանսական կարողությունների ուժեղացում և լիազորությունների շրջանակի ընդլայնում,

²⁷ Տե՛ս «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ», ընդունված 2011 թ. նոյեմբերի 10-ին, էջ 24-25:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 27-29:

- լրացուցիչ արդյունք:

Հայեցակարգի համաձայն՝ որպես լրացուցիչ արդյունք դիտարկվում էին. (1) համայնքներին պատվիրակված լիազորությունների շարունակական փոխանցման հնարավորությունների, (2) հետագա ապակենտրոնացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, (3) համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացում, (4) վարչական տարածքների խոշորացման հետևանքով տնտեսության ճյուղերի, հատկապես՝ գյուղատնտեսության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծում, (5) համայնքների նկատմամբ պետական վերահսկողության դյուրացում, արդյունավետության բարձրացում և այդ ուղղությամբ ծախսերի նվազեցում, (6) բնական պաշարների հասանելիության և դրանցից օգտվելու հնարավորության ապահովում գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար, (7) տարածքային կազմակերպման և տարաբնակեցման համակարգի հավասարակշռված և բազմակենտրոն մոդելի ձևավորում:

Համայնքների խոշորացմանն ուղղված բարեփոխումների համատեքստում, 2016 թ. հոկտեմբերի 20-ին ընդունվեց «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը²⁹, որով սահմանվեցին ֆինանսական համահարթեցման հասկացությունը, սկզբունքները, համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգերը: Սույն օրենքի շրջանակում սահմանվեցին նաև ֆինանսական համահարթեցման հետևյալ սկզբունքները.

1. համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա անհամաչափության մեղմացումը,
2. պետական բյուջեից համայնքներին տրամադրվող դոտացիաների անհատույց և ոչ նպատակային լինելը,
3. համայնքների լիազորությունների իրականացման և ֆինանսական միջոցների օգտագործման ազատության և ինքնուրույնության պահպանումը,
4. պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափի օրենքով սահմանումը,
5. ըստ առանձին համայնքների՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեից համայնքներին տրամադրող դոտացիաների գումարների՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատումը:

Համաձայն օրենքի՝ ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված սեփական լիազորություն-

²⁹ Տե՛ս «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2016 թ. հոկտեմբերի 20-ին:

ների իրականացմանն ուղղված՝ համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցումն է:

Տեղական ինքնակառավարման բարեփոխումներին ուղղված հաջորդ քայլը 2018 թ. մարտի 7-ին «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի ընդունումն էր, որով սահմանվեցին միջհամայնքային միավորումների ստեղծման, միավորման լիազորությունների, մարմինների և գործունեության, ինչպես նաև գործունեության դադարեցման և լուծարման իրավական հիմքերը³⁰: Օրենքի համաձայն՝ միավորումները կարող են ստեղծվել երկու սկզբունքով՝

1. համայնքների ավագանիների կողմից՝ կամավոր հիմունքներով,
2. օրենքով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության առաջարկությամբ:

Միավորումը կամավոր հիմունքներով ստեղծվում է երկու և ավելի համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ: Այդ նախաձեռնությամբ կարող է հանդես գալ համայնքի ղեկավարը կամ ավագանու անդամների մեկ երրորդը՝ ավագանու նիստում ներկայացնելով այն լիազորությունները, որոնք պետք է փոխանցվեն միջհամայնքային միավորմանը, ինչպես նաև միավորման մեջ ընդգրկված համայնքների բյուջեներից միավորման ֆինանսավորման սկզբունքները: Նախաձեռնությունը քննարկվում է ավագանու նիստում, որի վերաբերյալ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի ձայների մեծամասնությամբ համայնքի ավագանին ընդունում է որոշում՝ ստեղծվող միավորման կազմում ընդգրկվելու կամ նախաձեռնությունը մերժելու մասին:

Օրենքով միավորում ստեղծելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությամբ կարող է հանդես գալ միայն Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, որը, մինչև օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը, համապատասխան համայնքներին ներկայացնում է միավորում ստեղծելու վերաբերյալ օրենքի և միավորման կանոնադրության նախագծերը:

Համաձայն ընդունված օրենքի՝ միավորման մարմիններ են համարվում միավորման խորհուրդը և խորհրդի նախագահը: Խորհուրդը կազմված է միավորման անդամ համայնքների ղեկավարներից և ավագանու մեկական անդամից: Այն համայնքներում, որտեղ ավագանու կազմում կան ավագանու կին անդամներ, խորհրդի ձևավորման հարցում նախապատվությունը տրվում է վերջիններիս: Խորհրդի նախագահին խորհրդի անդամների կազմից ընտրում է խորհուրդը՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նախագահը կարող է փոփոխվել խորհրդի որոշմամբ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհրդի անդամները և խորհրդի նախագահն իրենց լիազորություններն իրականացնում են հասարակական հիմունքներով, կարող են խորհրդի որոշմամբ

³⁰ Տե՛ս «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2018 թ. մարտի 7-ին:

ստանալ դրամական փոխհատուցում՝ սահմանված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, համայնքի ավագանու անդամի՝ իր պարտականություններն իրականացնելու հետևանքով առաջացած ծախսերի չափով:

2019 թ. նոյեմբերի 14-ին ընդունված «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքով ոչ միայն կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման հետ կապված հարաբերությունները, այլև սահմանվում են տարածքային կառավարման հիմնական սկզբունքները, որոնք են³¹

1. պետական և համայնքային շահերի ներդաշնակեցումը,
2. մարզպետների, պետական կառավարման համակարգի այլ մարմինների ու վերջիններիս տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությունը և գործողությունների փոխհամաձայնեցվածությունը,
3. տարածքային համաչափ և կայուն զարգացումը:

Աղյուսակ 1.2

ՀՀ վարչատարածքային բաժանման փոփոխությունները
2015-2019 թթ. ժամանակահատվածում³²

	Համայնքների թիվը		Առ 2019 թ. նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքներ	Միավորման գործընթացում րոտորված համայնքներ	«Լուծարված» (միավորված) համայնքներ	Համայնքների միավորման գործընթացում չրոտորված չլուծարվող համայնքներ	Բնակավայրերի թիվը		Նշումներ/փոփոխ
	2019 թ.	2015 թ.					2019 թ.	2015 թ.	
Ընդամենը	502	915	52	465	413	450	1004	1002	+2
Արագածոտն	72	114	4	46	42	68	120	120	
Արարատ	95	97	1	3	2	94	99	99	
Արմավիր	97	97	-	-	-	97	98	98	
Գեղարքունիք	57	92	4	39	35	53	98	98	
Լոռի	56	113	11	68	57	45	130	130	
Կոտայք	42	67	6	31	25	36	69	69	
Շիրակ	42	119	7	84	77	35	130	131	-1
Սյունիք	8	109	8	109	101	-	138	134	+4
Վայոց ձոր	8	44	6	42	36	-	55	55	
Տավուշ	24	62	5	43	38	19	66	67	-1
Երևան	1	1	-	-	-	1	1	1	

2019 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում կար 502 համայնք (այդ թվում՝ Երևանը), համայնքները ներառում էին 1004 բնակավայր (նախկին 1002-ի փոխարեն): ՀՀ 502 համայնքից 68-ը բազմաբնակավայր էր, որից 54-ը՝ 3 և

³¹ Տե՛ս «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2019 թ. նոյեմբերի 14-ին, հոդված 3:

³² Տե՛ս նույն տեղը, էջ 23:

ավելի բնակավայրերով³³: Աղյուսակ 1.2-ում ներկայացված են ՀՀ վարչատարածքային բաժանման փոփոխությունները 2015-2019 թթ. ժամանակահատվածում:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, մինչև այժմ վարչատարածքային բարեփոխումների հետևանքով համայնքների միավորման գործընթացում ընդգրկվել է 465 համայնք, լուծարված և միավորված համայնքները 413 են, իսկ միավորման գործընթացում չի ընդգրկվել 450 համայնք:

Տարածքների համաչափ և կայուն զարգացման քաղաքականություն իրականացնելիս Հայաստանի Հանրապետությունը, հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, տարածքային զարգացման միջազգային փորձն աստիճանաբար համապատասխանեցնում է իր կարիքներին: Տարածքային համաչափ զարգացումը կարևորվում է բոլոր քաղաքացիներին տրվող հավասար հնարավորությունների և մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում, օրինակ՝ կրթության, առողջապահության, սոցիալական ու տրանսպորտային ենթակառուցվածքի հասանելիություն, որը հնարավորություն է ստեղծում բարելավելու համայնքներում բնակվող քաղաքացիների կենսապայմանները:

³³ Տե՛ս Տեղական ինքնակառավարումը Հայաստանում, 2018, Եր., «Աստղիկ», 2019, Գիրք 11/, խմբ. Վահրամ Շահբազյան, էջ 21:

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ****2.1 ՀՀ Վայոց ձորի մարզի սոցիալ-տնտեսական
զարգացման ներկա իրավիճակի
վերլուծությունը**

Վայոց ձորի մարզն ունի նպաստավոր աշխարհագրական դիրք և Հաստատանի մարզերը կապում է Սյունիքի, Արցախի ու Իրանի հետ: Այն զբաղեցնում է հանրապետության տարածքի շուրջ 7.8%-ը, սակայն այստեղ բնակվում է ՀՀ բնակչության 1.7%-ը և ամենանոսր բնակեցված մարզն է: Վայոց ձորը գյուղատնտեսական մարզ է. բնակչության 64%-ը բնակվում է գյուղական բնակավայրերում³⁴: Մարզն ունի զբոսաշրջային մեծ ներուժ՝ պայմանավորված ինչպես հայտնի Ջերմուկի հանքային ջրերով, այնպես էլ պատմամշակութային կոթողներով:

Վայոց ձորի քաղաքներն ունեն գյուղմթերքի արտադրության և վերամշակման ընդգծված ուղղվածություն՝ բացառությամբ Ջերմուկ քաղաքի, որն առողջարանային կենտրոն է: Մարզի քաղաքային բնակավայրերից միգրացիան ավելի արագ է, քան գյուղական բնակավայրերից, որը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում առկա աշխատատեղերով: Քաղաքային բնակավայրերում աշխատատեղերը շարունակում են մնալ մարզի կարևոր խնդիրը՝ բացառությամբ Ջերմուկ քաղաքի:


Մարզի հանրային ենթակառուցվածքները դեռևս էականորեն զիջում են միջին հանրապետական ցուցանիշներին, մասնավորապես՝ զազամատակարարման, ճանապարհների մատչելիության, աղբահանության և այլ ենթակառուցվածքները:

Բնակչության եկամուտների տեսանկյունից Վայոց ձորի մարզը, մյուս մարզերի համեմատությամբ, զբաղում է միջանկյալ դիրք: Թեև մարզի բնակչությունը համարվում է հանրապետության տնտեսապես ամենաակտիվներից մեկը, այնուամենայնիվ, եկամուտները դեռևս մեծապես կախված են տրանսֆերտներից, կենսաթոշակներից ու նպաստներից:

³⁴ Տե՛ս ՀՀ Վայոց ձորի մարզի 2017-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն, Եղեգնաձոր, 2017:

Մարզի տնտեսության առաջատար ոլորտներից է գյուղատնտեսությունը, որը մեկ շնչի հաշվով շուրջ 1.23 անգամ ավելի է հանրապետության միջին ցուցանիշից: Բարձր է նաև շինարարության ցուցանիշը, սակայն տնտեսության մյուս ճյուղերը դեռևս էականորեն հետ են հանրապետության միջին ցուցանիշներից:

ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչությունը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 49.0 հազ. մարդ, այսինքն՝ ՀՀ բնակչության 1.7%-ը: 1 քառ. կմ-ի վրա բնակչության խտությունը կազմել է 22 մարդ, իսկ հանրապետության միջին ցուցանիշը կազմել է 101 մարդ: Եղեգնաձորի տարածաշրջանում, որը կազմում է մարզի տարածքի 54.3%-ը, ապրում է բնակչության 64.1%-ը, բնակչության խտությունը կազմում է 26 մարդ 1 քառ. կմ-ի վրա: Համեմատաբար նոսր է բնակեցված Վայքի տարածաշրջանը, որտեղ բնակվում է բնակչության 35.9%-ը, և խտությունը կազմում է 17 մարդ (գծապատկեր 2.1):



Գծապատկեր 2.1


Մարզի մշտական բնակչության թվաքանակը 2006-2019 թթ.՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի (հունվարի 1-ի դրությամբ)³⁵

Մարզում հիմնական բնակչությունը գյուղաբնակ է, որի տեսակարար կշիռը նշված տարիներին գրեթե չի փոփոխվել՝ կազմելով միջինը 65%: 2006-2019 թթ. Վայոց ձորի բնակչության թվաքանակը նվազել է 12.2%-ով, իսկ նույն ժամանակահատվածում հանրապետության բնակչությունը նվազել է 7.9%-ով: Ընդ որում, քաղաքային բնակչությունը նվազել է 10.8%-ով, իսկ գյուղական բնակչությունը՝ 12.9%-ով:

Վայոց ձորի մարզում բնակչության վերարտադրության ցուցանիշները 2006-2019 թթ. ներկայացված են գծապատկեր 2.2-ում:

³⁵ Տե՛ս ՀՀ Վայոց ձորի մարզը թվերով, 2009-2019 թթ.:

* ՀՀ վիճակագրական կոմիտեի և Վայոց ձորի մարզպետարանի հրապարակած տվյալները մարզի բնակչության թվաքանակի վերաբերյալ որոշ չափով տարբերվում են:




Գծապատկեր 2.2

Վայոց ձորի մարզի բնակչության վերարտադրության ցուցանիշները 2006-2018 թթ., 1000 բնակչի հաշվով

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Վայոց ձորի մարզում ծնվածների թվաքանակը, 1000 բնակչի հաշվով, նվազել է 0.2%-ով, մահացածների թվաքանակը՝ 0.4%-ով, իսկ բնական հավելանքը՝ 0.6%-ով:

Աշխատանքի շուկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2006-2017 թթ. զբաղվածների թվաքանակը նվազել է 7.7 հազար մարդով կամ 28.5%-ով: 2018 թ. զբաղվածների թվաքանակի կտրուկ անկումը (2017 թ. համեմատությամբ նվազել է 6.8 հազարով) պայմանավորված է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից զբաղվածների թվաքանակի հաշվառման ստանդարտի փոփոխությամբ: Զբաղվածության կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ զբաղվածների շուրջ 71%-ն աշխատում է գյուղատնտեսության, իսկ 21%-ը՝ ծառայությունների ոլորտում:

Գործազուրկների թվաքանակը 2006-2017 թթ. աճել է 0.7 հազարով կամ 53.8%-ով, իսկ 2018 թ. կտրուկ աճը նույնպես պայմանավորված է հաշվառման ստանդարտների փոփոխությամբ: Ընդհանուր առմամբ, մարզի զբաղվածների և գործազուրկների թվաքանակի շարժընթացը 2006-2018 թթ. ներկայացված է գծապատկեր 2.3-ում:



Գծապատկեր 2.3

Վայոց ձորի մարզի զբաղվածների և գործազուրկների թվաքանակի շարժընթացը 2006-2018 թթ.

Վայոց ձորի մարզում արդյունաբերությունը զարգացած է մասնավորապես Եղեգնաձորի և Զերմուկի տարածաշրջաններում: Այստեղ հիմնական ճյուղը մշակող արդյունաբերությունն է և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Զարգանում է նաև հանքարդյունաբերությունը՝ օգտակար հանածոների արդյունահանում իրականացնելով 1 մետաղական և 6 ոչ մետաղական հանքերից: Ընթացքի մեջ են ևս 2 մետաղական հանքերի շահագործման աշխատանքները:

Մարզում գործում են 121 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք հիմնականում կենտրոնացված են քաղաքներում: Առավել խոշոր ձեռնարկությունները գործում են հանքային ջրերի, գինիների և պահածոների արտադրության ոլորտում:

Մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը և կառուցվածքը 2006-2018 թթ. ներկայացված են աղյուսակ 2.1-ում: Աղյուսակի տվյալները վկայում են, որ 2018 թ., 2006-ի համեմատությամբ, արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է շուրջ 5.5 անգամ, ընդ որում՝ հանքագործական արդյունաբերությունն աճել է կրկնակի, իսկ մշակող արդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության ծավալն էականորեն չի փոխվել:


Վայոց ձորի մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը,
կառուցվածքը և շարժընթացը 2006-2018 թթ.*

Աղյուսակ 2.1

Տարիներ	Արդյունաբերական արտադրանքի ծավալի ընթացիկ գներով, մլն ՀՀ դրամ	Աղ. թվում (% ամրոցի նկատմամբ)		
		Հանքագործական արդյունաբերություն	Մշակող արդյունաբերություն	Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
2006	5066.0	0.5	77.3	22.2
2007	5466.3	0.7	76.9	22.4
2008	6252.3	0.5	77.0	22.5
2009	6253.3	0.4	80.6	17.1
2010	7238.4	0.4	82.9	15.9
2011	7765.0	0.3	87.8	11.2
2012	9099.9	1.4	67.3	29.3
2013	12008.3	1.3	64.2	32.9
2014	15420.2	0.6	76.0	21.9
2015	23148.7	0.6	68.2	29.5
2016	22929.1	1.2	70.4	23.0
2017	24620.2	1.6	74.9	22.1
2018	27641.4	1.1	75.0	22.6

*Աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99516043.pdf>

2018 թ. մարզի արդյունաբերության կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 2.4-ում:



Գծապատկեր 2.4

Մարզի արդյունաբերական արտադրության կառուցվածքը, 2018 թ.

Ինչպես արդեն նշվեց, մարզի տնտեսության մեջ գերակշռողը գյուղատնտեսությունն է։ Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը 2018 թ. կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 74.4%-ը։ Գյուղատնտեսությունը մասնագիտացած է անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր կենդանիների բուծման) և բուսաբուծության (մասնավորապես՝ պտղի և խաղողի) մեջ։ Գյուղատնտեսության ոլորտը մարզում ապահովում է ոչ ֆորմալ շուրջ 12000 աշխատատեղ։

Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը, այդ թվում՝ ըստ բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերի, ներկայացված է աղյուսակ 2.2-ում։

Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը, կառուցվածքը և շարժընթացը 2006-2018 թթ. (մլրդ ՀՀ դրամ)*


Աղյուսակ 2.2

Տարիներ	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	Այդ թվում՝	
		Բուսաբուծություն	Անասնաբուծություն
2006	24.4	9.8	14.6
2007	27.3	12.4	14.9
2008	27.0	10.0	17.0
2009	11.3	3.9	7.4
2010	13.8	4.9	8.9
2011	16.9	5.0	11.9
2012	18.4	6.3	12.1
2013	19.9	6.4	13.5
2014	21.4	6.9	14.5
2015	21.4	6.6	14.8
2016	21.9	7.6	14.3
2017	24.0	7.3	16.7
2018	22.3	5.7	16.6

*Աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99516048.pdf>

Աղյուսակի տվյալներից երևում է, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2009-2010 թթ. ունեցել է որոշակի անկում, այնուհետև՝ 2012-ից սկսած, նորից աճել է: Արդյունքում, 2006-2018 թթ. ընթացքում այս ցուցանիշը նվազել է 8.7%-ով, ընդ որում՝ բուսաբուծությունը նվազել է 41.8%-ով, իսկ անասնաբուծությունն ավելացել է 13.7%-ով:


Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքային տեղաշարժերը ներկայացված են գծապատկեր 2.5-ում:



Գծապատկեր 2.5

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքի շարժընթացը 2006-2018 թթ.

Վայոց ձորի մարզի տնտեսությունում իրականացված շինարարական աշխատանքների շարժընթացը ներկայացված է գծապատկեր 2.6-ում:



Գծապատկեր 2.6

Վայոց ձորի մարզի շինարարության ծավալի շարժընթացը 2006-2018 թթ. (մլն ՀՀ դրամ)*

*Աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99510213.pdf>

Գծապատկեր 2.6-ից երևում է, որ շինարարության ծավալը հատկապես աճել է 2013 թ., իսկ 2017-ին ունեցել է թռիչքային աճ՝ նախորդ տարվա համեմատ 5.2 անգամ: Ընդհանուր առմամբ, նշված ժամանակահատվածում շինարարության ծավալն ավելացել է 2.4 անգամ:

Ծառայությունների ոլորտը, հատկապես՝ զբոսաշրջությունը, Վայոց ձորի տնտեսության գերակա և զարգացող ոլորտներից մեկն է: Մարզն ունի ներքին և արտաքին զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարներ: Մարզում գործում են ժամանցի բազմաթիվ վայրեր, 50-ից ավելի առողջարաններ, սննդի 32 մշտական և 47 սեզոնային օբյեկտներ, 81 հյուրատներ, գինու համտեսի 6 սրահներ: Զբոսաշրջիկների թվաքանակն այստեղ 2018 թ. հասել է 8000-ի: Զգալիորեն զարգացած են նաև ենթակառուցվածքները՝ ճանապարհները, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Մարզի հյուրանոցների թիվը 2006-2018 թթ. 6-ից դարձել է 19: Մարզի տրանսպորտի, առևտրի և ծառայությունների վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացված են աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ 2.3-ի տվյալներից երևում է, որ նշված ժամանակահատվածում գրեթե կրկնակի աճել է բեռնաշրջանառությունը, իսկ ուղևորաշրջանառությունն աճել է 15%-ով: Առավել թոփքային աճ է նկատվում մանրածախ առևտրի շրջանառության գծով՝ 1.9 անգամ և ծառայությունների գծով՝ 5.4 անգամ: Նշված ցուցանիշների շարժընթացի նման միտումները ևս մեկ անգամ վկայում են մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ այս ոլորտների առանցքային նշանակության մասին:

Վայոց ձորի մարզի տրանսպորտի, առևտրի և ծառայությունների ցուցանիշների շարժընթացը 2006-2018 թթ.*


Աղյուսակ 2.3

Տարիներ	Բեռնաշրջանառությունը, մլն տ-կմ	Ուղևորաշրջանառությունը, մլն ուղևոր-կմ	Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն ՀՀ դրամ	Մանրածախ առևտրի օբյեկտների քանակը, միավոր	Ծառայությունների ծավալը, մլն ՀՀ դրամ
2006	11.9	6.0	4369.1	219	1831.4
2007	16.7	3.9	4776.5	220	1725.9
2008	17.3	4.7	6296.9	234	2061.0
2009	21.7	4.6	3675.6	210	2750.5
2010	22.0	4.6	4418.1	265	3490.0
2011	21.2	4.9	4210.0	229	3553.2
2012	12.2	5.4	4279.3	227	4373.1
2013	12.5	5.8	4635.2	231	6551.3
2014	14.0	8.8	4745.4	313	6644.0
2015	17.3	6.3	5635.5	303	6991.8
2016	18.5	6.7	5229.6	301	6781.5
2017	23.9	7.5	7275.9	295	8354.3
2018	23.2	6.9	8263.6	301	9883.5

*Աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99516058.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99516063.pdf>

Վայոց ձորի մարզի արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում ներմուծումը 2017 թ. կազմել է 76%, արտահանումը՝ 24%: Թեև մարզում

արտահանումը 2017 թ., 2006-ի նկատմամբ, աճել է 2.2 անգամ, սակայն մեկ շնչի հաշվով արտահանումը 2017 թ. կազմել է 58.2 հազար ՀՀ դրամ: Արտահանման ծավալի ցուցանիշը Վայոց ձորի մարզում ՀՀ-ում ամենացածրն է՝ շուրջ 0.3%: Մարզի արտահանման և ներմուծման շարժընթացը ներկայացված է գծապատկեր 2.7-ում:



Գծապատկեր 2.7

Վայոց ձորի մարզի արտահանման և ներմուծման ծավալների շարժընթացը 2006-2017 թթ.*

*Աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99510243.pdf>

Այժմ անդրադառնանք Վայոց ձորի մարզի սոցիալական ոլորտի ուսումնասիրությանը: 2007 թ. մարզում գործել է 17 նախադպրոցական հաստատություն, սակայն 2016-2017 թթ. համայնքների խոշորացումից հետո դրանց թիվն ավելացել է՝ 2018-ին հասնելով 31-ի: Գյուղական որոշ բնակավայրերում նախադպրոցական հաստատությունների բացակայությունը պայմանավորված է համայնքների ֆինանսական վիճակով:

Վայոց ձորի մարզում հանրակրթական դպրոցների քանակը 2006-2018 թթ. նվազել է 3-ով: Այժմ մարզում գործում են 48 հանրակրթական դպրոցներ, սակայն վերջին տարիներին ծնելիության անկման հետևանքով հեռավոր գյուղական համայնքների դպրոցներում առաջանում են թերհավաքագրված դասարաններ, ինչն էլ ազդում է կրթության որակի վրա: Մարզում է գտնվում նաև ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղը, որը բացվել է 2007 թ.:

ՀՀ Վայոց ձորի մարզում տնային տնտեսությունների թիվը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 12781: Մարզի տնային տնտեսությունների 38.9%-ը գտնվում է քաղաքային բնակավայրերում, իսկ 61.1%-ը՝ գյուղական: Տնային տնտեսությունների ապահովվածությունը բնակելի մակերեսով գյուղերում 53.3 քառ.մ է, որը 13.5 քառ.մ-ով ավելի է հանրապետական միջինից և քաղաքային համայնքներում՝ 30.3 քառ.մ, որը 3.4 քառ.մ-ով բարձր է միջին հանրապետական ցուցանիշից: Մարզի բնակելի ֆոնդի ընդհանուր մակերեսն ամբողջ բնակչության համար և 1 շնչի հաշվով ներկայացված է աղյուսակ 2.4-ում:

Աղյուսակից երևում է, որ 2006-2014 թթ. բնակելի ֆոնդի ընդհանուր մակերեսն ինչպես մարզի ամբողջ բնակչության, այնպես էլ 1 շնչի հաշվով աճել

է, այնուհետև դրսևորել է նվազման միտում: 2006-2018 թթ. ընթացքում առաջին ցուցանիշը նվազել 8.1%-ով, իսկ երկրորդն աճել է 3.4%-ով:


Վայոց ձորի մարզի բնակչության ապահովվածությունը բնակելի ֆոնդով 2006-2018 թթ., հազ. քառ. մ*

Աղյուսակ 2.4

Տարիներ	Բնակելի ֆոնդի ընդհանուր մակերեսը	1 շնչին ընկնող բնակելի ֆոնդի մակերեսը
2006	2153.6	38.6
2007	2159.5	38.7
2008	2170.6	38.9
2009	2170.6	38.9
2010	2176.2	39.0
2011	2206.4	39.4
2012	2317.0	41.3
2013	2337.0	44.6
2014	2359.4	45.2
2015	2271.9	44.2
2016	2001.5	39.4
2017	2007.0	39.9
2018	1979.0	39.9

*Աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99516088.pdf>

Մարզի սոցիալական վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշ է նաև բնակչության ապահովվածությունը բժիշկներով և ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներով: Վայոց ձորի մարզում գործում են մարզային երթակայության 8 բժշկական կազմակերպություններ, այդ թվում՝ Եղեգնաձորում՝ 1 բժշկական կենտրոն, Վայքում՝ 1 բուժական միավորում, Ջերմուկում՝ 1 առողջության կենտրոն, գյուղական համայնքներում՝ 5 առողջության առաջնային պահպանման կենտրոններ: Նշված բուժօգնություններին ամրակցված են նաև 35 բուժակ-մանկաբարձական կետեր:




Գծապատկեր 2.8

Վայոց ձորի մարզի բնակչության ապահովվածությունը բժիշկներով 2006-2018 թթ., 10000 բնակչի հաշվով*

*Աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99516088.pdf>

Մարզի ապահովվածությունը բժշկական կադրերով (21.4 բժիշկ՝ 10000 բնակչի հաշվով) ավելի քան երկու անգամ ցածր է միջին հանրապետական ցուցանիշից (43.74 բժիշկ՝ 10000 բնակչի հաշվով): Միջին բուժանձնակազմի առումով տարբերությունը մարզի և հանրապետության ցուցանիշների միջև այնքան էլ ակնհայտ չէ, իսկ հիվանդանոցային մահճակալների քանակով մարզը կրկին զիջում է միջին հանրապետական ցուցանիշին (զծապատկեր 2.8):

Քանի որ Վայոց ձորի մարզում մատուցվում են զբոսաշրջային և բուժական-առողջարանային մի շարք ծառայություններ, շատ կարևոր է նաև մարզում շրջակա միջավայրի վիճակի գնահատումը: Բնապահպանական վիճակը բնութագրող ցուցանիշներից են, օրինակ, մթնոլորտային արտանետումները 1 բնակչի հաշվով, ջրի, հողի, օդի որակը, թափոնների, արտանետված փոշու քանակը և այլն: Գծապատկեր 2.9-ից երևում է, որ մարզում 2011 թ. մթնոլորտային արտանետումները կտրուկ աճել են, այնուհետև աճի տեմպը դանդաղել է, իսկ 2014 թվականից սկսած՝ դրսևորել է նվազման միտում: Ընդհանուր առմամբ, 2006-2018 թթ. մարզի մթնոլորտային արտանետումները 1 շնչի հաշվով աճել են 3.3 կգ-ով կամ 2.9 անգամ:



Գծապատկեր 2.9

Վայոց ձորի մարզի մթնոլորտային արտանետումները մեկ բնակչի հաշվով, 2006-2018 թթ., կգ*

*Աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99516088.pdf>

Այսպիսով, ամփոփելով մարզի ընդհանուր սոցիալ տնտեսական վիճակը, ներկայացնենք նաև Վայոց ձորի մարզի ՀՆԱ-ն՝ այն համեմատելով հանրապետության ՀՆԱ-ի հետ: 2017 թ. ՀՀ ՀՆԱ-ն կազմել է 5564 մլրդ ՀՀ դրամ կամ մեկ շնչի հաշվով շուրջ 1.867 մլն ՀՀ դրամ: Վայոց ձորի ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 94.6 մլրդ և 1.892 մլն ՀՀ դրամ: Թեև Վայոց ձորի մարզի ՀՆԱ-ն 2017 թ. կազմել է հանրապետության ՀՆԱ-ի ընդամենը 1.7%-ը, սակայն մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով Վայոց ձորի մարզը հանրապետական միջին ցուցանիշը գերազանցում է 1.3 %-ով: Վայոց ձորի մարզի ՀՆԱ-ի ցուցանիշները, այդ թվում՝ 1 շնչի հաշվով և 1 զբաղվածի հաշվով, ներկայացված են աղյուսակ 2.5-ում:

Վայոց ձորի մարզի ՀՆԱ-ի ցուցանիշները 2015-2017 թթ.* | Աղյուսակ 2.5

Տարիներ	ՀՆԱ-ն շուկայական գներով, մլն ՀՀ դրամ	Մարզի ՀՆԱ-ն %-ով հանրապետության ՀՆԱ-ի նկատմամբ	Մարզի ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով, մլն ՀՀ դրամ	Մարզի ՀՆԱ-ն 1 գրադվածի հաշվով, մլն ՀՀ դրամ
2015	61354.4	1.2	1.201	2.578
2016	73483.2	1.5	1.455	3.499
2017	94635.8	1.7	1.893	4.903

Աղբյուրը՝ <https://www.armstat.am/file/doc/99516038.pdf>

2015-2017 թթ. Վայոց ձորի մարզի ՀՆԱ-ն աճել է 54.2%-ով, մինչդեռ ՀՀ ՀՆԱ-ն այդ նույն ժամանակաշրջանում աճել է 10.3%-ով: Մարզի ՀՆԱ-ի առաջանցիկ տեսակների առկայությունը, ինչպես նաև հանրապետության ՀՆԱ-ի մեջ մարզային ՀՆԱ-ի մասնաբաժնի ավելացումն արդեն իսկ վկայում են մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման մասին: Ինչ վերաբերում է 1 շնչի հաշվով և 1 գրադվածի հաշվով ՀՆԱ-ի մարզային ցուցանիշներին, ապա դրանք ևս ավելացել են համապատասխանաբար՝ 57.6%-ով և 1.9 անգամ:

2.2

ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների խոշորացման գործընթացը և նախնական արդյունքները

Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան հատվածում: ՀՀ մարզերի շարքում տարածքի մեծությամբ զբաղվում է միջին տեղ, իսկ բնակչության թվաքանակով ամենափոքր մարզն է: Մարզը զբաղեցնում է 2308 քառ. կմ մակերես:

Մարզի համայնքների թիվն 8-ն է, որից 6-ը՝ խոշորացված (Արենի, Գլաձոր, Եղեգիս, Զառիթափ, Զերմուկ, Վայք), 2-ը՝ ոչ խոշորացված (Եղեգնաձոր, Մալիշկա):

Ամփոփ ներկայացնենք «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 2016 թ. հունիսի 17-ին և 2017 թ. հունիսի 9-ին կատարված փոփոխությունների արդյունքում Վայոց ձորի մարզում ձևավորված 8 համայնքների կազմը և կատարենք համեմատական վերլուծություն: Համայնքների խոշորացման արդյունքում նախկին 44 համայնքների փոխարեն ձևավորվեցին 8-ը, որոնց կազմը ներկայացված է աղյուսակ 2.6-ում:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ մշտական բնակչության թվաքանակով ամենամեծը Արենի համայնքն է, որը ներառում է 10 գյուղական համայնքներ, որին հաջորդում են Զերմուկ և Եղեգնաձոր համայնքները: Վարչական տարածքի մեծությամբ առաջատար են Զերմուկ, Եղեգիս, Զառիթափ

և Արենի համայնքները: Ամենալիտ բնակեցված համայնքը Եղեգնաձորն է (364.7 մարդ/քառ. կմ), քանի որ այն մարզկենտրոնն է:

Վայոց ձորի մարզում ձևավորված համայնքների կազմը և
բնդհանուր բնութագիրը 2019 թ.³⁶

Աղյուսակ 2.6

Համայնք ները	Խոշորացված հա- մայնքի կազմում ներառված գյուղա- կան համայնքները և բնակավայրերը	Համայնքի կենտրոնը	Համայնքում ընդգրկված բնա- կավայրերի միջին հեռավոր- ությունը համայնքի կենտրոնից (կմ)	Համայնքի հեռավորու- թյունը մարզկենտ- րոնից (կմ)	Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ)	Մշտական բնակյու- թյան թվաքանա- կը (մարդ)	Տասյին տնտեսու- թյունների թիվը
Արենի	Ագարակաձոր, Աղավնաձոր, Արե- նի, Արփի, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չի- վա, Ռինդ գյուղա- կան համայնքներ և Մոզրով գյուղա- կան բնակավայր	Արենի	14.5	16	437.8569	11784	2973
Գլաձոր	Գետալի, Գլա- ձոր, Վերնաշեն	Գլաձոր	3.5	3	131.3354	6343	1221
Եղեգիս	Աղնջաձոր, Արտա- բույնք, Գողթանիկ, Եղեգիս, Թառա- թումբ, Հերմոն, Հորքառեղ, Հորս, Շատին, Մալլի, Վարդահովիտ և Քարագլուխ	Շատին	9.6	12	479.634	6947	2158
Եղեգնա- ձոր	Եղեգնաձոր	Վայոց ձորի արզկենտրոն	0	0	26.9079	9813	2582
Զատիթափ	Արտավան, Բարձրունի, Գոմբ, Խնձորուտ, Մար- տիրոս, Նոր Ազնա- բերդ, Սարավան, Սերս գյուղական համայնքներ և Ախտա, Կապույտ, Ուղենձոր գյուղա- կան բնակավայրեր	Զատիթափ	4.8	26	468.3485	4327	1110
Մալիշկա	Մալիշկա	Մալիշկա	0	7	85.6437	4976	1750
Զերմուկ	Գնդեվազ, Կարմրաշեն, Հերիեր	Զերմուկ	5.6	42.5	499.4053	11442	2293
Վայք	Ազատեկ, Արին, Զեղեա գյուղական համայնքներ և Հո- րադիս գյուղական բնակավայր	Վայք	7.75	18	183.9977	8347	2170

Համայնքում ընդգրկված բնակավայրերից՝ համայնքի կենտրոնից մի-
ջին հեռավորությամբ ամենամեծը Արենի և Եղեգիս համայնքներն են՝ պայ-

³⁶ <http://vdzor.mtd.am/Teghek1/>, https://www.armstat.am/file/article/marzer_2019_34.pdf

մանավորված այդ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի մեծ թվով (համապատասխանաբար 10 և 12):


Մարզկենտրոնին ամենամոտ համայնքներն են Գլաձորը և Մալիշկան, իսկ ամենահեռուին՝ Ջերմուկը և Զատիթափը:

Նախակրթական հիմնարկություններով համայնքների ապահովվածության վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել ապահովված են Եղեգնաձոր և Արենի համայնքները (4-ական), իսկ Եղեգիս համայնքում ընդհանրապես չկա նախակրթական հիմնարկություն, թեև այն ներառում է 12 գյուղական համայնք: Հանրակրթական դպրոցներով առավել ապահովված են Եղեգիս (12) և Արենի (9) համայնքները, իսկ գրադարանների թվով՝ Եղեգիսը (11) և Զատիթափը (8): Արենի համայնքում չկա գրադարան:

Մարզի բոլոր համայնքներում, բացառությամբ Եղեգիս և Մալիշկա համայնքների, առկա են աղբավայրեր, իսկ ներհամայնքային երթուղիներ առկա են միայն Ջերմուկ, Մալիշկա և Զատիթափ համայնքներում:

Այժմ ուսումնասիրենք Վայոց ձորի համայնքային բյուջեները, դրանց եկամուտները, այդ թվում՝ սեփական եկամուտները և ծախսերը՝ ըստ վարչական և ֆոնդային մասերի:

Վայոց ձորի մարզի համայնքային ընդհանուր փաստացի եկամուտները 2019 թ. կազմել են 2,322,785.8 ՀՀ դրամ, իսկ ծախսերը՝ 2,344,244.43 ՀՀ դրամ, այսինքն՝ պակասուրդը կազմել է 21458,63 ՀՀ դրամ: Մարզի համայնքային եկամուտների և ծախսերի շարժընթացը 2012-2020 թթ.³⁷ ներկայացվում է գծապատկեր 2.10-ում:




Գծապատկեր 2.10

Վայոց ձորի մարզի ընդհանուր համայնքային եկամուտներն ու ծախսերը 2012-2020 թթ.³⁸

2012-2019 թթ. մարզի ընդհանուր համայնքային եկամուտներն աճել են 2.1 անգամ, իսկ ծախսերը՝ 2.8 անգամ: Ընդ որում, ընդհանուր եկամուտների կազմում սեփական եկամուտների տեսակարար կշիռը 2012-2019 թթ. աճել է 9 տոկոսային կետով՝ 2019 թ. կազմելով 40% (գծապատկեր 2.11):

³⁷ 2020 թ. տվյալները բերված են հուլիսի 1-ի դրությամբ:


³⁸ Գծապատկերը կառուցել են հեղինակները, աղբյուրը՝ <http://vdzor.mtad.am/community-budgetary-revenues/> <http://vdzor.mtad.am/community-budgetary-expenditure/>:



Գծապատկեր 2.11

Վայոց ձորի մարզի ընդհանուր համայնքային եկամուտների մեջ սեփական եկամուտների տեսակարար կշիռը (%) 2012-2020 թթ.

Ըստ առանձին համայնքների՝ Վայոց ձորի համայնքային եկամուտներն ու ծախսերը 2019 թ. ներկայացված են գծապատկեր 2.12-ում:



Գծապատկեր 2.12

Վայոց ձորի համայնքային եկամուտներն ու ծախսերը՝ ըստ առանձին համայնքների, 2019 թ.


Գծապատկեր 2.12-ից երևում է, որ Վայոց ձորի համայնքներից ինչպես համայնքային եկամուտների, այնպես էլ ծախսերի ցուցանիշով առաջատարը Քերտուկ համայնքն է, որին հաջորդում է Արենին, ինչը պայմանավորված է համայնքում զբոսաշրջային ծառայությունների մեծ ծավալով: Համայնքային եկամուտների մեջ սեփական եկամուտների տեսակարար կշիռը բարձր է Քերտուկ (69.6%), Քաղաքապետարան (54.2%) և Եղեգնաձոր (42.8%) համայնքներում:

Համայնքային եկամուտների ու ծախսերի ցուցանիշները, բնակչության մեկ շնչի հաշվով, ամփոփված են աղյուսակ 2.7-ում և գծապատկեր 2.13-ում:

Տվյալների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այս ցուցանիշների գծով ևս առաջատար են Քաղաքապետարան և Քերտուկ համայնքները:

Վայոց ձորի համայնքային եկամուտներն ու ծախսերը
մեկ շնչի հաշվով, 2019 թ.

Համայնքներ	Մեկ շնչին ընկնող եկամուտ (հազ. ՀՀ դրամ)	Մեկ շնչին ընկնող սեփ. եկամուտ (հազ. ՀՀ դրամ)	Մեկ շնչին ընկնող ծախս (հազ. ՀՀ դրամ)
Արենի	36.7	9.3	38.1
Գլաձոր	30.3	7.2	32.6
Եղեգիս	35.2	7.0	31.8
Եղեգնաձոր	26.0	11.1	23.3
Ջառիթափ	68.8	37.3	61.5
Մալիշկա	30.8	4.5	27.9
Ջերմուկ	45.0	31.3	51.7
Վայք	27.8	8.8	29.0
Ընդամենը	36.3	14.5	36.6



Գծապատկեր 2.13

Վայոց ձորի համայնքային եկամուտներն ու ծախսերը
մեկ շնչի հաշվով, 2019 թ.

Ըստ հավելված 2-ի տվյալների՝ Վայոց ձորի մարզում 2019 թ. կատարվել են շուրջ 2.3 մլրդ ՀՀ դրամի ծախսեր, որից 1.9 միլիարդը (82.6%-ը)՝ վարչական մասով և ընդամենը 547 միլիոնը (17.4%-ը)՝ ֆոնդային մասով:

Վայոց ձորի մարզում 2019 թ. ամենամեծ ծախսերը կատարվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և կրթության ոլորտներում (41% և 24%): Ընդ որում, կրթության ոլորտում ծախսերը կազմել են՝ 434 մլն ՀՀ դրամ վարչական մասով և 74 մլն ՀՀ դրամ ֆոնդային մասով, որից հիմնական մասն ուղղվել է նախադպրոցական կրթությանը (գծապատկեր 2.14):



Գծապատկեր 2.14 | ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների գործառնական ծախսերի հիմնական ուղղությունները, 2019 թ.

Վայոց ձորի մարզի համայնքների բյուջեների գործառնական ծախսերի 2014-2020 թթ. աճի տեմպերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսական հարաբերությունների ոլորտում ծախսերն աճել են 5.63 անգամ, շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերը՝ 2.16 անգամ, կրթության ծախսերը՝ 59%-ով, բնակարանային շինարարության ծախսերը՝ 49%-ով, իսկ սոցիալական պաշտպանության ծախսերը նվազել են 3%-ով:

Անդրադառնալով 2018 թ. Վայոց ձորի մարզում սուրվենցիոն ծրագրերի իրականացման գործընթացին՝ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ բյուջեից հատկացված գումարը կազմել է 120.107.666 ՀՀ դրամ կամ այդ տարում ընդամենը ՀՀ ամբողջ սուրվենցիոն ծրագրերին հատկացված միջոցների 7,41%-ը (աղյուսակ 2.8):

Աղյուսակ 2.8
2018 թ. ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ՀՀ պետական բյուջեից տրամադրված միջոցները Վայոց ձորի մարզում

Համայնք	Սուրվենցիայի ծրագիրը	ՀՀ պետական բյուջեից հատկացված գումար, ՀՀ դրամ
Եղեգնաձոր	Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզի տանիքի նորոգում	2 425 521
Եղեգնաձոր	Մյասիկյան փողոցի լուսավորության անցկացում	2 119 680
Եղեգնաձոր	Պ. Սևակի 2 և Մոմիկի 4 շենքերի բակերի նորոգում	4 183 200
Եղեգնաձոր	Երևանյան խճուղի 7 և Կամոյի 2 շենքերի բակերի նորոգում /1320 քմ ասֆալտապատում/	4 199 040
Ջառիբափ	Մեքենայատրանսպորտային կայանատեղի կառուցում	11 009 000
Մալիշկա	Մալիշկա համայնքի կենտրոնական փողոցի լուսավորություն	4 147 500
Արենի	Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի կառուցում	10 637 659
Արենի	Արփի բնակավայրի մանկապարտեզի 1 խմբասենյակի և խոհանոցի հիմնանորոգում	3 568 000
Արենի	Աղավնաձոր բնակավայրի երեք թաղամասերի կոյուղագծերի և դիտահորերի կառուցում	2 456 866

Եղեգիս	Շատին բնակավայրի գիշերային լուսավորության անցկացում	1 392 000
Եղեգիս	Քարագլուխ և Հերմոն բնակավայրերի ոռոգման խողովակաշարի կառուցում	4 381 200
Եղեգնաձոր	Կողային բեռնավորմամբ աղբատար մեքենայի ձեռք բերում	10 980 000
Գլաձոր	Վերնաշեն բնակավայրի խմելու ջրի ՕԿՋ-ի հիմնանորոգում և տղմագտարանի կառուցում	12 672 000
Ջառիթափ	Գոմք, Արտավան, Բարձրունի, Խնձորուտ, Մարտիրոս, Սերս, Ջառիթափ և Նոր Ազնաբերդ բնակավայրերի խմելու ջրագծերի գլխամասային կառույցների, ջրագծերի ներքին և արտ. ցանցերի կապիտալ վերանորոգման աշխատանքներ	45 936 000
Ընդամենը՝ Վայոց ձոր		120 107 666
Ընդամենը՝ ՀՀ		1 620 693 828

2019 թ. մարզում իրականացված սուբվենցիոն ծրագրերը ներկայացված է աղյուսակ 2.9-ում, ինչի տվյալներից պարզ է դառնում, որ Վայոց ձորի մարզի համայնքների սուբվենցիոն ծրագրերի՝ 2019 թ. ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման գումարը կազմել է 101.375.992 ՀՀ դրամ կամ այդ տարում ընդամենը ՀՀ ամբողջ սուբվենցիոն ծրագրերին հատկացված միջոցների 3,98%-ը:

ՀՀ վարչապետի՝ 2019 թ. մարտի 19-ի թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի՝ 20.06.2019 թ. կայացած 5-րդ նիստի ընթացքում հավանության արժանացած սուբվենցիայի ծրագրերի հայտերի ցանկը Վայոց ձորի մարզում

Աղյուսակ 2.9

Համայնք	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը, ՀՀ դրամ	Համայնքի մասնակցությունը, ՀՀ դրամ	ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումը, ՀՀ դրամ	Այլ ներդրող, ՀՀ դրամ
Գլաձոր	Գլաձոր, Գետափ, Վերնաշեն բնակավայրերի ներքին ճանապարհների խճապատում, բարեկարգում	11 836 500	5 326 425	6 510 075	0
Վայք	Համայնքի կարիքների համար արևային ֆոտովոլտային կայանի կառուցում	15 428 640	6 171 456	9 257 184	0
Եղեգնաձոր	Արսենյան 9 և Միկոյան 13 բնակելի շենքերի բակի նորոգում	18 628 300	8 382 735	10 245 565	0
Եղեգնաձոր	Անդրանիկի փողոցի նորոգում	14 893 200	6 701 940	8 191 260	0
Ընդամենը՝ Վայոց ձոր		60 786 640	26 582 556	34 204 084	0
Ընդամենը՝ ՀՀ		3 057 694 316	1 259 212 598	1 723 503 914	74 977 804

Աղյուսակ 2.10

ՀՀ վարչապետի՝ 2019 թ. մարտի 19-ի թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի՝ 26.06.2019 թ. կայացած 6-րդ նիստի ընթացքում հավանության արժանացած սուրվենցիայի ծրագրերի ցանկը Վայոց ձորի մարզում

Համայնք	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը	Համայնքի մասնակցությունը		ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումը		Այլ ներդրող
			Գումարը	%	Գումարը	%	
Եղեգնաձոր	Համայնքի Լևոնյան և Բաղդասարյան փողոցների լուսավորության ցանցի նորոգում	12 296 000	5 000 000	40,7	7 296 000	59,3	0
Գյաձոր	Գետափի բնակավայրում այլընտրանքային արեվային էներգիայի համակարգի տեղադրում Գետափի մշակույթի տան տանիքին	12 708 000	5 718 600	45,0	6 989 400	55,0	0
Եղեգիս	Շատին բնակավայրի մանկապարտեզի վերանորոգում	42 203 280	16 881 312	40,0	25 321 968	60,0	0
Զատիքափ	Զատիքափ բնակավայրի գազատար ներքին ցանցի կառուցում	45 940 900	18 376 360	40,0	27 564 540	60,0	0
Ընդամենը՝ Վայոց ձոր		113 148 180	45 976 272		67 171 908		0
Ընդամենը՝ ՀՀ		1 627 451 425	802 366 083		822 085 342		3 000 000

2020 թ. սուրվենցիոն ծրագրերի վերլուծությունը վկայում է, որ Վայոց ձորի մարզի համայնքների սուրվենցիոն ծրագրերին 2020 թ. ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման գումարը կազմել է 1.260.100.773 ՀՀ դրամ կամ այդ տարում ընդամենը ՀՀ ամբողջ սուրվենցիոն ծրագրերին հատկացված միջոցների 5,07%-ը (աղյուսակ 2.11):

Աղյուսակ 2.11

ՀՀ վարչապետի՝ 2019 թ. մարտի 19-ի թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2020 թ. հավանության արժանացած սուրվենցիայի ծրագրերի ցանկը

Համայնք	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը, ՀՀ դրամ	Համայնքի մասնակցությունը, ՀՀ դրամ	ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումը, ՀՀ դրամ	Այլ ներդրող, ՀՀ դրամ
Եղեգնաձոր	Սևակի 1, 3, 5 և Միկոյանի 10, 11, 12 բազմաբնակարան բնակելի շենքերով պարփակված բակերի բարեկարգում	40 787 050	18 354 172	22 432 878	0
Եղեգնաձոր	Չարենցի (Ավագյան փողոցից մինչև Թամանցիներ փողոցի խաչմերուկ) և Թամանցիների (Թամանցիներ փողոցից մինչև Թամանցիներ-Բաղդասարյան փողոցների խաչմերուկ) փողոցների նորոգում	16 968 940	7 636 023	9 332 917	0
Եղեգնաձոր	Բաղդասարյան, Կամոյի (Երևանյան խճուղուց մինչև Վ. Գևորգյան), Աթաբեկյան (Մյասնիկյան-Արսենյան խաչ-	21 728 140	8 691 256	13 036 884	0

	մերուկից 280 մ երկարությամբ) փողոցների լուսավորության ցանցի կառուցում				
Եղեգնաձոր	Նոր Ավան թաղամասի լուսավորության ցանցի կառուցում (Այգեձորի փողոց, Այգեձորի 1-ին նրբ., Սյունիքի 1-ին նրբ., Պռոշյան փողոց, Պռոշյան 1-ին և 2-րդ նրբ.)	25 574 600	10 229 840	15 344 760	0
Եղեգնաձոր	Ալավերդյան և Կամոյի փողոցների (Երևանյան խճուղուց մինչև Անդրանիկի փողոց) նորոգում	68 413 220	30 785 949	37 627 271	0
Եղեգնաձոր	Մյասնիկյան փողոցի նորոգում	40 265 460	18 119 457	22 146 003	0
Ջառիթափ	Զատիթափ համայնքի և Սարավան բնակավայրի խմելու ջրագծի և գլխամասային շինությունների կառուցում	109 102 700	38 185 945	70 916 755	0
Ջառիթափ	Մարտիրոս, Սերս և Բարձրունի բնակավայրերի խմելու ջրագծի կառուցում	57 439 800	17 231 940	40 207 860	0
Ջառիթափ	Արտավան բնակավայրի խմելու ջրագծի կապիտալ վերանորոգում, գլխամասային շինությունների կառուցում	45 995 000	16 098 250	29 896 750	0
Ջերմուկ	Ջերմուկ քաղաքի բակային տարածքների և Հերիեր գյուղի 1-ին փողոցի ասֆալտապատում	180 424 160	72 169 664	108 254 496	0
Ջերմուկ	Ջերմուկ քաղաքում ճոպանուղու շինությունների հիմնանորոգում և նորերի կառուցում	89 870 310	49 428 671	40 441 639	0
Ջերմուկ	Մանկական զարգացման կենտրոնի և դրան կից խաղահրապարակի կառուցում, Գնդեվազ համայնքի մանկապարտեզի մասնաշենքի մասնակի վերանորոգում և մանկապարտեզների բակի բարեկարգում	76 273 160	26 695 606	49 577 554	0
Ջերմուկ	Կեչուտ, Գնդեվազ, Հերիեր և Կարմրաշեն գյուղական բնակավայրերում արտաքին լուսավորության ցանցի կառուցում, գործող լուսավորության ցանցում էներգախնայող լուսատուների տեղադրում	84 172 650	29 460 428	54 712 222	0
Ջերմուկ	Ջերմուկ քաղաքում մինչև 300 ԿՎ/ժ հզորությամբ ֆոտովոլտային կայանի կառուցում	138 847 740	48 596 710	90 251 030	0
Մալիշկա	Մալիշկա համայնքի ներհամայնքային փողոցների մասնակի ասֆալտապատում	49 764 000	22 393 800	27 370 200	0
Արենի	Արենի համայնքի Արենի, Ելիին, Ռինդ, Աղավնաձոր բնակավայրերում հակակարկտային 6 կայանների կառուցում	12 600 000	5 775 000	6 825 000	0
Արենի	Արենի համայնքի Արենի բնակավայրում մեքենատրակտորային պարկի կառուցում, Ագարակաձոր բնակավայրում մշակույթի տան հիմնանորոգում, Արփի բնակավայրում մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոնի կառուցում, նախ	90 818 720	50 218 982	40 599 738	0

	կին ճաշարանի շենքի չնորոգված մասի հիմնանորոգում				
Արենի	Արենի համայնքի Ագարակա-ձոր, Ելփին, Խաչիկ, Ռինդ բնակավայրերի ռոռոգման ջրագծերի կառուցում	143 404 176	44 191 991	99 212 185	0
Արենի	Արենի համայնքի Աղավնաձոր, Արենի, Ելփին, Չիվա, Խաչիկ, Ռինդ, Արփի, Գնիշիկ բնակավայրերում խմելու ջրի կապտաձևների և ջրագծերի կառուցում, կոյուղագծերի կառուցում Աղավնաձոր բնակավայրում	208 580 027	64 590 947	143 989 080	0
Եղեգիս	Եղեգիս համայնքի ռոռոգման խողովակաշարի կառուցում	165 883 470	41 755 080	112 482 580	11 645 810
Եղեգիս	Խմելու ջրի խողովակաշարի կառուցում և վերանորոգում, ՕԿՋ-ների վերանորոգում	37 914 610	13 270 110	24 644 500	0
Եղեգիս	Մանկապարտեզի վերանորոգման աշխատանքներ	53 414 557	21 365 822	32 048 735	0
Գյաձոր	Գյաձոր բնակավայրում ցամաքուղի կառուցում և Վերնաշեն բնակավայրում ջրաչափական հորերի և գլխամասային շինությունների վերակառուցում	70 434 280	24 651 998	45 782 282	0
Գյաձոր	Գյաձոր բնակավայրում մշակույթի տան դահլիճի վերակառուցում՝ մշակույթային միջոցառումների իրականացման համար	108 772 170	16 315 826	70 701 910	21 754 434
Մալիշկա	Մալիշկա համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացում	13 939 530	5 575 800	8 363 730	0
Մալիշկա	Արենի համայնքի Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի բնակավայրերում թվով 14 փողոցների գազատարի ներքին ցանցերի կառուցում և երեք մանկապարտեզների գազաֆիկացում	40 714 800	16 285 920	24 428 880	0
Գյաձոր	Գյաձոր բնակավայրի որոշ փողոցների գազաֆիկացման համալրում, Գյաձորի մշակույթի տան և Վերնաշենի մանկապարտեզի գազաֆիկացում	32 454 890	12 981 956	19 472 934	0
Ընդամենը՝ Վայոց ձոր		2 024 558 160	731 057 143	1 260 100 773	33 400 244
Ընդամենը՝ ՀՀ		44 779 808 269	17 467 029 646	24 849 365 511	2463 412 968

Ինչպես ցույց են տալիս աղյուսակների տվյալները, 2018 թ. սուրվենցիոն ծրագրեր իրականացվել են Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Զառիթափ, Մալիշկա, Արենի, Եղեգիս և Գյաձոր, 2019 թ.՝ Գյաձոր, Վայք, Եղեգնաձոր, Եղեգիս և Զառիթափ, իսկ 2020 թ.՝ Եղեգնաձոր, Զառիթափ, Ջերմուկ, Մալիշկա, Արենի, Եղեգիս և Գյաձոր համայնքներում:

Հերագորություն շրջանակում համայնքային մեթոդով իրականացվել է Վայոց ձորի համայնքների սուրվենցիոն հարկացումների արդյունավետության հաշվարկը:

Ինչպես գիտենք, համայնքային բյուջեի ծախսերը կատարվում են բյուջեի ինչպես սեփական, այնպես էլ այլ միջոցների, մասնավորապես՝ սուրվեն-

ցիոն հատկացումների հաշվին: Համաթվային մեթոդի կիրառմամբ գնահատենք սուրվենցիոն հատկացումների արդյունավետությունը՝ կախված 1 շնչին ընկնող ծախսերի և սուրվենցիոն հատկացումների մեծությունից:

Նախ կատարենք հետևյալ նշանակումները.

U_0 և U_1 –ը սուրվենցիոն հատկացումներն են 1 շնչի հաշվով 2018 և 2019 թթ.,

D_0 և D_1 –ը՝ համայնքային բյուջեի փաստացի ծախսերը 1 շնչի հաշվով 2018 և 2019 թթ.,

d_0 և d_1 –ը՝ սուրվենցիոն հատկացումների տեսակարար կշիռը ծախսերի մեջ 2018 և 2019 թթ.:

Վերոնշյալ ցուցանիշների միջև գոյություն ունի հետևյալ փոխադարձ կապը՝ 1 շնչին ընկնող սուրվենցիոն հատկացումները հավասար են ծախսերի մեջ սուրվենցիոն հատկացումների մասնաբաժնի (սուրվենցիոն հատկացումների արդյունավետության) և 1 շնչին ընկնող ծախսերի ցուցանիշների արտադրյալին:

$$\frac{\text{Սուրվենցիոն հատկացումներ}}{\text{Բնակչության թիվ}} = \frac{\text{Սուրվենցիոն հատկացումներ}}{\text{Ծախսեր}} \cdot \frac{\text{Ծախսեր}}{\text{Բնակչության թիվ}}$$

Նույն կապը կարելի է արտահայտել նաև դրանց համաթվերի միջոցով.

$$I_{\text{սուրվենց.}} = I_d \cdot I_{\text{ծ/1շնչ.}}$$

Համաթվերի հաշվարկման համար օգտվենք աղյուսակ 2.12-ի տվյալներից:

Վայոց ձորի համայնքների բյուջետային ծախսերի և սուրվենցիոն հատկացումների ցուցանիշները 2018-2019 թթ.³⁹

Աղյուսակ 2.12

	Սուրվենցիաներ (հազ. ՀՀ դրամ)		Ծախսեր (հազ. ՀՀ դրամ)		Սուրվենցիաներ 1 շնչի հաշվով (հազ. ՀՀ դրամ)		Սուրվենցիոն հատկացումների տեսակարար կշիռը ծախսերի մեջ		Ծախսերը 1 շնչի հաշվով (հազ. ՀՀ դրամ)	
	2018	2019	2018	2019	2018	2019	2018	2019	2018	2019
Համայնքներ										
Արենի	16662.53	0.00	379053.14	449,327.45	1.46	0	0.044	0.000	33.2	39.4
Գյաձոր	12672.00	13499.48	164299.76	206,746.09	2.04	2.17	0.077	0.065	26.4	33.3
Եղեգիս	5773.20	25321.97	163458.89	221,016.95	0.90	3.94	0.035	0.115	25.4	34.4
Երեզնի	23907.44	25732.83	254254.88	228,167.97	2.45	2.63	0.094	0.113	26.0	23.4
Ջառիթաի	56945.00	27564.54	376420.80	266,274.65	13.82	6.69	0.151	0.104	91.4	64.6
Մայիշկա	4147.50	0.00	116559.29	138,841.85	0.84	0.00	0.036	0.000	23.7	28.3
Ջերմուկ	0.00	0.00	460846.19	592,089.55	0.00	0.00	0.000	0.000	49.7	63.8
Վայք	0.00	9257.18	212750.22	241,779.92	0.00	1.04	0.000	0.038	23.9	27.2
Ընդամենը	120107.67	101375.99	2127643.17	2,344,244.43	1.97	1.66	0.056	0.043	34.9	38.4

Այժմ համաթվային վերլուծության մեթոդով գնահատենք սուրվենցիոն հատկացումների շարժընթացը Վայոց ձորի համայնքներում 2018-2019 թթ. և որոշենք գործոնների ազդեցության չափը վերջինիս փոփոխության վրա:

³⁹ <http://vdzor.mtad.am/community-budgetary-revenues/>, <http://vdzor.mtad.am/community-budgetary-expenditure/>

$$I_{\text{unip}/12\text{գ.}} = \frac{\sum \mathbf{U}_1}{\sum \mathbf{U}_0} = \frac{\sum \mathbf{\sigma}_1 d_1}{\sum \mathbf{\sigma}_0 d_0} = 0.844 = 1.102 \cdot 0.766$$

$$I_{\mathbf{\sigma}/12\text{գ.}} = \frac{\sum \mathbf{\sigma}_1 d_0}{\sum \mathbf{\sigma}_0 d_0} = 1.102$$

$$I_d = \frac{\sum \mathbf{\sigma}_0 d_1}{\sum \mathbf{\sigma}_0 d_0} = 0.766$$

Համաթվային վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ Վայոց ձորի համայնքներում 2018-2019 թթ. կատարված սուրվենցիոն հատկացումները 1 շնչի հաշվով նվազել են 15.6%-ով, այդ թվում՝

- ա)** 1 շնչին ընկնող ծախսերի մեծացման հաշվին, ինչպես բխում է բանաձևից, սուրվենցիոն հատկացումներն ավելացել են 10.2%-ով,
- բ)** ծախսերի մեջ սուրվենցիոն հատկացումների մասնաբաժնի (սուրվենցիոն հատկացումների արդյունավետության) կրճատման հաշվին, ինչպես բխում է բանաձևից, սուրվենցիոն հատկացումները նվազել են 23.4%-ով:

Այստեղից էլ ծագում է Վայոց ձորում միջհամայնքային համագործակցության ձևավորման անհրաժեշտությունը, ինչը կհանգեցնի ծախսերի կրճատմանը և սուրվենցիոն հատկացումների արդյունավետության բարձրացմանը:

2.3

Միջհամայնքային համագործակցության գերակա խնդիրները և նախընտրելի լուծումները

Առաջնային տվյալների հավաքագրման մեթոդաբանությունը

Ելնելով հետազոտության հիմնական նպատակից ու առաջադրված խնդիրներից՝ մշակվել և հետազոտության համար առցանց եղանակով իրականացվել է հարցում՝ նվիրված Վայոց ձորի համայնքներում առկա հիմնախնդիրների և միջհամայնքային համագործակցության հնարավորությունների ուսումնասիրմանը:

Հարցումն իրականացվել է Google forms առցանց գործիքի օգնությամբ, որում նախօրոք մշակված հարցաթերթիկի հղումն ուղարկվել է Վայոց ձորի մարզի համայնքների թիրախային խմբերին՝ ներկայացնելով նաև հետազոտության հիմնական նպատակը (հարցաթերթիկը տե՛ս հավելված 1-ում):

Մշակված հարցաթերթիկն իր բնույթով փորձագիտական հարցման (expert interview) համար նախատեսված բաց հարցերի ու փակ հարցերի համակցություն է (semi-structured) և բաղկացած է հինգ հիմնական բաժիններից, որոնք ներկայացվում են գծապատկեր 2.15-ում:



Գծապատկեր 2.15


Հարցաթերթիկի հիմնական բաժինները

Հետազոտության արդյունքների բարելավման ու տվյալների որակի բարձրացման նպատակով ընտրվել է հարցման մասնակիցների որոշակի թիրախային խումբ, որը ներառում է ՀՀ Վայոց ձորի մարզի 8 համայնքների համայնքապետարանների աշխատակիցներին, ավագանու անդամներին, համայնքային ենթակայության ներքո գործող կազմակերպությունների աշխատակիցներին ու ՀԿ ներկայացուցիչներին:

Հավաքագրված տվյալները ենթարկվել են տրամաբանական և որակական ստուգման:

Դաշտային աշխատանքներ ու տվյալների մշակում


Նկարագրված թիրախային խմբի ներկայացուցիչների շրջանակում փորձագիտական հարցումների իրականացման դաշտային աշխատանքները տևել են 103 օր և ընթացել են 2020 թ. հուլիսի 10-ից մինչև հոկտեմբերի 20-ը: Նշված ընթացքում հարցվել է 48 փորձագետ՝ գծապատկեր 2.16-ում ներկայացված համամասնությամբ:



Գծապատկեր 2.16

Հարցմանը մասնակցած թիրախային խմբի կազմը

Ուսումնասիրվել է նաև հարցման մասնակիցների կրթական մակարդակը: Թիրախային խմբի ներկայացուցիչների գերակշիռ մեծամասնությունն (87,5%) ունի բարձրագույն կրթություն, մնացյալը՝ միջանակարգ կամ հետբուհական (գծապատկեր 2.17):




Գծապատկեր 2.17

Հարցմանը մասնակցած թիրախային խմբի անդամների կրթական մակարդակի կառուցվածքը

Հավաքագրված տվյալները ենթարկվել են տրամաբանական և որակական ստուգման, մշակվել են SPSS ծրագրային փաթեթի շրջանակում: Տվյալների ներկայացումն ու պատկերումն իրականացվել է MS excel-ի օգնությամբ:

Արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն

Վայոց ձորի 8 համայնքների աշխատակիցների, ավագանու անդամների, համայնքային ենթակայությամբ գործող կազմակերպությունների աշխատակիցների ու ՀԿ-ների ներկայացուցիչների շրջանում իրականացված փորձագիտական հարցման արդյունքների վերլուծությունը վկայում է, որ միջհամայնքային համագործակցության ու դրա փորձի վերաբերյալ իմացությունը նշված շրջանակում այդքան էլ բարձր չէ: Միջհամայնքային համագործակցության տարբեր ձևերի վերաբերյալ իմացության չափումը ներկայացվում է գծապատկեր 2.18-ում ամրագրված արդյունքներով:




Գծապատկեր 2.18

Միջհամայնքային համագործակցության ձևերը

Միաժամանակ, հարցվածների 70.2%-ը կա՛մ տեղյակ չէ, կա՛մ դժվարանում է պատասխանել, թե իրենց համայնքն ունի արդյոք միջհամայնքային համագործակցության փորձ: Հատկանշական է, որ հարցմանը մասնակցած

համայնքապետարանների 30 աշխատակիցների 76.7%-ը տեղյակ չէ կամ դժվարանում է պատասխանել միջհամայնքային համագործակցության վերաբերյալ իրենց համայնքի փորձի մասին հարցին (գծապատկեր 2.19):



Գծապատկեր 2.19

Միջհամայնքային համագործակցության փորձի առկայության մասին


Համագործակցության արդյունավետությունը գնահատելու համար փորձագետները 1-3 բալանոց սանդղակով գնահատել են դրա նկատմամբ իրենց ընկալումները, որի արդյունքները ներկայացված են գծապատկեր 2.20-ում:



Գծապատկեր 2.20

Համագործակցությունը և դրա արդյունավետությունը համայնքային զարգացման գործընթացում


Համայնքային համագործակցության հետագա հնարավորությունների բացահայտման նպատակով փորձագիտական շրջանակի կողմից գնահատվել է նաև ՏԻՄ-երում համագործակցության որոշումների ընդունման պատրաստակամության աստիճանը: Գնահատման համար ընտրվել է 1-5 բալանոց սանդղակ, որտեղ 5-ը նշանակում է «Լիովին տեղեկացված են», իսկ 1-ը՝ «Ընդհանրապես տեղեկացված չեն»: Համաձայն ստացված արդյունքների վերլուծության՝ փորձագետների 85.1%-ի կարծիքով՝ Վայոց ձորի տեղական իշխանությունները լիովին կամ մեծով մասամբ պատրաստ են ընդունել միջհամայնքային համագործակցության մասին որոշումներ: **Սա մեկնարկային կարևոր կետ է,** որը կարող է հիմք ծառայել զարգացման հետագա հնարավորությունների ու առաջարկների ներկայացման համար:



Գծապատկեր 2.21

Միջհամայնքային համագործակցության մասին համայնքների՝ որոշումներ ընդունելու պատրաստակամության աստիճանի գնահատումը

Իրավիճակն այլ է փորձագիտական շրջանակի տեղեկացվածության մակարդակի առնչությամբ: Թեև գերակշիռ մեծամասնությունը մեծ պատրաստակամություն ունի՝ սկսելու միջհամայնքային համագործակցության ծրագրեր, այնուամենայնիվ, առկա է տեղեկացվածության որոշակի խնդիր, որն ակնհայտ է դառնում միջհամայնքային համագործակցության մասին համայնքների տեղեկացվածության աստիճանի չափմամբ (գծապատկեր 2.22):




Գծապատկեր 2.22

Համայնքների տեղեկացվածության աստիճանը միջհամայնքային համագործակցության մասին

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցվածների 57,4%-ն առավելապես հակված է այն մտքին, որ համայնքներում այս կամ այն չափով գոյություն ունի տեղեկացվածության հիմնախնդիր, որն արտահայտվում է նաև առկա համագործակցության փաստացի ցածր մակարդակով:

Միևնույն ժամանակ, թիրախային խմբի ներկայացուցիչները գերազանցապես համոզված են, որ իրենց համայնքները հիմնականում ֆինանսապես ապահովված են (գծապատկեր 2.23):




Գծապատկեր 2.23

Համայնքների ֆինանսական ապահովվածության փորձագիտական գնահատումը


Համայնքներում համագործակցության պատրաստականության բարձր աստիճանին ու տեղեկացվածության ցածր մակարդակին զուգահեռ անհրաժեշտ ենք համարել նաև բացահայտել առկա շարժառիթները (ըստ փորձագետների), որոնք կարող են ազդել համագործակցության հետագա կայացման վրա: Մասնավորապես, հետազոտությամբ պարզվել է, որ հարցվածների շրջանում համագործակցության համար կարևոր են հատկապես նյութական (87.2%) և վարչական (61.7%) շարժառիթները (գծապատկեր 2.24):

Վայոց ձորի մարզի համայնքների փորձագետները, իրենց մարզում իրականացված համայնքների խոշորացման ծրագրերի արդյունավետության մասով, ունեն ոչ միանշանակ դիրքորոշում: Նրանց ընդամենը 38,3%-ն է կարծում, որ իրականացված խոշորացման ծրագրերը ստացված ու արդյունավետ են (գծապատկեր 2.24):



Գծապատկեր 2.24


Համայնքում ծագած խնդիրները համատեղ լուծելու շարժառիթները՝ ըստ հարցվողների գնահատման



Գծապատկեր 2.25


Համայնքների խոշորացման գործընթացը և դրա արդյունավետության գնահատումը

Այնուամենայնիվ, համայնքներում իրականացված խոշորացման ծրագրերի մասով հարցվողների կողմից ներկայացվել են որոշ դրական արդյունքներ, որոնք խմբավորվել են գծապատկեր 2.26-ում:




Գծապատկեր 2.26 | Համայնքների խոշորացումից ստացված արդյունքների գնահատումը

Հարցվողները նաև մատնանշել են այն հիմնական խնդիրները, որոնք առկա են համայնքներում ու խոչընդոտում են զարգացումը, որոնցում հատուկ շեշտադրում են համայնքի բնակչության ակտիվության ու մասնակցության ցածր մակարդակը (գծապատկեր 2.27):



Գծապատկեր 2.27 | Համայնքային խնդիրների լուծման խոչընդոտները՝ ըստ հարցվողների

Առկա խնդիրներն ու խոչընդոտները լուծելու ճանապարհին համայնքի փորձագետները մատնանշում են համայնքում առկա մարդկային ու ֆինանսական ռեսուրսներն օգտագործելու որոշակի հնարավորություն: Մասնավորապես, նրանց 68.9%-ը կարծում է, որ համայնքի խնդիրները մասամբ պատրաստ են լուծել համայնքի բնակչության ուժերով, իսկ 20%-ը կարծում է, որ դրանք լիովին հնարավոր է լուծել համայնքի բնակչության ուժերով (գծապատկեր 2.28):



Գծապարկեր 2.28

Համայնքային խնդիրները համայնքի բնակչության ուժերով լուծելու պատրաստակամությունը


Փորձագետները միակարծիք են, որ միջհամայնքային համագործակցության զարգացման համար առկա է համայնքային ծառայողների վերապատրաստման անհրաժեշտություն (գծապատկեր 2.29):



Գծապարկեր 2.29

Միջհամայնքային համագործակցության զարգացման համար համայնքային ծառայողների վերապատրաստման անհրաժեշտության գնահատումը

Վայոց ձորի համայնքներում առկա ենթակառուցվածքների ներկա վիճակի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա փորձագետները կատարել են իրենց գնահատումները՝ օգտագործելով 1-5 բալանոց սանդղակ, որտեղ 5-ը նշանակում է գերազանց, իսկ 1-ը՝ անբավարար (գծապատկեր 2.30):




Գծապարկեր 2.30

Համայնքային ենթակառուցվածքների վիճակի գնահատումը 1-5 բալանոց սանդղակով

Համայնքներում առկա խնդիրների, խոչընդոտների, միջհամայնքային համագործակցության ծրագրերի իմացությանը, դրանց նկատմամբ հետաքրքրության մակարդակի գնահատմանը զուգահեռ անհրաժեշտ ենք հա-

մարել նաև ուսումնասիրել, թե որոնք են համայնքներում սուրվենցիոն ծրագրերին մասնակցության ցածր մակարդակի պատճառները ու հնարավոր խոչընդոտները:


ՀՀ Կառավարության հայտարարած (ՀՀ Կառավարության 2019 թ. հունվարի 31-ի N62-Ն որոշումը) սուրվենցիոն ծրագրերին մասնակցության հայտ է ներկայացրել հարցման մասնակիցների 59,6%-ը: Ընդ որում, այն հարցվողները, որոնք չեն մասնակցել սուրվենցիոն ծրագրերին, նշել են նաև չմասնակցելու հիմնական գործոնները (գծապատկեր 2.31):



Գծապատկեր 2.31

ՀՀ Կառավարության կողմից հայտարարված սուրվենցիոն ծրագրերին մասնակցելու հայտերի մասին հարցման արդյունքները


Պատճառներում առավել հաճախ է ընդգծվել տեղեկատվության (37.5%) և մասնագիտական ռեսուրսների (25%) պակասը (գծապատկեր 2.32):



Գծապատկեր 2.32

Սուրվենցիոն ծրագրերին չմասնակցելու պատճառները

Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այն փաստին, որ այն համայնքները, որոնք մասնակցել են ՀՀ Կառավարության հայտարարած սուրվենցիոն ծրագրերին, ներկայացրել են մեկ կամ ավելի ծրագիր, այս կամ այն չափով ստացել են ֆինանսավորում (գծապատկեր 2.33):

**Գծապատկեր 2.33**


Ներկայացված հայտի/հայտերի բավարարումը

Ֆինանսավորում է ստացել հայտ ներկայացրած համայնքների 96.4%-ը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացված ծրագրերի մի մասը կամ բոլորը մերժվել են, հայտ ներկայացնողների համար լիովին հասկանալի են եղել հայտի մերժման պատճառները (գծապատկեր 2.34):

**Գծապատկեր 2.34**


Զֆինանսավորված հայտերի խնդիրների/թերությունների ընկալումը

Փորձագետների կողմից գնահատվել են, թե միջհամայնքային համագործակցության զարգացումը խոչընդոտող հիմնական գործոնները որոնք են: Դրանցում առավել հաճախ նշվել են նախաձեռնողականության բացակայությունը (71.7%) և ֆինանսական միջոցների պակասը (69.6%) (գծապատկեր 2.35):

**Գծապատկեր 2.35**

Միջհամայնքային համագործակցության զարգացումը խոչընդոտող հիմնական պատճառները

Միջհամայնքային համագործակցության ձևի ընտրության վրա ազդող գործոնների վերլուծությունը, ըստ փորձագետների, հանգում է գծապատկեր 2.36-ում ներկայացված հիմնական պատճառներին:




Գծապարկեր 2.36

Միջհամայնքային համագործակցության կոնկրետ ձևի ընտրությունը պայմանավորող գործոնների խմբերը

Միջհամայնքային համագործակցության ուղղությամբ փորձագետներն առավել հաճախ առաջարկում են զբոսաշրջային հնարավորությունների, կոոպերատիվների, գործարանների, համատեղ ջրամատակարարման ցանցերի ստեղծումն ու աղբահանության կազմակերպումը:


Նույն համատեքստում, ըստ փորձագետների, ամենամեծ խոչընդոտներն են տեղեկատվության պակասը, ֆինանսական հնարավորությունների սահմանափակումը, տրանսպորտային, ճանապարհային խնդիրները, ինչպես նաև որոշումների ընդունման գործում երիտասարդների ներգրավվածության ցածր աստիճանն ու փորձի փոխանակման անհրաժեշտությունը (գծապարկեր 2.37):



Գծապարկեր 2.37

Միջհամայնքային համագործակցության հնարավոր նոր ձևերը վայոց ձորի համայնքներում, դրանց ներդրման խոչընդոտները

Առանձնակի ուշադրության է արժանի փորձագետների կողմից համայնքներում առկա խնդիրների բարձրաձայնումը: Հնչեցված խնդիրները դասակարգվել են երեք խոշոր խմբերում: Դրանց հնչեցման հաճախականությունը ներկայացված է գծապատկեր 2.38-ում:



Գծապատկեր 2.38

Վայոց ձորի համայնքների երեք կարևոր հիմնախնդիրները

Այս շարքում հատկապես սուր են դրված ենթակառուցվածքային հիմնախնդիրները, որոնք առավելապես հանգում են խմելու և ոռոգման ջրերի, կոյուղաջրերի խողովակաշարերի հիմնանորոգմանը, աղբահանությանը, միջհամայնքային ճանապարհների վերանորոգմանն ու գազաֆիկացմանը: Համայնքներում լուրջ խնդիրներ են արձանագրվում նաև բնակչության ներգրավվածության ու երիտասարդների առօրյայի կազմակերպման, մշակութային զարգացման գործընթացներում: Միաժամանակ, ենթակառուցվածքային ու մասնակցային խնդիրներին զուգահեռ, շարունակում են արդիական մնալ զբաղվածության և սոցիալական ապահովության մակարդակի բարձրացման հիմնախնդիրները:

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ**

**3.1 Համայնքային կլաստերների ձևավորումը
և տարածքային զարգացման ներուժի
գնահատումը**

**3.1.1 Վայոց ձորի մարզի կլաստերային և գործնային
վերլուծության արդյունքները**

ՀՀ տնտեսության ժամանակակից միտումները գնահատելու համար անհրաժեշտ է տարածքային մոտեցում: Թեև վերջին տասնամյակներում ՀՀ-ում տարածքային տնտեսական քաղաքականության իրականացման համար ստեղծվել են որոշակի նախադրյալներ, մշակվել և կենսագործվում են տարաբնույթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, այդուհանդերձ, տարածքային զարգացման անհամաչափությունները շարունակում են խորանալ:

ՀՀ Վայոց ձորի համայնքների զարգացման անհամաչափության ուսումնասիրությունն իրականացվել է բազմաչափ վիճակագրական մեթոդներով:

Հաշվի առնելով տարածքային և տնտեսական կայուն զարգացման կարևորությունը՝ սույն վերլուծությունն ուղղված է Վայոց ձորի մարզի տարածքային զարգացման անհամաչափության գործոնների բացահայտմանը, բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը, տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը և մարզի համայնքների առաջնահերթ հիմնախնդիրների ու մարտահրավերների արդյունավետ լուծմանը՝ միջհամայնքային համագործակցության շրջանակում:

Վայոց ձորի համայնքների զարգացման անհամաչափությունն ուսումնասիրվել է բազմաչափ վիճակագրության երկու՝ գործոնային և կլաստերային վերլուծության մեթոդներով: Գործոնային վերլուծությունն ուսումնասիրվող փոփոխականների զանգվածը բաժանում է փոքր թվով խմբերի, այսինքն՝ տվյալների ոչ համակարգված զանգվածը վերածում է մի քանի մակրոփոփոխականների, որոնք էլ առավել համակարգված նկարագրում են ուսումնասիրվող օբյեկտի տարրեր բնութագրիչները:

Կլաստերային վերլուծությունը սոցիալ-տնտեսական երևույթների բազմաչափ հետազոտության մեթոդներից է: Այն օբյեկտների դասակարգման գործընթացում առավել ակնհայտ կերպով է արտացոլում բազմաչափության

գծերը: Կլաստերային վերլուծության գլխավոր նպատակը մի շարք հատկանիշներով բնութագրվող օբյեկտների բազմության բաժանումն է որոշակի իմաստով համասեռ խմբերի (կլաստերների): Սա նշանակում է, որ լուծվում է տվյալների դասակարգման և դրանցում համապատասխան կառուցվածքի բացահայտման խնդիրը:

Բազմաչափ վերլուծության համար ընտրվել են հետևյալ ցուցանիշները, որոնց վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 3.1-ում.

1. արդյունաբերական արտադրանքի ծավալը մեկ շնչի հաշվով (հազ. ՀՀ դրամ) (X_1),
2. գյուղատնտեսության համախառն արտադրանքը մեկ շնչի հաշվով, հազ. ՀՀ դրամ (X_2),
3. մանրածախ առևտրի շրջանառությունը մեկ շնչի հաշվով, հազ. ՀՀ դրամ (X_3),
4. ծառայությունների ծավալը մեկ շնչի հաշվով, հազ. ՀՀ դրամ (X_4),
5. կենսաթոշակառուների թվաքանակը 1000 բնակչի հաշվով, մարդ (X_5),
6. բժիշկների թվաքանակը 10000 բնակչի հաշվով (X_6),
7. մեկ բնակչին ընկնող բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (քառ. մ) (X_7),
8. մեկ շնչին ընկնող եկամուտը (հազ. ՀՀ դրամ) (X_8),
9. մեկ շնչին ընկնող սեփական եկամուտը, հազ. ՀՀ դրամ (X_9),
10. մեկ շնչին ընկնող ծախսեր (հազ. ՀՀ դրամ) (X_{10}),
11. սուբվենցիաները մեկ շնչի հաշվով (հազ. ՀՀ դրամ) (X_{11}):

Վայոց ձորի համայնքների սոցիալ-տնտեսական որոշ փոփոխականներ, 2018 թ.⁴⁰

Աղյուսակ 3.1

Համայնքներ	X_1	X_2	X_3	X_4	X_5	X_6	X_7	X_8	X_9	X_{10}	X_{11}
Արենի	424.1	407.3	126.8	151.6	117.0	21.0	26.5	32.0	8.3	33.2	19.0
Գլաձոր	382.7	233.2	114.4	136.8	139.2	34.3	45.4	28.9	6.1	26.4	19.4
Եղեգիս	370.3	391.1	110.7	132.4	186.5	20.2	5.4	27.9	5.5	25.4	21.5
Եղեգնաձոր	337.7	22.6	101.0	120.8	208.4	31.6	22.0	25.5	9.4	26.0	13.1
Ջառիթափ	390.3	254.6	126.0	124.1	136.8	25.1	49.0	74.7	39.4	91.4	20.3
Մալիշկա	342.8	197.9	102.5	122.6	140.0	32.9	44.7	25.9	3.4	23.7	21.7
Ջերմուկ	648.8	322.0	194.0	232.0	146.4	25.5	27.9	49.0	36.1	49.7	10.7
Վայք	332.7	198.6	119.5	119.0	126.7	28.9	32.0	25.1	10.1	23.9	14.0

*Փոփոխականները հաշվարկել են հեղինակները:

⁴⁰ Աղբյուրը՝ <http://vdzor.mtad.am/Hamaynqian/>, <http://vdzor.mtad.am/community-budgetary-revenues/>,
<http://vdzor.mtad.am/community-budgetary-expenditure/>,
<https://www.armstat.am/am/?nid=732tps://>

Նշենք, որ արդյունաբերության, գյուղատնտեսության, մանրածախ ապրանքաշրջանառության և ծառայությունների ցուցանիշների գծով տվյալներն ըստ համայնքների բացակայում են, այդ իսկ պատճառով կատարվել է այդ արժեքների մոտարկում՝ հաշվի առնելով համայնքային բյուջեով նախատեսված ծախսերն այդ ոլորտներում: Համայնքներից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը բազմապատկելով ամբողջ մարզի համապատասխան ամփոփ ցուցանիշով՝ ստացվել են անհրաժեշտ համայնքային ցուցանիշները:

Հետազոտությունն իրականացվել է SPSS ծրագրային փաթեթի միջոցով⁴¹ կիրառելով գործոնային վերլուծության և կլաստերային մեթոդները:

Աղյուսակ 3.2-ում բերված են գործոնային վերլուծության սկզբնական վիճակագրությունները⁴²:

Ընդհանուր վարիացիայի տրոհումը (Total Variance Explained)

Աղյուսակ 3.2

Component	Initial Eigenvalues			Extraction Sums of Squared Loadings			Rotation Sums of Squared Loadings		
	Total	% of Variance	Cumulative %	Total	% of Variance	Cumulative %	Total	% of Variance	Cumulative %
1	4.893	44.483	44.483	4.893	44.483	44.483	3.694	33.586	33.586
2	2.936	26.695	71.178	2.936	26.695	71.178	3.390	30.820	64.406
3	1.616	14.687	85.866	1.616	14.687	85.866	2.093	19.024	83.430
4	1.321	12.013	97.879	1.321	12.013	97.879	1.589	14.449	97.879
5	.154	1.401	99.279						
6	.070	.639	99.919						
7	.009	.081	100.000						
8	1.002E-013	1.021E-013	100.000						
9	1.001E-013	1.013E-013	100.000						
10	1.000E-013	1.001E-013	100.000						
11	-1.001E-013	-1.009E-013	100.000						

Extraction Method: Principal Component Analysis

Ըստ աղյուսակ 3.2-ի՝ վերլուծության համար ընտրվել է չորս գործոն. առաջինը բացատրում է ընդհանուր դիսպերսիայի 44.5%-ը, երկրորդը՝ 26.7%-ը, երրորդը՝ 14.7%-ը, չորրորդը՝ 12%-ը, իսկ չորս գործոնները միասին՝ ընդհանուր դիսպերսիայի 97.9%-ը:

Գործոնային վերլուծության արդյունքների մեկնաբանման հաջորդ քայլը գործոնային գործակիցների շրջված մատրիցի (Rotated Component Matrix) դիտարկումն է: Տվյալ աղյուսակը գործոնային վերլուծության հիմնական արդյունքն է, որում ըստ գործոնների արտահայտվում են փոփոխականների դասակարգման ցուցանիշները:

⁴¹ Տե՛ս Անգիալ-տնտեսական ցուցանիշների գնահատումը Հայաստանում SPSS փաթեթի կիրառմամբ, Հետազոտական աշխատանք, ՀՊՏՀ, Եր., «Տնտեսագետ», 2016:

⁴² Տե՛ս Дронов С.В., Многомерный статистический анализ, Учебное пособие. Барнаул: Изд-во Алт. гос. ун-та, 2003:

Ինչպես երևում է աղյուսակ 3.3-ից, ուսումնասիրվող 11 փոփոխականները դասակարգվել են ըստ չորս գործոնի, ընդ որում՝ առաջինում և երկրորդում ընդգրկվել է 4-ական, երրորդում՝ 2, իսկ չորրորդում՝ 1 փոփոխական:

Բաղադրիչների շրջված մատրիցը (Rotated Component Matrix)

Աղյուսակ 3.3

Ցուցանիշներ	Component			
	1	2	3	4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը մեկ շնչի հաշվով, հազ. ՀՀ դրամ	.142	.970	-.161	.032
Գյուղատնտ. համախառն արտադրանքը մեկ շնչի հաշվով, հազ. ՀՀ դրամ	-.004	.872	-.377	.321
Ծառայությունների ծավալը մեկ շնչի հաշվով, հազ. ՀՀ դրամ	-.001	.981	-.156	.016
Մեկ շնչին ընկնող եկամուտ, հազ. ՀՀ դրամ	.951	.258	-.085	.113
Մեկ շնչին ընկնող սեփ. եկամուտ, հազ. ՀՀ դրամ	.819	.554	.006	-.003
Մեկ շնչին ընկնող ծախսեր, հազ. ՀՀ դրամ	-.977	.168	-.074	.103
Սուրվենցիաները մեկ շնչի հաշվով, հազ. ՀՀ դրամ	.936	-.243	-.041	.166
Մանրածախ առևտրի շրջանառությունը մեկ շնչի հաշվով, հազ. ՀՀ դրամ	.201	.955	-.151	.098
Կենսաթոշակատուների թվաքանակը 1000 բնակչի հաշվով	-.102	-.121	.159	-.956
Բժիշկների թվաքանակը 10000 բնակչի հաշվով	-.222	-.138	.943	.158
Մեկ բնակչին ընկնող բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը, քառ. մ	.410	-.082	.568	.697

Առաջին գործոնը պայմանականորեն անվանենք «ֆինանսական», քանի որ դրանում ներառված են մեկ շնչին ընկնող եկամուտը (0.951), սեփական եկամուտը (0.819), ծախսերը (-0.977) և սուրվենցիաները (0.936) բնութագրող փոփոխականները:

Երկրորդ գործոնն անվանենք «տնտեսական», քանի որ այն ներառում է մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը (0.970), գյուղատնտեսության համախառն արտադրանքը (0.872), ծառայությունների ծավալը (0.981) և մանրածախ առևտրաշրջանառությունը (0.955):

«Սոցիալական» անվանումը կրող երրորդ գործոնը ներառում է երկու փոփոխական՝ բժիշկների թվաքանակը 10000 բնակչի հաշվով (0.943) և մեկ բնակչին ընկնող բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (0.568):

Չորրորդ գործոնը, որն անվանել ենք «ժողովրդագրական», ներառում է մեկ փոփոխական՝ կենսաթոշակատուների թիվը 1000 բնակչի հաշվով (-0.956):

Աղյուսակ 3.4-ի տվյալները վկայում են, որ Վայոց ձորի համայնքների տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն է թողնում ծառայությունների ծավալը, որի կոռելյացիայի գործակիցը գործոն 2-ի հետ կազմում է 0.981, երկրորդը, ըստ ազդեցության, արդյունաբերական արտադրանքի ծավալն է՝ կոռելյացիայի 0.970 գործակցով: Համայնքների սոցիալ-տնտեսա-

կան զարգացման գործում էական նշանակություն ունեն նաև ֆինանսական ցուցանիշները, որոնց կոռելյացիայի գործակիցները նույնպես բավականին բարձր են:

Գործոնների արժեքները, ըստ մարզի 8 խոշորացված համայնքների, ներկայացված են աղյուսակ 3.4-ում: Տվյալները վկայում են, որ ֆինանսական գործոնով առաջատար են Ջերմուկ և Զատիթափ համայնքները, տնտեսական ցուցանիշով ընդգծված առաջատար է Ջերմուկը, սոցիալական ցուցանիշներն առավել բարձր են Եղեգնաձոր և Գլաձոր համայնքներում, իսկ ժողովրդագրական գործոնով (կենսաթոշակառուների թվով) բացասական իմաստով առաջատար են Եղեգնաձոր և Եղեգիս համայնքները:

Գործոնների սեփական արժեքները՝ ըստ Վայոց ձորի համայնքների | **Աղյուսակ 3.4**

Համայնքներ	Ֆինանսական	Տարեկական	Սոցիալական	Ժողովրդագրական
Արենի	-.28138	-.13334	-1.38654	.84034
Գլաձոր	-.49360	-.10742	.83791	.82296
Եղեգիս	-.49657	-.45272	-1.56266	-1.20575
Եղեգնաձոր	-.09695	-.44667	1.14289	-1.79614
Զատիթափ	2.39509	-.48134	-.03564	.26456
Մայիշկա	-.59455	-.46433	.76657	.73049
Ջերմուկ	.12891	2.44712	.04728	-.19835
Վայք	-.56094	-.36130	.19018	.54190

Գործոնային վերլուծությունը թույլ է տալիս համայնքները խմբավորել ըստ առանձին գործոնների, սակայն թույլ չի տալիս գնահատել բոլոր գործոնների համալիր ազդեցությունը խմբավորման ժամանակ: Կլաստերային վերլուծության առավելությունն այն է, որ հնարավորություն է ընձեռում դասակարգելու ոչ միայն ուսումնասիրվող փոփոխականները, այլ նաև դիտարկվող օբյեկտները, ընդ որում՝ ըստ ցանկացած թվով գործոնների կամ փոփոխականների⁴³:

Կլաստերային վերլուծությունում օբյեկտների ընդհանրության քանակական գնահատման համար կիրառվում է «օբյեկտների միջև հեռավորություն» հասկացությունը: Հեռավորության ընտրությունը կլաստերային հետազոտության առանցքային պահերից է. դրանից է մեծապես կախված օբյեկտների՝ ըստ կլաստերների տարանջատման վերջնական տարբերակը: Կլաստերային վերլուծությանը նվիրված հետազոտական աղբյուրներում նկարագրված են օբյեկտների հեռավորության հաշվարկման ավելի քան 50 տարբեր եղանակներ, որոնցից առավել լայն կիրառություն ունի և առավել ընկալելի է Էվկլիդեսյան հեռավորությունը (աղյուսակ 3.5):

⁴³ Տե՛ս **Berkhin P. A.**, Survey of Clustering Data Mining Techniques. Grouping Multidimensional Data, 2006:


Օբյեկտների միջև Էվկլիդեսյան հեռավորությունը | Աղյուսակ 3.5

Proximity Matrix								
Squared Euclidean Distance								
Case	1	2	3	4	5	6	7	8
1	.000	4.994	4.366	13.481	9.441	4.856	9.962	2.705
2	4.994	.000	9.998	7.225	9.559	.151	8.581	.568
3	4.366	9.998	.000	7.828	12.856	9.184	12.407	6.139
4	13.481	7.225	7.828	.000	11.847	6.773	12.178	6.597
5	9.441	9.559	12.856	11.847	.000	9.799	13.933	8.880
6	4.856	.151	9.184	6.773	9.799	.000	10.380	.380
7	9.962	8.581	12.407	12.178	13.933	10.380	.000	8.931
8	2.705	.568	6.139	6.597	8.880	.380	8.931	.000

Ըստ այդ հեռավորությունների՝ մարզի 8 համայնքները բաժանվել են երեք կլաստերների, որոնց կազմը ներկայացված է աղյուսակ 3.6-ում:

Ձևավորված կլաստերների կազմը | Աղյուսակ 3.6

Cluster Membership	
Case	3 Clusters
1. Արենի	1
2. Գլաձոր	1
3. Եղեգիս	1
4. Եղեգնաձոր	1
5. Զատիթափ	2
6. Մալիշկա	1
7. Զեքմուկ	3
8. Վայք	1



Գծապատկեր 3.1 | Վայոց ձորի համայնքների դասակարգման դենդրոգրամ

Գծապատկեր 3.1-ում ներկայացված է կլաստերների միացման կարգը բնութագրող դենդոգրամը, որն ի հայտ է բերում Վայոց ձորի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման վառ արտահայտված անհամաչափությունը:

Առաջին կլաստերի մեջ նախ միավորվել են Գլաձոր, Մալիշկա և Վայք համայնքները, որոնք բավականին մոտ են իրենց սոցիալ-տնտեսական ցուցանիշներով, այնուհետև հաջորդաբար՝ Արենի, Եղեգիս և Եղեգնաձոր համայնքները:

Երկրորդ կլաստերի մեջ ընդգրկվել է միայն Զատիթափ համայնքը, իսկ երրորդում՝ Ջերմուկը:

Առաջին կլաստերի մեջ ներառված համայնքները բնութագրվում են ֆինանսական ցուցանիշների համեմատական ցածր մակարդակով, մասնավորապես՝ մեկ շնչին ընկնող եկամուտների, ծախսերի և սուբվենցիաների գծով ամենացածր ցուցանիշներն ունեն Գլաձորը, Մալիշկան, Վայքը, Եղեգիսը: Մյուս կողմից, այս կլաստերի մեջ մտնող համայնքները հիմնականում ունեն գյուղատնտեսական ուղղվածություն, քանի որ մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալով առաջատար են հենց այս կլաստերի մեջ ներառված այնպիսի համայնքներ, ինչպիսիք են Արենին, Եղեգիսը, Գլաձորը և այլն:

Երկրորդ կլաստերի մեջ ներառվել է Զատիթափ համայնքը, որտեղ դիտարկվող փոփոխականների արժեքները գրեթե միջին դիրք են գրավում I և III կլաստերների համապատասխան ցուցանիշների նկատմամբ: Օրինակ, ըստ տնտեսական ցուցանիշների, Զատիթափը հիմնականում զբաղեցնում է 3-րդ տեղը՝ Ջերմուկից և Արենիից (կամ Արենիից և Ջերմուկից) հետո, սակայն բոլոր ֆինանսական ցուցանիշների գծով այս համայնքը միջանկյալ դիրք է զբաղեցնում I և III կլաստերների համապատասխան ցուցանիշների միջև՝ փոքր-ինչ զիջելով Ջերմուկ համայնքի ֆինանսական ցուցանիշներին: Ֆինանսական ցուցանիշներից Զատիթափ համայնքում հատկապես բարձր են մեկ շնչին ընկնող սուբվենցիաները:

Եվ վերջապես, երրորդ կլաստերում ընդգրկված Ջերմուկ համայնքն իր գրեթե բոլոր ցուցանիշներով տարբերվում է մյուս կլաստերների համայնքներից: Այն առանձնանում է մեկ շնչին ընկնող արդյունաբերական արտադրանքի, ծառայությունների, մանրածախ առևտրաշրջանառության մեծ ծավալներով, իսկ դիտարկված բոլոր ֆինանսական ցուցանիշների գծով (բացառությամբ սուբվենցիաների) այն բացարձակ առաջատար է: Ջերմուկ համայնքն աչքի է ընկնում նաև բարենպաստ սոցիալական պայմաններով՝ փոքր-ինչ զիջելով մարզկենտրոն Եղեգնաձորին: Աշխարհագրական դիրքով նույնպես Ջերմուկը բավականին հեռու է մյուս համայնքներից, մասնավորապես՝ հեռավորությունը մարզկենտրոնից կազմում է 42.5 կմ:

Կլաստերային և գործոնային վերլուծությունների արդյունքում ստեղծ-

ված երեք կլաստերների ձևավորման հիմնական նպատակն էր բացահայտել նույն կլաստերի մաս կազմող համայնքների սոցիալ-տնտեսական ռեսուրսային ներուժը և այդ կլաստերի շրջանակում դրանց համագործակցության հնարավորությունները՝ ըստ առկա ներուժի: Այսպիսով, գործոնային և կլաստերային վերլուծությունները հնարավորություն տվեցին կատարելու Վայոց ձորի համայնքների բազմաչափ դասակարգում՝ ըստ տնտեսական, սոցիալական, ֆինանսական, ժողովրդագրական գործոնների և ուսումնասիրել այդ գործոնների համալիր ազդեցությունը մարզի տարածքային զարգացման անհամաչափության վրա: Բացահայտված օրինաչափությունները կարող են միևնույն կլաստերին պատկանող համայնքների միջհամայնքային համագործակցության զարգացման հիմք հանդիսանալ:

3.1.2. Վայոց ձորի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր՝ համայնքային և ոլորտային կլաստերների ձևավորմամբ

Վայոց ձորի մարզի զարգացման սույն ծրագիրը մշակվել է՝ հիմնվելով սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության, համայնքային կլաստերների ձևավորման ու միջհամայնքային համագործակցության հնարավորությունների ուսումնասիրության վրա՝ նպատակ ունենալով խորացնելու և ամրապնդելու մարզի համայնքների համագործակցությունը:

Սույն ծրագրի հիմնարար դրույթները կարող են ներառվել ինչպես մարզային, այնպես էլ համայնքային զարգացման ծրագրերում:

Վայոց ձորի համայնքների զարգացման անհամաչափության, միջհամայնքային համագործակցության և մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության ուսումնասիրությունից հետո առաջարկվում է մարզային և համայնքային ջանքերն ուղղել տարածաշրջանի զարգացմանը՝ գյուղատնտեսության և զբոսաշրջային-հանգստի տնտեսական կլաստերների ստեղծման միջոցով, ինչպես նաև ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի շուրջ սոցիալական կլաստերի ստեղծմամբ: Այդ ուղղություններն առավել հեռանկարային են մրցակցային առավելությունների գնահատման, մարզի ու համայնքների զարգացման հնարավոր ոլորտներին աջակցելու տեսանկյունից, քանի որ մարզի գյուղատնտեսական և ռեկրեացիոն-զբոսաշրջային ներուժը շատ քարձր է գնահատվում:

Գյուղատնտեսական կլաստերի ստեղծում

Գյուղատնտեսությունը Վայոց ձորի մարզի տնտեսության հիմնական ճյուղն է, և բնակչության 64%-ը բնակվում է գյուղական բնակավայրերում: Մարզի քաղաքները, բացառությամբ Ջերմուկի, նույնպես ունեն գյուղմթերքի արտադրության և վերամշակման ընդգծված ուղղվածություն: Ըստ վիճակագրական տվյալների՝ մարզում գյուղատնտեսության ոլորտում միջին հաշվով տարեկան թողարկվում է 21-22 միլիարդ ՀՀ դրամի համախառն արտադ-

րանք, որը մեկ շնչի հաշվով շուրջ 1.23 անգամ ավելի է հանրապետության միջին ցուցանիշից: Մարզի գյուղատնտեսական համալսառն արտադրանքի շուրջ 65%-ն ապահովում է անասնաբուծությունը: Գյուղատնտեսության համալսառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Մարզում գործում են կաթի վերամշակման 5, խաղողի վերամշակման 11, պտուղ-բանջարեղենի վերամշակման 1 ձեռնարկություն, 146 ֆերմերային տնտեսություններ: Մարզում գործում են նաև 24 սառնարանային տնտեսություններ՝ ընդհանուր 1000 տոննա տարողությամբ:

2019 թ. մարզում հիմնվել են 10 հա պտղատու և 15 հա խաղողի ինտենսիվ այգիներ, իսկ 45 հա պտղատու և 25 հա խաղողի այգիների համար ներդրվել է կաթիլային ոռոգում:

Գյուղատնտեսական արտադրությունը խթանելու նպատակով ՀՀ Կառավարություն են ներկայացվել մի շարք ներդրումային ծրագրեր՝ ուղղված այծաբուծության, ջերմոցային տնտեսությունների, թռչնաբուծության և չրերի արտադրության կազմակերպմանն ու զարգացմանը, որոնցից երկուսը՝ չրերի և այծի կաթից պանրի արտադրության ծրագրերը, արդեն ֆինանսավորվել են:

Մարզում գյուղատնտեսության զարգացման հիմնական խնդիրներից է ոռոգումը: Մասնավորապես, 2018 թ. դրությամբ մարզի վարելահողերի ընդամենը 17%-ն էր ոռոգելի, իսկ 2019-2020 թթ. սուրվենցիոն ծրագրերով և համայնքի միջոցներով կառուցվել և վերանորոգվել են ոռոգման ջրատարերն ու ցանցը, ինչը կբարելավի մարզում ոռոգման հետ կապված առկա իրավիճակը:

Մարզի համայնքների զարգացման անհամաչափության ուսումնասիրության, գործոնային ու կլաստերային վերլուծության արդյունքում առաջարկվում է Արենի, Եղեգիս Գլաձոր, Մալիշկա, Վայք և Եղեգնաձոր համայնքների ներգրավմամբ (որոնք հիմնականում ունեն գյուղատնտեսական ուղղվածություն) ձևավորել գյուղատնտեսական կլաստեր: Նկատենք, որ մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալով առաջատար են հենց այս կլաստերի կազմի մեջ մտնող այնպիսի համայնքներ, ինչպիսիք են Արենին, Եղեգիսը և Գլաձորը: Կլաստերների ձևավորումն ինչպես միջհամայնքային համագործակցության ու համատեղ ծրագրերի իրականացման, այնպես էլ դրանց ընդլայնման հնարավորություն կընձեռի:

Ջրուաշրջային կլաստերի սրելծում

Վայոց ձորի մարզում զրոսաշրջության ոլորտը հեռանկարային ուղղություն է տարածաշրջանի համար, որի մասին են վկայում ոլորտի զարգացման տեմպերը: Մասնավորապես 2014-2017 թթ. Վայոց ձորի մարզում միայն հյուրանոցային տնտեսության օբյեկտների հասույթն աճել է շուրջ 4.5 անգամ: 2018 թ. մասնակի անկումը պայմանավորված էր ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններով (աղյուսակ 3.7):

Աղյուսակ 3.7

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների հասույթը 2014-2018 թթ.⁴⁴

Հ/Հ	Տարիներ	Հասույթը, մլն ՀՀ դրամ
1	2014	199.6
2	2015	376.4
3	2016	614.7
4	2017	900.9
5	2018	700.5

Մարզում զբոսաշրջության ոլորտի զարգացման տեմպերի և հեռանկարների մասին են վկայում նաև 2018-2019 թթ. մարզ այցելած զբոսաշրջիկների տվյալները, որոնք ներկայացված են աղյուսակներ 3.8-ում և 3.9-ում: Ընդհանուր առմամբ, արտերկրից ժամանած զբոսաշրջիկների թվաքանակն աճել է 53%-ով, իսկ ներքին զբոսաշրջիկներինը՝ 15%-ով: Ընդ որում, հանգստի և ժամանցի նպատակով մարզ այցելած օտարերկրյա զբոսաշրջիկների թվաքանակը գրեթե կրկնապատկվել է, բուժման և այլ նպատակով ժամանածներինը՝ նվազել, իսկ ահա բուժման նպատակով ներքին զբոսաշրջիկների թվաքանակը, ընդհակառակը, աճել է շուրջ 18%-ով:

Աղյուսակ 3.8

Ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը՝ ըստ նպատակների, Վայոց ձորի մարզում, 2018-2019 թթ.⁴⁵

	Ընդամենը		Գործնական		Հանգստի և ժամանցի		Կրթության		Բուժման		Այլ	
	2018	2019	2018	2019	2018	2019	2018	2019	2018	2019	2018	2019
Զբոսաշրջիկների թվաքանակը, որից ռադ երկրների	9641	14776	823	2268	5933	11368	0	0	2861	1140	24	0
Առաջարկ երկիր	539	832	20	0	391	828		0	128	4	0	0
Աֆղանստան	5	4	0	1	5	3		0	0	0	0	0
Արգենտինա	59	34	6	4	31	30		0	21	0	1	0
Ավստրալիա	163	164	7	97	112	65		0	44	2	0	0
Ավստրիա	69	152	0	5	59	147		0	10	0	0	0
Բելգիա	141	224	1	53	115	165		0	25	6	0	0
Բրազիլիա	2	72	0	6	2	64		0	0	2	0	0
Բուլղարիա	5	37	0	34	5	3		0	0	0	0	0
Բրիտանական տարածք	0	90	0	0	0	90		0	0	0	0	0
Հնդկական օվկիանոսի երկրներ	0	16	0	0	0	16		0	0	0	0	0
Բելառուս	4	51	0	30	4	17		0	0	4	0	0
Կանադա	126	195	15	48	86	138		0	25	9	0	0
Չինաստան	63	186	0	20	42	166		0	21	0	0	0
Չեխիայի Հանրապետություն	22	57	0	0	17	57		0	5	0	0	0
Դանիա	35	3	0	0	35	3		0	0	0	0	0
Կիպրոս	11	65	2	0	6	64		0	3	1	0	0
Թայվան,	6	220	0	0	6	216		0	0	4	0	0

⁴⁴ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019, էջ 285:⁴⁵ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե Վայոց ձորի մարզային վարչության տվյալներ:

Հայրենիա	1	129	1	5	0	124	0	0	0	0	0
Ֆրանսիա	567	809	27	96	467	707	0	72	6	1	0
Վրաստան	39	592	3	18	24	566	0	12	8	0	0
Պերմանիա	483	1157	19	44	423	1107	0	41	6	0	0
Հունգարիա	29	1	0	0	18	1	0	11	0	0	0
Հնդկաստան	201	135	15	22	148	100	0	38	13	0	0
Իրանի Իսլամական Հանրապետություն	83	234	2	51	66	183	0	15	0	0	0
Իդյանդիա	19	5	0	0	17	5	0	2	0	0	0
Իսրայել	100	822	0	0	70	820	0	30	2	0	0
Իրադիա	129	465	13	17	95	448	0	21	0	0	0
Ճապոնիա	19	767	0	7	19	527	0	0	233	0	0
Ղազախստան	26	124	0	0	13	98	0	13	26	0	0
Քուվեյթ	28	8	1	0	17	0	0	10	8	0	0
Նիդեռլանդներ	129	2	2	2	96	0	0	31	0	0	0
Նոր Զելանդիա	10	5	0	0	8	5	0	2	0	0	0
Լեհաստան	28	48	3	2	19	41	0	6	5	0	0
Ռումինիա	0	22	0	3	0	18	0	0	1	0	0
Կորեայի Հանրապետություն	127	45	10	2	84	43	0	33	0	0	0
Լիբանան	66	86	0	0	49	86	0	17	0	0	0
Ռուսաստանի Դաշնություն	3352	3541	293	681	1561	2252	0	1478	608	20	0
Սաուդյան Արաբիա	9	2	0	0	6	0	0	3	2	0	0
Մինգապուր	26	96	3	0	13	96	0	10	0	0	0
Սլովակիա	0	15	0	0	0	15	0	0	0	0	0
Հարավային Աֆրիկա	10	5	2	0	2	5	0	6	0	0	0
Իսպանիա	66	223	0	0	55	215	0	11	8	0	0
Եվեդիա	55	138	1	3	45	123	0	9	12	0	0
Եվեյգարիա	70	57	7	0	50	56	0	13	1	0	0
Ռեկրահիա	36	17	0	0	26	9	0	10	8	0	0
Արաբական Միացյալ Էմիրություններ	631	290	70	0	416	279	0	145	11	0	0
Թուրքիա	5	9	0	0	5	0	0	0	9	0	0
Միացյալ Թագավորություն	513	232	104	0	290	230	0	119	2	0	0
ԱՄՆ	1431	2246	196	1017	904	1131	0	329	98	2	0
Ուգրեկարան	6	3	0	0	4	0	0	2	3	0	0
Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն	92	33	0	0	2	0	0	90	33	0	0

Աղյուսակ 3.9

Ներքին գրտաշրջիկների թվաքանակը՝ ըստ նպատակի,
Վայոց ձորի մարզում, 2018-2019 թ.⁴⁶

Տարիները	Ընդամենը	Արջի նպատակը				
		Գործնական	Հանգիստ և ժամանց	Կրթություն	Բուժում	այլ
2018	24201	1911	11673	0	9607	1010
2019	27833	2739	12320	0	11319	1455

⁴⁶ Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, Վայոց ձորի մարզային վարչության տվյալներ:

Մրցակցային զրոսաշրջության արդյունաբերության զարգացման նախապայման է Վայոց ձորի մարզի ռեսուրսային և ռեկրեացիոն ներուժը, որը ներառում է եզակի բնական նախալեռնային, լեռնային և միջլեռնային հովտային լանդշաֆտները, բազմաթիվ բնական ու պատմամշակութային հուշարձանները, տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, ինչպես նաև զրոսաշրջային ենթակառուցվածքների ձեռք բերված մակարդակը: Զրոսաշրջության հաստատված և խոստումնալից տեսակներն են՝ ավանդական, պատմամշակութային, արշավային, էկոլոգիական, սպորտային, էքստրեմալ: Բուժիչ հանքային աղբյուրների առկայությունը պայմաններ է ստեղծում առողջարանային զրոսաշրջության խթանման համար: Վերջին տարիներին Վայոց ձորի մարզի տարածքում զրոսաշրջությունն ունի կայուն վերելքի միտում: Այդ մասին են փաստում ինչպես զրոսաշրջիկների հոսքի, այնպես էլ գիշերակացի ու հյուրասիրության օբյեկտների աճի տվյալները: 2019 թ. մարզում Եվրամիության դրամաշնորհային միջոցներով վերանորոգվել է 13 հյուրատուն, իսկ Արենի համայնքում կառուցվելու է «Թուֆենկյան» հյուրանոցային համալիրը:

Հետազոտության արդյունքների հիման վրա, առաջարկում ենք ձևավորել Վայոց ձորի զրոսաշրջային և հանգստի կլաստերի աջակցության երկու գոտի.

- Զերմուկ խոշորացված համայնքը,
- Արենի, Եղեգիս և Գլաձոր խոշորացված համայնքները:

Դրանցից յուրաքանչյուրն ունենալու է գործունեության մասնագիտացում: Զերմուկի գոտու մասնագիտացումը առողջարանային և էկոլոգիական զրոսաշրջությունն է, իսկ Արենիի, Եղեգիսի և Գլաձորի գոտուներ՝ մշակութային, պատմական, էքստրեմալ, արշավային, գաստրո- և գյուղատնտեսական (գինու) զրոսաշրջությունը:

Ներկայումս Վայոց ձորի մարզի առկա զրոսաշրջային ներուժը, ըստ գնահատումների, ամբողջությամբ և լիարժեքորեն չի օգտագործվում: Դրա հիմնական պատճառների շարքում անհրաժեշտ է ընդգծել.

- զրոսաշրջային ենթակառուցվածքների ոչ բավարար զարգացածությունը,
- մարզի տարածքում բազմաթիվ գրավիչ զրոսաշրջային ռեսուրսների տրանսպորտային ցածր հասանելիությունը,
- զրոսաշրջային հոսքերի սեզոնային անհավասար բաշխվածությունը,
- շուկայավարման ցածր մակարդակը,
- շուկաների հատվածավորման հստակ համակարգի բացակայությունը,
- շրջագայությունների և զրոսաշրջային փաթեթների փոքր տեսականին,

- ծառայությունների բարձր արժեքը, հատկապես՝ առողջարանային ծառայությունների կտրվածքով,
- զբոսաշրջության և հարակից ոլորտներում միջին օդակի կադրերի պակասը (զբոսավարներ, մատուցողներ, հյուրանոցների վարչարարներ, սպասուհիներ և այլն):

Սոցիալական կլաստերի սրելծում

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի շուրջ սոցիալական կլաստերի ձևավորումը բխում է կլաստերի բոլոր կողմերի՝ բիզնեսի, պետական կառույցների և բուհի շահերից:

Բարձրագույն ուսումնական հաստատություններին հնարավորություն է տրվում կրթական և գիտատեխնիկական ներուժն առավելագույնս օգտագործելու հիմնարար հետազոտությունների և կրթական ծառայությունների մատուցման ոլորտում: Ավելին, բուհի համար կարևոր կողմ է տնտեսության իրական հատվածի ձեռնարկությունների հետ կապերի առկայությունը: Կլաստեր մուտք գործելիս բուհի գլխավոր խնդիրը դառնում է մարզի համայնքներում մարդկային ներուժի պահպանումը, մարդկային կապիտալի զարգացումը ու լիարժեք օգտագործումը:

Իր հերթին, բուհը նույնպես ստանում է մի շարք առավելություններ: Մասնավորապես,

- ձեռք բերված գիտելիքի գործնական կիրառման հնարավորություն,
- գիտական գործունեության շրջանակը ընդլայնելու հնարավորություն,
- խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցման միջոցով համալսարանի զարգացման համար միջոցներ ձեռք բերելու հնարավորություն,
- ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղն ավարտած երիտասարդ մասնագետների աշխատանքի տեղավորման հնարավորություն՝ ըստ իրենց մասնագիտության:

Ինչ վերաբերում է կլաստերում ներգրավված ձեռնարկություններին, ապա դրանք կկարողանան որոշակի առավելություններ ձեռք բերել կլաստերի ներսում բուհի հետ փոխգործակցությունից՝ ստանալով անհրաժեշտ խորհրդատվական ծառայություններ, ապահովելով մասնագետների հետագա ուսուցում և վերապատրաստում և իր աշխատակիցներին տրամադրելով սոցիալական ծառայությունների ավելի ամբողջական տեսականի:

Կլաստերների ներդրմանն ու զարգացմանն ուղղված գործողություններ

Մարզում գյուղատնտեսական և զբոսաշրջային կլաստերների զարգացման և վերը նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է որոշել պետական, մարզային, համայնքային իշխանությունների և գործարար դաշտի մասնակցության ձևերը՝ կլաստերի զարգացման գործում: Որպես նման համագործակցության ձև կարելի է դիտարկել.

- տրանսպորտի, կապի և այլ ենթակառուցվածքների բարելավումը: Ենթակառուցվածքների խնդիրների լուծմանը մասամբ կարող են նպաստել դրանց բարելավմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերը: 2018-2020 թթ. Վայոց ձորի մարզի սուբվենցիոն ծրագրերն ուղղված են եղել միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների կապիտալ վերանորոգմանը, փողոցային արտաքին լուսավորությանը, ջրագծերի և կոյուղագծերի, ոռոգման ցանցի անցկացմանն ու վերանորոգմանը, հակակարկտային համակարգերի ներդրման ծրագրերին: Սուբվենցիոն ծրագրերի շրջանակում են նաև զբոսաշրջային և գյուղատնտեսական նշանակություն ունեցող օբյեկտների վերանորոգման աշխատանքները: Մասնավորապես.
 - 2020 թ. Ջերմուկ քաղաքում ճոպանուղու շինությունների հիմնանորոգման և նորերի կառուցման համար ՀՀ պետական բյուջեի մասնաբաժինը 40,4 մլն, իսկ համայնքինը 49.4 մլն ՀՀ դրամ է,
 - Արենի խոշորացված համայնքի Արենի, Ելփին, Ռինդ, Աղավաձոր բնակավայրերում 6 հակակարկտային կայանների կառուցման համար 2020 թ. ՀՀ պետական բյուջեի մասնաբաժինն ավելի քան 6,8 մլն, իսկ համայնքինը շուրջ 5.8 մլն ՀՀ դրամ է,
 - Եղեգիս և Արենի խոշորացված համայնքներում ոռոգման ցանցի կառուցման ու վերանորոգման համար 2020 թ. ՀՀ պետական բյուջեի մասնաբաժինը 211.7 մլն, իսկ համայնքի ներդրումը շուրջ 86 մլն ՀՀ դրամ է,
 - այս ծրագրերի շարքում է նաև Արենի խոշորացված համայնքի Արենի բնակավայրում մեքենատրակտորային պարկի կառուցումը,
- գյուղատնտեսական կլաստերի մեջ ներգրավված համայնքների կողմից համատեղ սուբվենցիոն հայտի ներկայացում՝ Հերիերի ջրամբարից ոռոգման ցանցի կառուցման համար, որը կընդլայնի ոռոգելի տարածքները և կմեծացնի գյուղատնտեսական արտադրանքի ծավալները: Սա կարող է դիտարկվել նաև որպես միջհամայնքային համագործակցության հնարավոր տարբերակ և թույլ տալ էապես բարելավելու մարզում ոռոգելի տարածքների հետ կապված խնդիրները,
- կլաստերների հետ կապված տեխնոլոգիաների զարգացման վերաբերյալ տեղական ուսումնական հաստատություններում հետազոտական և ուսումնական աշխատանքների կազմակերպում,
- կլաստերների անդամների գործունեությունը համակարգող հատուկ մարզային մարմնի կամ ստորաբաժանման ձևավորում,
- կլաստերների անդամների ներդրումային ռեսուրսների համախմբում, ներդրումային նախագծերի տվյալների և հավանական ներդրողների տվյալների շտեմարանի ձևավորում,

- զբոսաշրջային գործակալությունների և հյուրընկալության հաստատությունների միջև ներդրումային համագործակցության սխեմայի մշակում՝ ուղղված զբոսաշրջային և հյուրանոցային կառույցների համագործակցությունը խրախուսելուն և զբոսաշրջային արտադրանքի զարգացման, խթանման ու ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը,
- տարածաշրջանային շուկայավարման համակարգի ստեղծում, որը կարող է սահմանվել որպես կլաստերների անդամների գործողությունների համակարգ՝ նպատակ ունենալով ապահովել մարզի զբոսաշրջային և գյուղատնտեսական արտադրանքի (վերամշակված գյուղմթերք, պահածոներ, պանիր, գինի և այլն) համատեղ առաջխաղացումը ազգային և համաշխարհային շուկաներ: Նման համակարգի ներդրումը կնպաստի կլաստերների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով, կարելի է նշել, որ կլաստերների ձևավորումը Վայոց ձորի մարզի զարգացման գործում կարող է ունենալ սոցիալական, տնտեսական և ֆինանսական ազդեցություն՝ նպաստելով նոր աշխատատեղերի ստեղծմանը, ապրանքների և ծառայությունների արտադրության մասնագիտացման խորացմանը և նոր հմտությունների ձեռք բերմանը, նոր ընկերությունների մուտքին և շրջանառության ծավալների մեծացմանը, որոնք էլ, իրենց հերթին, կհանգեցնեն բյուջետային մուտքերի ավելացմանը:

3.2

Միջհամայնքային համագործակցության հնարավորությունները և սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատումը

Հետազոտության ընթացքում, Վայոց ձորի համայնքների միջև միջհամայնքային համագործակցության ներդրման համատեքստում, իրականացվել է աղբահանության ոլորտի տնտեսական արդյունավետության հաշվարկ:

Միջհամայնքային համագործակցության տնտեսական արդյունավետության գնահատման նպատակով առաջարկվում է ձևավորել 2 խումբ համայնքներ, որոնց ընտրությունը հիմնավորված է կլաստերային վերլուծության, ինչպես նաև կատարված հարցումների արդյունքներով.

1. Եղեգնաձոր-Մալիշկա-Եղեգիս,
2. Վայք-Զառիթափ:

Այս համայնքների համագործակցության տնտեսական արդյունավետության հաշվարկը կատարենք համատեղ ծառայությունների մատուցման (աղբահանության) օրինակով՝ ըստ հետևյալ մեթոդաբանության.

Դիտարկենք 2 հնարավոր տարբերակ՝

Տարբերակ 1 - համայնքն ինքնուրույն է իրականացնում այդ լիազորությունը,

Տարբերակ 2 - համայնքներն այդ լիազորությունն իրականացնում են համատեղ:

Քանի որ, կլաստերային վերլուծության արդյունքում, Եղեգնաձոր, Մալիշկա և Եղեգիս համայնքներն իրենց սոցիալ-տնտեսական, ֆինանսական ցուցանիշներով ներառվում են մեկ ընդհանուր կլաստերի մեջ, ուստի միջհամայնքային համագործակցության առանձնահատկությունները նախ ուսումնասիրենք այս համայնքների օրինակով: Ընդ որում, նշված համայնքներից Եղեգիսը և Մալիշկան չունեն աղբավայրեր, և այդ համայնքների աղբահանությունն իրականացվում է Եղեգնաձորի մասնավոր կազմակերպության կողմից, իսկ սեփական համայնքի աղբահանությամբ զբաղվում է Եղեգնաձոր համայնքը՝ օգտագործելով 2 աղբատար մեքենա, 1-ը՝ սեփական, մյուսը՝ վարձակալությամբ: Հարցումների արդյունքների վերլուծությունը ևս վկայում է, որ բնակիչները համայնքների հիմնախնդիրների շարքում նշում են աղբահանությունը, ինչով էլ հիմնավորվում է այս ոլորտի մանրագնին ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Տարբերակ 1

Նշված 3 համայնքներում 2019 թ. աղբահանության ինքնուրույն իրականացման փաստացի ծախսերը ներկայացված են աղյուսակ 3.10-ում:

Եղեգիս, Մալիշկա և Եղեգնաձոր համայնքների աղբահանության
ծախսերը 2019 թ.⁴⁷

Աղյուսակ 3.10

Համայնքները	Աղբահանության գծով փաստացի ծախսերը 2019 թ. (ՀՀ դրամ)	
	Ընդամենը	1 քնակի հաշվով
Եղեգիս	9 745 500	1520
Մալիշկա	4 399 960	900
Եղեգնաձոր	32 869 000	3360
Ընդամենը	47 014 460	2230

Հաշվարկելով յուրաքանչյուր համայնքի կողմից կատարվող ծախսերը և գումարելով՝ կստանանք միջհամայնքային համագործակցության կազմի մեջ մտնող համայնքների հանրագումարային ընդհանուր ծախսերը, եթե նրանք աղբահանության ծառայությունն իրականացնում են ինքնուրույն:

Տարբերակ 2

Լիազորությունը համատեղ իրականացնելու դեպքում, աղբահանության գծով կատարվող ընդհանուր ծախսերի գնահատման համար, կարող ենք հիմք ընդունել միջհամայնքային համագործակցության ենթադրվող ծախսերը: Եթե Եղեգնաձոր համայնքի սեփական աղբատար մեքենան սպասար-

⁴⁷ <http://vdzor.mtad.am/community-budgetary-expenditure/>

կի իր համայնքը, իսկ 2-րդի վարձակալության փոխարեն Եղեգնաձոր-Մալիշկա-Եղեգիս միջհամայնքային համագործակցության շրջանակում ձեռք բերվի նոր աղբատար մեքենա, ապա աղբահանության հետ կապված ընդհանուր ծախսերը կհամապատասխանեն աղյուսակ 3.11-ում ներառված ցուցանիշներին:

Եղեգնաձոր-Մալիշկա-Եղեգիս միջհամայնքային համագործակցության դեպքում ենթադրվող տարեկան ծախսերն աղբահանության գծով		Աղյուսակ 3.11
Ծախիսի տեսակը	Գումարը (ՀՀ դրամ)	
1. Աղբարար մեքենայի (Կամազ KO-456-12) ձեռք բերման ծախսեր	30 000 000	
2. Վառելիքի տարեկան ծախս	1 810 400	
3. Աղբարարի վարորդի աշխատավարձ (ներառյալ հարկերը)	180 000x12= 2 160 000	
4. Բանվորի աշխատավարձ (ներառյալ հարկերը)	150 000 x12 =1 800 000	
5. Աղբարար մեքենայի ախրահանման ծախսեր	3000x12=36 000	
6. Բանվորի անհատական պաշտպանության միջոցներ (նյաղիմակ, ձեռնոց, պաշտպանիչ ակնոց, արտահագուստ)	15 780x12=189 360	
Ընդամենը	35 995 760	

Քանի որ Եղեգիս համայնքն ընդգրկում է 10 գյուղական համայնքներ, որոնց միջին հեռավորությունը համայնքի կենտրոնից 9.6 կմ է, իսկ վերջինիս հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձորից 12 կմ է, ապա նպատակահարմար կլինի, որ մեկ օրում սպասարկվեն համայնքի 5 գյուղերը, հաջորդ օրը՝ մյուս 5 գյուղերը: Մալիշկա-Եղեգնաձոր հեռավորությունը 7 կմ է (հետադարձով՝ 14 կմ): Ըստ մեքենայի տեխնիկական ցուցանիշների՝ վառելիքի ծախսը 100 կմ-ի համար կազմում է 20 լ դիզելային վառելիք, որի 1 լիտրի արժեքը 310 ՀՀ դրամ է, ուստի, վառելիքի ծախսը 100 կմ-ի համար կկազմի $310 \times 20 = 6200$ ՀՀ դրամ: Այսպիսով, 2 օրը մեկ անգամ հաճախականությամբ Եղեգիս և Մալիշկա համայնքները, ինչպես նաև այդ ճանապարհին Եղեգնաձոր համայնքի որոշ աղբավայրեր սպասարկելու դեպքում աղբատարի օրական վազքը կկազմի մոտավորապես 80 կմ, հետևաբար՝ վառելիքի միջին օրական ծախսը կկազմի $6200 \times 80 / 100 = 4960$ ՀՀ դրամ, իսկ տարեկան ծախսերը՝ $4960 \times 365 = 1\,810\,400$ ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է Եղեգնաձոր համայնքին, ապա վերջինս իր սեփական աղբատար մեքենայի ծախսերը (տարեկան 4 200 240 ՀՀ դրամ, որից՝ վառելիքի ծախսն օրական 20 կմ վազքի հաշվարկով՝ 14 880 ՀՀ դրամ, վարորդի աշխատավարձը՝ 2 160 000 ՀՀ դրամ, բանվորի աշխատավարձը՝ 1 800 000 ՀՀ դրամ, ախտահանման ծախսերը՝ 36 000 ՀՀ դրամ, բանվորի անհատական պաշտպանության միջոցները՝ 189 360 ՀՀ դրամ) կարող է փոխհատուցել 2-րդ աղբատարի վարձակալության վճարով ($350000 \times 12 = 4200000$ ՀՀ դրամ), որը նոր աղբատարի ձեռք բերման դեպքում այլևս չի վճարելու:

Տարբերակ 1-ի և 2-ի համադրությունը ցույց կտա այն տնտեսական արդյունավետության չափը (ըացարձակ արժեքով), որը կարող է ստացվել միջ-

համայնքային համագործակցության արդյունքում՝ համատեղ ծառայությունների մատուցման գծով:

47 014 460-35 995 760=11 018 700 ՀՀ դրամ:

Քանի որ նշված 3 համայնքներում բնակչության թվաքանակը տարբեր է, ուստի ներդրումները ևս պետք է կատարել՝ միջհամայնքային համագործակցության մեջ ներառված համայնքների բնակչության թվաքանակին համամասնորեն (աղյուսակ 3.12):

Եղեգիս-Մալիշկա-Եղեգնաձոր միջհամայնքային
համագործակցության համար անհրաժեշտ ներդրումների, ծախսերի և
տնտեսման գումարը՝ ըստ համայնքների

Աղյուսակ 3.12

Միջհամայնքային համագործակցություն	Համայնքի բնակչության թվաքանակը		Ներդրումներ (ՀՀ դրամ)	Տարեկան գումարը	
	մարդ	%		ՀՀ դրամ	1 բնակչի հաշվով
Եղեգիս	6431	30.5	10 978 707	3 360 704	522.6
Մալիշկա	4914	23.3	8 387 012	2 567 357	522.4
Եղեգնաձոր	9771	46.2	16 630 041	5 090 639	521.0
Ընդամենը	21 116	100	35 995 760	11 018 700	521.8

Նմանօրինակ համագործակցություն կարելի է առաջարկել նաև Վայք-Զատիթափ համայնքների համար, որոնց փաստացի ծախսերն աղբահանության գծով ներկայացված են աղյուսակ 3.13-ում:

Զատիթափ և Վայք համայնքների աղբահանության ծախսերը 2019 թ.⁴⁸

Աղյուսակ 3.13

Համայնքներ	Աղբահանության գծով փաստացի ծախսերը 2019 թ. (ՀՀ դրամ)	
	Ընդամենը	1 բնակչի հաշվով
Զատիթափ	7 314 500	1775,8
Վայք	37 000 000	4159,1
Ընդամենը	44 314 500	3404,9

Քանի որ Զատիթափ համայնքն ընդգրկում է 8 գյուղական համայնքներ, որոնք սպասարկում է 1 հին աղբատար մեքենա, իսկ Վայքն ունի 2 նոր աղբատար, որը նվիրատվություն է, ուստի այս 2 համայնքներին ևս առաջարկում ենք համագործակցել՝ պայմանագրային հիմունքներով վճարովի ծառայություններ մատուցելու համար: Այսպես, քանի որ Վայք համայնքի աղբահանության ծախսերը բավականին մեծ են, ուստի վերջինս կարող է իր 1 մեքենայով սպասարկել սեփական համայնքը, իսկ մյուսը կիրառել՝ Զատիթափ համայնքին վճարովի ծառայություններ մատուցելու նպատակով: Արդյունքում, այդ ծառայությունների մատուցումից ստացված եկամտի հաշվին կնվազեն Վայքի աղբահանության ծախսերը, կամ այն կօգտագործվի՝ համայնքի այլ կարիքները հոգալու համար: Մյուս կողմից, Զատիթափ հա-

⁴⁸ <http://vdzor.mtad.am/community-budgetary-expenditure/>

մայնքը հնարավորություն կունենա ավելի քիչ ծախսերով ստանալու առավել որակյալ ծառայություններ՝ նոր, ժամանակակից աղբատար մեքենայով (աղյուսակ 3.14):

Զառիթափ-Վայք միջհամայնքային համագործակցության դեպքում
Վայք համայնքի կողմից կատարվելիք տարեկան ծախսերն
աղբահանության գծով

Աղյուսակ 3.14

Ծախսի տեսակը	Գումարը (ՀՀ դրամ)
1. Վառելիքի տարեկան ծախս (օրական 50 կմ վազք)	3100x365=1 131 500
2. Աղբատարի վարորդի աշխատավարձ (ներառյալ հարկերը)	180 000x12= 2 160 000
3. Բանվորի աշխատավարձ (ներառյալ հարկերը)	150 000 x12 =1 800 000
4. Աղբատար մեքենայի ախրահանման ծախսեր	3000x12=36 000
5. Բանվորի անհատական պաշտպանության միջոցներ (շնչադիմակ, ձեռնոց, պաշտպանիչ ակնոց, արտահագուստ)	15 780x12=189 360
Ընդամենը	5 316 860

Նշված վճարովի ծառայության համար միջին հաշվով 550 000 ՀՀ դրամ ամսական վարձավճարի դեպքում Վայք համայնքը կունենա $550\ 000 \times 12 = 6\ 600\ 000$ ՀՀ դրամ եկամուտ, որից ծախսերը վճարելուց հետո՝

$6\ 600\ 000 - 5\ 316\ 860 = 1\ 283\ 140$ ՀՀ դրամ տնտեսում:

Զառիթափ համայնքն էլ, իր հերթին, վճարելով այդ ծառայությունների ամբողջ փաթեթի համար ամսական 550 000 ՀՀ դրամ, տարեկան կտնտեսի $7\ 314\ 500 - 6\ 600\ 000 = 714\ 500$ ՀՀ դրամ (աղյուսակ 3.15):

Զառիթափ-Վայք միջհամայնքային համագործակցության համար
անհրաժեշտ ներդրումների, ծախսերի և տնտեսման գումարը՝ ըստ
համայնքների

Աղյուսակ 3.15

Միջհամայնքային համագործակցություն	Համայնքի բնակչության թվաքանակը		Ծախսերը (ՀՀ դրամ)	Տնտեսման գումարը, ՀՀ դրամ	
	մարդ	%		Ընդամենը	1 բնակչի հաշվով
Զառիթափ	4119	31,6	6 600 000	714 500	173.5
Վայք	8896	68,4	5 316 860	1 283 140	144.2
Ընդամենը	13015	100,0		1 997 640	158.9

Այսպիսով, ամփոփելով միջհամայնքային համագործակցության տնտեսական արդյունավետության հաշվարկը նշված 2 խումբ համայնքներում, կարող ենք փաստել, որ.

1. Եղեգնաձոր-Մալիշկա-Եղեգիս համագործակցության դեպքում համայնքները մեկ շնչի հաշվով կունենան միջինը 521.8 ՀՀ դրամի տնտեսում, ինչը կազմում է կատարված ծախսերի 23.4%-ը,
2. Վայք-Զառիթափ համագործակցության դեպքում միջին տնտեսումը 1 շնչի հաշվով կկազմի 158.9 ՀՀ դրամ կամ փաստացի ծախսերի 4.7%-ը:

Ամփոփելով աղբահանության գծով մարզի ընդհանուր պատկերը՝ կարող ենք փաստել, որ առաջարկվող միջհամայնքային համագործակցության բարեհաջող ձևավորման դեպքում մարզում այլևս աղբահանության խնդիր չի լինի, քանի որ Ջերմուկ, Գլաձոր և Արենի համայնքներն ինքնուրույն կազմակերպում են իրենց համայնքների աղբահանությունը, իսկ մյուս համայնքները վերը նշված տարբերակով կարող են համագործակցել՝ լուծելով աղբահանության խնդիրները և ունենալով որոշակի տնտեսում:

Անդրադառնալով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հեռանկարներին՝ պետք է նշել, որ վերջին տարիներին զարգացած և զարգացող երկրներում ազգային և տարածաշրջանային մրցունակության բարձրացման համար միջհամայնքային համագործակցությունը և կլաստերային քաղաքականությունը դարձել են պետական քաղաքականության հիմնական ուղղություններ: Հետևաբար, կլաստերային սկզբունքների հիման վրա համայնքային տնտեսության արդիականացման ուղենիշը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է մշակել առողջ կլաստերային քաղաքականություն և իրականացնել արդյունավետ միջհամայնքային համագործակցություն, որը կներառի ՀՀ առանձնահատկությունները հաշվի առնող՝ կլաստերի ձևավորման և պետական աջակցության կառուցակարգերը: Թեև ՀՀ-ում կլաստերների ձևավորման մեծ հետաքրքրություն է դրսևորվում, սակայն մինչ օրս չկա ընդունված և մշակված կլաստերային քաղաքականության հայեցակարգ կամ որևէ այլ պաշտոնական փաստաթուղթ: Հարկ է նաև նշել, որ ՀՀ-ում կլաստերների գործնական օգտագործումը՝ ուղղված համայնքներում նոր սոցիալական և արդյունաբերական ենթակառուցվածքների ձևավորմանը, զարգացմանը և տարածքների մրցունակության բարձրացմանը, դեռևս բավարար չափով չի ուսումնասիրվել և գնահատվել: Մինչդեռ, կլաստերի ձևավորումը ՀՀ-ի համար օժտված է տնտեսական զարգացման հսկայական ներուժով, և կլաստերները կարող են դիտարկվել որպես համայնքային և մարզային մակարդակներում զարգացումը կարգավորելու գործիք՝ ապահովելով արտադրության արդիականացման պայմաններ ու բարձրացնելով դրանց մրցունակությունը: Միջհամայնքային համագործակցությունը և կլաստերային մոտեցումը կարևոր դեր կարող են խաղալ համայնքային ու մարզային զարգացման ռազմավարության մշակման գործում: Կլաստերային արդյունավետ քաղաքականության իրականացումը հիմնված է տեղական իշխանությունների, պետական մարմինների, հետազոտական և ուսումնական հաստատությունների, ինչպես նաև ձեռնարկատիրության միջև մշտական փոխգործակցության ու գործնական հարաբերությունների կառուցման վրա:

«Միջհամայնքային համագործակցության առանձնահատկությունները ՀՀ Վայոց ձորի մարզի տնտեսական զարգացման համատեքստում» հետազոտական ծրագրի շրջանակում ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում կատարվել են հետևյալ *ևզրահանգումները*.

- Վայոց ձորի տնտեսության մեջ գերակշռում է գյուղատնտեսությունը, իսկ մարզի բնակչության 64%-ը բնակվում է գյուղական բնակավայրերում: Մարզի գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշը մեկ շնչի հաշվով շուրջ 1.23 անգամ ավելի է հանրապետության միջին ցուցանիշից: Գյուղատնտեսությունը մասնագիտացած է անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր կենդանիների բուծման) և բուսաբուծության (մասնավորապես՝ պտղի և խաղողի) մեջ: Վայոց ձորի քաղաքներն ունեն գյուղմթերքի արտադրության և վերամշակման ընդգծված ուղղվածություն:
- Մարզի հանրային ենթակառուցվածքները դեռևս էականորեն զիջում են միջին հանրապետական ցուցանիշներին, մասնավորապես՝ գազամատակարարման, ճանապարհների մատչելիության, աղբահանության և այլ ենթակառուցվածքները: Մարզի բոլոր համայնքներում, բացառությամբ Եղեգիս և Մալիշկա համայնքների, առկա են աղբավայրեր, իսկ ներհամայնքային երթուղիներ առկա են միայն Զերմուկ, Մալիշկա և Զատիթափ համայնքներում:
- Հետազոտության շրջանակում իրականացված հարցումների արդյունքների վերլուծության համաձայն՝ փորձագետների 85.1%-ն այն կարծիքին է, որ Վայոց ձորի տեղական իշխանությունները լիովին կամ մեծավ մասամբ պատրաստ են ընդունել միջհամայնքային համագործակցության մասին որոշումներ և ներդնել միջհամայնքային համագործակցության որոշակի ձևեր:
- Միջհամայնքային համագործակցության ձևերի վերաբերյալ, հետազոտության շրջանակում, փորձագետների կողմից առավել հաճախ հնչող առաջարկներն են եղել զբոսաշրջային հնարավորությունների, կոոպերատիվների, գործարանների, համատեղ ջրամատակարարման ցանցերի ստեղծումն ու աղբահանության կազմակերպումը: Սա կարևոր հանգամանք է, որը կարող է հիմք ծառայել միջհամայնքային համագործակցության զարգացման համար:
- Հարցումների արդյունքում փորձագետները գրեթե միակարծիք են նաև, որ համայնքներում առկա է համայնքային ծառայողների վերապատրաստման անհրաժեշտություն և համապատասխան մասնագետների պակաս, որոնց առկայությունը կարող է նպաստել ինչպես միջհամայնքային համագործակցության զարգացմանը, այնպես էլ

էական աջակցություն հանդիսանալ համայնքների կողմից սուրվեն-
ցիոն ծրագրերի փաթեթների ներկայացման ժամանակ:

Հետազոտական ծրագրի շրջանակում արվել են հետևյալ առաջար- կությունները.

- իրականացվել է Վայոց ձորի համայնքների զարգացման անհամա-
չափությունների վերլուծություն **SPSS** ծրագրային փաթեթի միջոցով՝
կիրառելով գործոնային վերլուծության և կլաստերային մեթոդները:
Համաձայն այդ վերլուծության՝ մարզի ութ համայնքները ստորաբա-
ժանվել են երեք կլաստերի.
- *Առաջին կլաստերի* մեջ նախ միավորվել են Գլաձոր, Մալիշկա և
Վայք համայնքները, որոնք միմյանց բավականին մոտ են իրենց
սոցիալ-տնտեսական ցուցանիշներով, այնուհետև, ըստ հերթա-
կանության, միացել են Արենի, Եղեգիս և Եղեգնաձոր համայնքնե-
րը: Առաջին կլաստերի մեջ ներառված համայնքները բնութա-
գրվում են ֆինանսական ցուցանիշների համեմատական ցածր
մակարդակով, մասնավորապես՝ մեկ շնչին ընկնող եկամուտնե-
րի, ծախսերի և սուրվենցիաների գծով ամենացածր ցուցանիշ-
ներն ունեն Գլաձորը, Մալիշկան, Վայքը, Եղեգիսը: Մյուս կողմից,
այս կլաստերի մեջ մտնող համայնքները հիմնականում ունեն
գյուղատնտեսական ուղղվածություն, քանի որ մեկ շնչի հաշվով
գյուղատնտեսական արտադրանքի ծավալով առաջատար են
հենց այս կլաստերի մեջ մտնող այնպիսի համայնքներ, ինչպիսիք
են Արենին, Եղեգիսը, Գլաձորը և այլն:
- *Երկրորդ կլաստերի* մեջ ներառվել է Զատիթափ համայնքը, որտեղ
հատկապես բարձր են մեկ շնչին ընկնող սուրվենցիաները:
- *Երրորդ կլաստերում* ընդգրկված Զերմուկ համայնքն իր գրեթե
բոլոր ցուցանիշներով տարբերվում է մյուս կլաստերների հա-
մայնքներից: Այն առանձնանում է մեկ շնչին ընկնող արդյունաբե-
րական արտադրանքի, ծառայությունների, մանրածախ առևտրա-
շրջանառության մեծ ծավալներով, իսկ դիտարկված բոլոր ֆի-
նանսական ցուցանիշների գծով (բացառությամբ սուրվենցիանե-
րի) այն բացարձակ առաջատար է:

Կլաստերային և գործոնային վերլուծությունների արդյունքում ստեղծ-
ված երեք կլաստերների ձևավորման հիմնական նպատակն էր նույն կլաս-
տերի մաս կազմող համայնքների սոցիալ-տնտեսական ներուժի բացահայ-
տումը և դիտարկված օրինաչափությունների հիման վրա միևնույն կլաստե-
րին պատկանող համայնքների միջև միջհամայնքային համագործակցու-
թյան զարգացման հնարավորությունների և ուղղությունների մատնանշումը:
Այսպես՝

- Վայոց ձորի համայնքների միջև միջհամայնքային համագործակցության ներդրման համատեքստում, որպես օրինակ, դիտարկվել է աղբահանության ոլորտը և իրականացվել է տնտեսական արդյունավետության հաշվարկ: Միջհամայնքային համագործակցության տնտեսական արդյունավետության գնահատման նպատակով առաջարկվել է ձևավորել 2 խումբ համայնքներ, որոնց ընտրությունը հիմնավորված է կլաստերային վերլուծության, ինչպես նաև կատարված հարցումների արդյունքներով: Այդ համայնքներն են՝ (1) Եղեգնաձոր-Մալիշկա-Եղեգիս և (2) Վայք-Զատիթափ: Առաջարկվող միջհամայնքային համագործակցությունների բարեհաջող ձևավորման դեպքում մարզում այլևս աղբահանության խնդիր չի լինի, քանի որ Ջերմուկ, Գլաձոր և Արենի համայնքներն ինքնուրույն կազմակերպում են իրենց համայնքների աղբահանությունը, իսկ մյուս համայնքները նշված տարբերակով կարող են համագործակցել՝ լուծելով աղբահանության խնդիրները և ունենալով որոշակի տնտեսում:
- *Հետազոտության շրջանակում իրականացվել է Վայոց ձորի համայնքների սուրվենցիոն հատկացումների արդյունավետության հաշվարկը համաթվային մեթոդով:*
Համաթվային վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ Վայոց ձորի համայնքներում 2018-2019 թթ. կատարված սուրվենցիոն հատկացումները 1 շնչի հաշվով նվազել են 15.6%-ով, այդ թվում՝
 - ա)** 1 շնչին ընկնող ծախսերի մեծացման հաշվին ավելացել են 10.2%-ով,
 - բ)** ծախսերի մեջ սուրվենցիոն հատկացումների մասնաբաժնի (սուրվենցիոն հատկացումների արդյունավետության) կրճատման հաշվին նվազել են 23.4%-ով:

Այստեղից էլ բխում է Վայոց ձորում միջհամայնքային համագործակցության ձևավորման անհրաժեշտությունը, ինչը կհանգեցնի ծախսերի կրճատմանը և սուրվենցիոն հատկացումների արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքում մշակվել է Վայոց ձորի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր՝ համայնքային և ոլորտային կլաստերների ձևավորմամբ:

Վայոց ձորի համայնքների զարգացման անհամաչափության և միջհամայնքային համագործակցության, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվում է մարզային և համայնքային ջանքերն ուղղել տարածաշրջանի զարգացմանը և ստեղծել.

- գյուղատնտեսական կլաստեր,
- գրոսաշրջային-հանգստի տնտեսական կլաստերներ,
- սոցիալական կլաստեր:

Առաջին երկու ուղղություններն առավել հեռանկարային են մրցակցային առավելությունների իրացման, տարածաշրջանի և համայնքների զարգացման հնարավոր ուղղություններին աջակցելու տեսանկյունից, քանի որ մարզի գյուղատնտեսական-ռեկրեացիոն և զբոսաշրջության ներուժը բարձր է գնահատվում:

Առաջարկվում է Արենի, Եղեգիս Գլաձոր, Մալիշկա, Վայք և Եղեգնաձոր համայնքների ներգրավմամբ ձևավորել գյուղատնտեսական կլաստեր: Կլաստերի մեջ մտնող համայնքները հիմնականում ունեն գյուղատնտեսական ուղղվածություն, իսկ Արենին, Եղեգիսը և Գլաձորը մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալով առաջատար են:

Հաշվի առնելով Վայոց ձորի մարզի ռեսուրսային և ռեկրեացիոն ներուժը՝ առաջարկվում է ձևավորել Վայոց ձորի զբոսաշրջային և հանգստի կլաստերի աջակցության երկու գոտիներ.

- Ջերմուկը՝ առողջարանային և էկոլոգիական զբոսաշրջության մասնագիտացմամբ,
- Արենի, Եղեգիս և Գլաձոր խոշորացված համայնքները՝ մշակութային, պատմական, էքստրեմալ, արշավային, գաստրո- և գյուղատնտեսական (գինու) զբոսաշրջության մասնագիտացմամբ:

ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի շուրջ սոցիալական կլաստերի ձևավորումը բխում է կլաստերի բոլոր կողմերի՝ բիզնեսի, պետական կառույցների և համալսարանի շահերից: Բարձրագույն ուսումնական հաստատությանը հնարավորություն է տրվում առավելագույնս օգտագործելու կրթական և գիտատեխնիկական ներուժը՝ հիմնարար հետազոտությունների և կրթական ծառայությունների մատուցման ոլորտում: Ավելին, համալսարանի համար կարևոր կողմ է տնտեսության իրական հատվածի ձեռնարկությունների հետ կապերի առկայությունը: Կլաստեր մուտք գործելիս համալսարանի գլխավոր խնդիրը դառնում է մարզի համայնքներում մարդկային ներուժի պահպանությունը, մարդկային կապիտալի զարգացումն ու լիարժեք օգտագործումը: Ինչ վերաբերում է կլաստերում ներգրավված ձեռնարկություններին, ապա դրանք կկարողանան որոշակի առավելություններ ձեռք բերել կլաստերի ներսում բուհի հետ փոխգործակցությունից՝ ստանալով անհրաժեշտ խորհրդատվական ծառայություններ, ապահովելով մասնագետների հետագա ուսուցում և վերապատրաստում և իրենց աշխատակիցներին տրամադրելով սոցիալական ծառայությունների ավելի ամբողջական տեսականի:

Մարզում կլաստերների զարգացման համար անհրաժեշտ է որոշել հանրապետական, մարզային, համայնքային իշխանությունների և գործարար դաշտի մասնակցության ձևերը: Որպես նման համագործակցության ձև կարելի է դիտարկել.

- տրանսպորտի, կապի և այլ ենթակառուցվածքների բարելավումը, այդ թվում՝ համատեղ կամ փոխլրացնող սուբվենցիոն ծրագրերի միջոցով,
- կլաստերների հետ կապված տեխնոլոգիաների զարգացման վերաբերյալ տեղական ուսումնական հաստատություններում, մասնավորապես՝ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում, հետազոտական և ուսումնական աշխատանքների կազմակերպումը,
- կլաստերների անդամների գործունեությունը համակարգող հատուկ մարզային մարմնի կամ ստորաբաժանման ձևավորումը,
- կլաստերների անդամների ներդրումային ռեսուրսների համալսմբումը, ներդրումային նախագծերի տվյալների և հավանական ներդրողների տվյալների շտեմարանի ձևավորումը, ինչպես նաև ներդրումային համագործակցության սխեմայի մշակումը,
- տարածաշրջանային շուկայավարման համակարգի ստեղծումը՝ մարզի և կլաստերների զբոսաշրջային և գյուղատնտեսական արտադրանքն ազգային ու համաշխարհային շուկաներում առաջնության համար:

Հետազոտական ծրագրի շրջանակում մշակվել են միջհամայնքային համագործակցության զարգացման հայեցակարգային մոտեցումներ և, որպես դրա ձևավորման սկզբունքային դրույթներ, սահմանվել են.

1. խոշորացված համայնքները, որոնք իրենց մարդկային, ֆինանսական և տնտեսական ռեսուրսներով ունակ են և իրականացնում են օրենքով իրենց վերապահված լիազորությունները, կարող են չընդգրկվել միջհամայնքային համագործակցության տարբեր ձևերում:
2. Միջհամայնքային համագործակցության ձևի ընտրությունը կախված է համայնքի բնակչության թվաքանակից, ֆինանսական և տնտեսական ներուժից, դրանք պահպանում են ընտրովի մարմինները և ունեն բյուջե:
3. Միջհամայնքային համագործակցությունը կարող է ձևավորվել ինչպես համայնքների կամավոր նախաձեռնությամբ, այնպես էլ համակցված եղանակով (կամավոր և պարտադիր):
4. Միջհամայնքային համագործակցություն կարող է իրականացվել մարզի տարածքի տարբեր հատվածներում գտնվող համայնքների միջև, համագործակցության արդյունքում տնտեսության որոշակի ոլորտ, տարածաշրջանի միջինացված ցուցանիշների համեմատ, կարող է արագացված որակական և քանակական զարգացում արձանագրել՝ աստիճանաբար նոր տեմպ հաղորդելով համայնքի տնտեսության թույլ զարգացած ոլորտներին:

5. Միջհամայնքային համագործակցության լիազորությունները, այդ թվում՝ պետության պատվիրակած լիազորությունները, կարող են հստակեցվել օրենսդրության համաձայն:
6. Միջհամայնքային համագործակցության ֆինանսական միջոցները և ծախսային ուղղությունները, օգտագործվող սեփականությունը սահմանվում են կնքված *պայմանագրով*:
7. Միջհամայնքային համագործակցության ֆինանսական միջոցների նկատմամբ իրականացվում են համայնքի բյուջեին ներկայացվող համանման պահանջներին ու կանոններին համապատասխան մոտեցումներ:
8. Միջհամայնքային համագործակցության ֆինանսական միջոցները ձևավորվում են անդամ համայնքների կողմից համագործակցությամբ իրականացվող ծառայությունների համար համայնքային բյուջեներից բնակչության մեկ շնչի հաշվով կատարվող ծախսային գործակցի, ծառայությունից օգտվող շահառուների թվաքանակի և սուբվենցիոն հատկացումների համաթվի հաշվարկով:
9. Համագործակցության շրջանակներում մատուցվող ծառայությունները հնարավորություն կտան ապահովելու ծախսերի արդյունավետություն՝ համապատասխան ստորաբաժանումները, դրանց կողմից օգտագործվող գույքը, տեխնիկական միջոցները, մասնագիտական ներուժը և համայնքների այլ ռեսուրսներ օգտագործել նպատակային և արդյունավետ կերպով, կազմակերպել այնպիսի ծառայություններ, որոնք նախկինում չեն իրականացվել: Այսպիսով, ավելի նպատակային կդառնա համայնքի հիմնական գործառնությունների իրականացումը:
10. Կարևորվում է համագործակցության ուղղության հստակ կանխորոշումը՝ ծառայությունների ոլորտի առաջնային ու նկատելի արդյունք ապահովող կետերի ընտրությունը: Ընդ որում, ընտրության և հստակեցման ընթացքում պետք է նախապատվություն տալ այնպիսի առաջնային առավելություններ և առավելագույն արդյունավետություն ապահովող ոլորտների (տրանսպորտային-լոգիստիկ ենթակառուցվածքներ, էժան հումքի առկայություն, անհրաժեշտ աշխատուժի, այդ թվում նաև՝ մասնագետների առկայություն, բավարար պահանջարկ ներքին շուկայում և այլն), որոնք նվազագույնի կհասցնեն համագործակցության տեխնիկական կայացման ժամանակահատվածը:
11. Համագործակցության ձևավորումը պայմանավորված է տվյալ ոլորտի զարգացման հնարավորությամբ և համայնքի տնտեսության վրա դրա ազդեցությամբ: Մասնավորապես, մեկ ոլորտի զարգացումը շղթայականորեն ապահովում է փոխկապակցված ու հարակից ոլորտների աշխուժացում և ազդեցություն տնտեսության զարգացման վրա:

12. Համայնքներում համագործակցային մակարդակի բարձրացումը ենթադրում է համայնքի և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում: Այդ պարագայում համագործակցության օրինակները լրացուցիչ ազդակներ են փոխանցում այլ համայնքներին՝ տնտեսական արդյունավետության հնարավոր ընդլայնման նույնպիսի ուղի ընտրելու համար:

Հայեցակարգային մուրեցումների համաձայն՝ որպես միջհամայնքային համագործակցությունից ակնկալվող արդյունքներ դիտարկվել են.

1. միջհամայնքային համագործակցության տվյալ ոլորտի զարգացումը շղթայականորեն կապահովի փոխկապակցված և հարակից ոլորտներում ծառայությունների արդյունավետ մատուցում, կազմի հարակից տարածքների, կլաստերների և այլ համայնքների տնտեսության վրա,
2. միջհամայնքային համագործակցության արդյունքում կբարելավվեն տեղական ենթակառուցվածքները,
3. կարճաժամկետային կյանքի որակի և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում՝ նաև ի հաշիվ համայնքային տնտեսված միջոցների և մատուցվող ծառայությունների որակի բարձրացման,
4. կլուծվեն գործառնական և արտադրական ծախսերի նվազեցման խնդիրները՝ ի հաշիվ համայնքային սուբյեկտների ինտեգրման և ենթակառուցվածքների արդյունավետ օգտագործման,
5. միջհամայնքային համագործակցության ձևավորումը կնպաստի համայնքների նոր մրցակցային առավելությունների և կլաստերների ձևավորմանը,
6. վերահսկողական գործընթացներ կսկսվեն դոտացիաների և սուբվենցիոն միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման, համայնքի բյուջեի սեփական միջոցների ընդլայնմանն ուղղված քաղաքականության հիմնավորման և բյուջետային միջոցների օպտիմալ ծախսային կառուցվածքի ապահովման ուղղությամբ՝ հենվելով նաև այդ ցուցանիշների տարեկան համաթվերի հաշվարկային բնութագրերի վրա:

Հայեցակարգային մուրեցումների համաձայն՝ որպես միջհամայնքային համագործակցության ձևավորման և իրականացման հնարավոր ռիսկեր սահմանվել են.

1. միջհամայնքային համագործակցության վերաբերյալ մեթոդական ուղեցույցների, կանոնակարգերի, հստակեցված ընթացակարգերի բացակայությունը,
2. միջհամայնքային համագործակցության վերաբերյալ տեղեկատվության և գիտելիքի, համայնքների նախաձեռնողականության պակասը,

3. միջհամայնքային համագործակցության ոչ արդյունավետ մոդելի ընտրությունը,
4. միջհամայնքային համագործակցության թիրախային ուղղվածության սխալ ընտրությունը,
5. միջհամայնքային համագործակցության ուղղությամբ տրամադրվող ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործումը:

1. Աշխատանքի շուկան Հայաստանում 2017-2018 թթ., վիճակագրական ժողովածու, Եր., 2019:
2. Ատլաս, Հայաստանի Հանրապետությունը մարզերով և ք. Երևանով, 2006-2019 թթ., ՀՎԿ:
3. Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ:
4. Հայաստանը թվերով 2019, ՀՎԿ, վիճակագրական տեղեկագիր:
5. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2019, ՀՎԿ, Եր., 2019:
6. ՀՀ մարզերը և ք. Երևանը թվերով 2014-2018 թթ., ՀՎԿ, վիճակագրական ժողովածու, Եր., 2019:
7. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՎԿ, տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2019:
8. ՀՀ Վայոց ձորի մարզը թվերով 2006-2019, վիճակագրական ժողովածու, ՀՎԿ:
9. ՀՀ Վայոց ձորի մարզի 2017-2025 թթ. տարածքային զարգացման ռազմավարություն, Եղեգնաձոր, 2017:
10. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը:
11. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006-2019 թթ., ՀՎԿ:
12. «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենք:
13. Մովսիսյան Վ., Թովմասյան Ս., Ղազարյան Է., Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացում. համայնքների խոշորացում և միջհամայնքային համագործակցություն, ՀՀ Սյունիքի մարզի օրինակով, Եր., 2011, 344 էջ:
14. Սոցիալ-տնտեսական ցուցանիշների գնահատումը Հայաստանում SPSS փաթեթի կիրառմամբ: Հետազոտական աշխատանք, ՀՊՏՀ, Եր., «Տնտեսագետ», 2016, 101 էջ:
15. «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք:
16. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք:
17. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2018), Եր., «Աստղիկ», 2019, Գիրք 11/ Խմբ. Վահրամ Շահբաղյանի, 144 էջ:
18. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքը:
19. Барабаш Е. С., Зарубежный опыт организации межмуниципального взаимодействия, Известия ИГЭА. 2012. N 3 (83).
20. Булгакова К. Р., К вопросу о субъектах, предоставляющих муниципальные услуги во Французской Республике и Российской Федерации //Административное и муниципальное право. 2016. N 7.
21. Дронов С. В., Многомерный статистический анализ, Учебное пособие. Барнаул: Изд-во Алт. гос. ун-та, 2003. 213 с.
22. Кобаса М. В., Ассоциации местных самоуправлений (издание 2-е, исправленное и дополненное). Просветительское общественное объединение «Фонд им. Льва Сапеги», Минск, 2018, 120 с.

23. Курочкин А.В., Сетевые формы регионального местного управления: опыт современной Финляндии, 2011, http://ars-administrandi.com/article/Kurochkin_2011_1.-pdf.
24. Плахота В. А., Развитие механизмов обеспечения межмуниципального сотрудничества в регионах России : монография, Чебоксары: ИД «Среда», 2019, 180 с.
25. Тамбовцев В.Л., Взаимодействие муниципалитетов как объект экономического анализа, TERRA ECONOMICUS 2017 Том 15 N 3.
26. Berkhin P., A survey of clustering data mining techniques. Grouping Multidimensional Data, 2006. 56 p.
27. Brennan G., Buchanan, J.M.. The Power to Tax: Analytical Foundations of a Fiscal Constitution. London: Cambridge University Press 1980.
28. Charles M. Tiebout: A Pure Theory of Local Expenditures, 1956, Journal of Political Economy 64(5)416–424. <https://doi.org/10.1086/257839>.
29. Davoodi H., H. F. Zou, Fiscal decentralisation and economic growth: A cross-country study, Journal of Urban Economics 43(2), 1998.
30. Ebel R.D., Yilmaz S., On the Measurement and Impact of Fiscal Decentralisation, In Public Finance in Developing and Transitional Countries, ed Martinez-Vazquez and Alm. Cheltenham: Edward Elgar Publishing Limited, 2003.
31. Kozlova O.A., Makarova M.N., Inter-municipal cooperation as an institution of strategic development of territories. Economic and Social Changes: Facts, Trends, Forecast, 2018, Vol. 11, N. 3, DOI: 10.15838/esc.2018.3.57.9.
32. Martinez-Vasquez, J. McNab, R., Fiscal decentralisation, macrostability, and growth. Andrew Young School of Policy Studies, Working Paper 05-06. 2003.
33. Musgrave, R., The theory of public finance. New York: McGraw-Hill. (Musgrave, 1959).
34. Wallace O. E. Fiscal Federalism. New York: Harcourt Brace Jovanovich, 1972, Inc <https://books.google.am/books?isbn=0521771331>.
35. Wallace O. E., Searching for Leviathan: An Empirical Study, American Economic Review 75(4): 1985.
36. Tanzi, Fiscal Federalism and Decentralisation: A Review of Some Efficiency and Macroeconomic Aspects, 1996.
37. www.arlis.am
38. www.armstat.am
39. www.cfoa.am
40. www.mtad.am
41. www.vdzor.mtad.am

1. Նշեք Ձեր կրթական ամենավերջին մակարդակը.

1. Տարրական
2. Միջնակարգ
3. Միջնակարգ մասնագիտական
4. Բարձրագույն
5. Հետբուհական

2. Նշեք համայնքի հետ Ձեր կապը և կարգավիճակը.

1. Համայնքապետարանի աշխատակից (նշել ոլորտը) _____
2. Ավագանու անդամ
3. Համայնքային ենթակայության տակ գործող կազմակերպության աշխատակից (նշել կազմակերպությունը և պաշտոնը) _____
4. Հ/Կ ներկայացուցիչ (նշել կազմակերպությունը և պաշտոնը)

3. Տեղեկացված եք արդյո՞ք միջհամայնքային համագործակցության հետևյալ եղանակների մասին (յուրաքանչյուր տարբերակի դիմաց մեկ պատասխան):

1. Համայնքի ծառայությունների մատուցում	Այո	Ոչ
2. Համայնքի վարչարարություն	Այո	Ոչ
3. Ծառայությունների վաճառք	Այո	Ոչ
4. Ռազմավարական պլանավորում և տարածքային զարգացում	Այո	Ոչ
5. Համայնքի ֆինանսավորում	Այո	Ոչ
6. Այլ (մանրամասներ եղանակը)	Այո	Ոչ

4. Ձեր համայնքն ունի՞ր արդյոք միջհամայնքային համագործակցության փորձ:

1. Այո (շարունակեք)
2. Ոչ (անցում Q7 հարցին)
3. Չգիտեմ/Դժվարանում եմ պատասխանել (անցում Q7 հարցին):

5. Եթե ունեք միջհամայնքային համագործակցության փորձ, ապա ո՞ր ոլորտներում (նշել ոլորտն ու նկարագրել փորձը):

6. Խնդրում ենք 1-3 բալանոց սանդղակով գնահատեք համագործակցությունը և դրա արդյունավետությունը համայնքի վրա, որտեղ 3-ը նշանակում է գերազանց և արդյունավետ, իսկ 1-ը՝ անբավարար և ոչ արդյունավետ:

3. Գերազանց և լիովին արդյունավետ
2. Լավ և մասամբ արդյունավետ
1. Անբավարար և ոչ արդյունավետ

7. Ձեր կարծիքով՝ ինչի՞ց է կախված միջհամայնքային համագործակցության կոնկրետ ձևի ընտրությունը: _____
8. Միջհամայնքային համագործակցության ի՞նչ նոր ձևեր կարելի է ներդնել Վայոց ձորի համայնքներում, որոնք են ներդրման խոչընդոտները: _____
9. 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 5-ը նշանակում է լիովին պատրաստ է, իսկ 1-ը՝ ընդհանրապես պատրաստ չէ, գնահատե՞ք, թե ըստ Ձեզ, ՏԻՄ-երը որքանով են պատրաստ համագործակցության որոշումներ ընդունելու:
5. Լիովին պատրաստ են:
 4. Մասամբ պատրաստ են:
 3. Ոչ պատրաստ են, ոչ էլ պատրաստ չեն:
 2. Ավելի շուտ պատրաստ չեն:
 1. Ընդհանրապես պատրաստ չեն:
10. 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 5-ը նշանակում է լիովին տեղեկացված են, իսկ 1-ը՝ ընդհանրապես տեղեկացված չեն, գնահատե՞ք միջհամայնքային համագործակցության մասին համայնքների տեղեկացվածության աստիճանը:
5. Լիովին տեղեկացված են:
 4. Գրեթե տեղեկացված են:
 3. Ոչ տեղեկացված են, ոչ տեղեկացված չեն:
 2. Մասնակի տեղեկացված են:
 1. Ընդհանրապես տեղեկացված չեն:
11. Դուք Ձեզ այս պահին կհամարեի՞ք արդյոք ֆինանսապես ապահովված համայնք:
1. Լիովին ապահովված ենք:
 2. Գրեթե ապահովված ենք:
 3. Ընդհանրապես ապահովված չենք:
12. Ո՞րն է համայնքի կարևորագույն մոտիվացիան՝ ծագած խնդիրները համատեղ լուծելու համար (ընտրեք առավելագույնը 3 տարրերակ):
- Նյութական (ֆինանսական, գույքային)
 - Բարոյական
 - Վարչական
 - Օրենսդրական
 - Այլ (նշեք մանրամասները)
13. Ինչպե՞ս կգնահատեի՞ք համայնքների խոշորացման ծրագիրը և դրա արդյունավետությունը Ձեր համայնքի համար՝ 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 5-ը՝ նշանակում է ստացված և լիովին արդյունավետ, իսկ 1-ը՝ չստացված և ոչ արդյունավետ:
5. Ստացված և լիովին արդյունավետ
 4. Ավելի շատ ստացված ու արդյունավետ
 3. Մասամբ ստացված և մասամբ արդյունավետ
 2. Ավելի շատ չստացված ու անարդյունավետ
 1. Ընդհանրապես չստացված ու ոչ արդյունավետ

**14. Ի՞նչ արդյունքներ եք ստացել համայնքների խոշորացումից
(հնարավոր է մի քանի պարասխան):**

- Բնակչության կենսամակարդակի աճ
- Ծառայությունների թվի ավելացում
- Վարչական հարցերի ավելի դյուրին լուծում
- Կոռուպցիայի նվազում
- Համայնքի ֆինանսական ռեսուրսների աճ
- Այլ (նշեք՝ կոնկրետ ինչ)

15. Համայնքային խնդիրների լուծման հարցում ի՞նչ դժվարությունների (խոչընդոտների) եք հանդիպում (հնարավոր է մի քանի պարասխան):

- Հանրապետական կառավարման մարմինների կողմից խիստ սահմանափակում
- Ֆինանսական ապահովվածության ցածր մակարդակ
- Համայնքի բնակչության ակտիվության ցածր մակարդակ
- Օրենսդրական անկատարություն
- Այլ (նշեք՝ կոնկրետ ինչ)

16. Որքանո՞վ եք պատրաստ համայնքի խնդիրները լուծելու՝ համայնքի բնակչության ուժերով:

1. Լիովին
2. Մասամբ
3. Պատրաստ չենք:
4. Այլ (նշեք կոնկրետ՝ ինչ)

17. Միջհամայնքային համագործակցության զարգացման համար տեսնո՞ւմ եք արդյոք համայնքային ծառայողների վերապատրաստման անհրաժեշտություն:

1. Այո, խիստ օգտակար կլինի:
2. Այո, հնարավոր է օգտակար լինի:
3. Ավելի շուտ անօգուտ կլինի:
4. Ընդհանրապես անօգուտ է:

18. 1-5 բալանոց սանդղակով, որտեղ 5-ը նշանակում է գերազանց վիճակում է, իսկ 1-ը՝ անբավարար, ինչպե՞ս կգնահատեիք Ձեր համայնքի հետևյալ ենթակառուցվածքների վիճակը:

Ճանապարհներ	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Մանկապարտեզներ	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Լուսավորություն	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Պուրակներ/այգիներ	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Տրանսպորտ	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Ջրամատակարարում	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Ռոտզման ջուր	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Աղբահանություն և սանմաքրում	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Մշակութային կառույցներ	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Այլ (նշեք)	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար
Այլ (նշեք)	5. գերազանց 4. լավ 3. վատ 2. շատ վատ 1. անբավարար

19. Ձեր կարծիքով՝ որո՞նք են Ձեր համայնքի երեք կարևոր հիմնախնդիրները:

1. _____
2. _____
3. _____

20. Հայտ ներկայացրե՛լ եք արդյոք ՀՀ Կառավարության կողմից հայտարարված սուրվենցիոն ծրագրերին մասնակցելու համար:

1. Այո (անցեք հարց 22-ին)
2. Ոչ (շարունակել)
3. Չգիտեմ/Դժվարանում եմ պատասխանել (անցեք հարց 24-ին)

